

عالمی اور مقامی سطح پر ایک نئے دور کی آمد  
ہو رہی ہے۔

عالمی اور مقامی سطح پر ایک نئے دور کی آمد  
ہو رہی ہے۔

## VI-VII

ان اعمی بیفتہم و اذ سہم و اذ سہم و اذ سہم  
ان اعمی بیفتہم و اذ سہم و اذ سہم و اذ سہم

## VIII-IX

ان اعمی بیفتہم و اذ سہم و اذ سہم و اذ سہم  
ان اعمی بیفتہم و اذ سہم و اذ سہم و اذ سہم

## X-XI

ان اعمی بیفتہم و اذ سہم و اذ سہم و اذ سہم  
ان اعمی بیفتہم و اذ سہم و اذ سہم و اذ سہم

## XII-XIII

ان اعمی بیفتہم و اذ سہم و اذ سہم و اذ سہم  
ان اعمی بیفتہم و اذ سہم و اذ سہم و اذ سہم

## XIV-XV

ان اعمی بیفتہم و اذ سہم و اذ سہم و اذ سہم  
ان اعمی بیفتہم و اذ سہم و اذ سہم و اذ سہم

## XVI-XVII

ان اعمی بیفتہم و اذ سہم و اذ سہم و اذ سہم  
ان اعمی بیفتہم و اذ سہم و اذ سہم و اذ سہم

sample  
4 ml  
approx 100 mg  
2 cups of  
2 cups of  
19.12.17



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

МКРТУМЯН ГАЯНЕ

ГРАМОТЫ-ДОГОВОРЫ  
КАК ИСТОЧНИКИ ПО  
АРМЯНО-АРАБСКИМ  
ОТНОШЕНИЯМ

(VII-XII ВВ.)



ИЗДАТЕЛЬСТВО «МУГНИ»  
ЕРЕВАН • 2017

1195982  
948.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀՐՈՎԱՐՏԱԿ-ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ  
ՈՐՊԵՍ ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՂԲՅՈՒՐ  
(VII-XII դդ.)

1103585



«ՄՈՒՂՆԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ • 2017



ՀՏԴ 930  
ԳՄԴ 63.2  
Մ 807

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության  
ինստիտուտի գիտական խրոչիդի որոշմամբ

Համագիր՝ ԼԻՎՈՒԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍԻԱՆ,  
Պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Մկրտումյան Գայանե

Մ 807 Հրովարտակ-պայմանագրերը որպես հայ-արաբական  
հարբերությունների աղբյուր (VII-XI դդ.) / Գայանե Մկրտումյան -  
եր.: Մուղնի, 2017. - 200 էջ:

Մենագրությունը ներկայացնում է հրովարտակ-պայմանագրերը, որպես  
հայ-արաբական միջնադարյան հարբերությունների աղբյուր: Այն հնդի-  
նակի երկար տարիների ուսումնասիրության արդյունքն է և կայացել է  
երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Աստվածաբանի արաբալեզու ֆոն-  
դի ձեռագրական կուրթի համակողմանի ուսումնասիրության վրա:

Գլխըը հասցնագրվում է արաբամուսուլմանական միջնադարի խնդր-  
ներով զբաղվողներին, պատմաբաններին, աղբյուրագետներին, ինչպես  
եսն ԲՈՒՀ-երի ուսանողներին:

ՀՏԴ 930  
ԳՄԴ 63.2

## **ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ**

Նախաբան ..... 7

### **ԳԼՈՒԿ ԱՈՒՋԻՆ**

ՄՈՒՀԱՄԱՄԱԴ ՍԱՐԳՍԻ ԿԵՐԱԲԵՐՄՈՒՆԹԸ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ  
ՆԿԱՏՄԱՍԲ ..... 19

1. Մուսուլման և այլակրոն բնակչության միջև հարաբերությունների ձևավորման նախադրյալները Ղուրանում ..... 21
2. Պայմանագիրը (ադ) վաղիսլամական շրջանում ..... 31
3. Մուսուլմանի կողմից Արաբական թերակղզու և եմենի Նաջրան քաղաքի քրիստոնյա բնակչությանը տրված պայմանագրերը՝ որպես աջակրոնների հետ հարաբերության մոդել ..... 36

### **ԳԼՈՒԿ ԵՐԿՐՈՐԴ**

ԴԱՆՆԱԳՐԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅ-ԱՐԱՐԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐ ..... 55

1. Մուսուլմանի և մուսուլման իշխանավորների՝ երուսաղեմի հայոց համայնքին տված դաշնագրերը ..... 57
2. Հայաստանի և հարակից երկրների (Կիլիկ, Ադվանք) բնակչությանը տրված պայմանագրերը ..... 68
3. «Մեծ Մանչուրը» ..... 81
4. «Փոքր Մանչուրը»։ 703 թ. ապստամբության արտացոլումը հայ պատմագրության մեջ ..... 95
5. Մուսուլմանազ մարզարծի և Ալի իբն Աբու Տալիբ խալիֆայի անուններով պարսառառ դաշնագրերը՝ Աստուծոյարանի ձեռագիր ֆոնդերում ..... 108
6. Մուսուլմանական պայմանագրերը մուսուլման պատմաբանների երկերում ..... 119
7. Գրիգոր Դարանազու ժամանակագրությունը «Ալի Մանչուրի» մասին ..... 123

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
ԱՌԱՋԻՆ ՉՈՐՍ ԱՐԴԱՐՄԴԱՏ ԽԱՆԻՖԱՆԵՐԻ ՕՐՈՔ ԵՎԱՃՎԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՏՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ .....	127
1. Միջազեղը և Սիրիա .....	129
2. Երուսաղեմի գրավումը: Օմար խալիֆայի և քրիստոնյա բնակչության դաշնագիրը .....	139
3. Պայմանագիրը՝ որպես իրավական փաստաթուղթ .....	142
4. Սասանյան Պարսկաստանի՝ քրիստոնյա և զրադաշտական բնակչությանը շնորհած պայմանագրերը .....	146
5. Օմար իբն ալ-խատտաբ խալիֆային վերագրվող պայմանագիրը՝ տրված Ասորիքի քրիստոնյա բնակչությանը .....	153
Եզրակացություններ .....	164
Օգտագործված սկզբնաղբյուրների և զրականության ցանկ .....	178
Հավելված .....	189





**Ա**ռյև աշխատությունը նվիրված է Արարական խալիֆայության կողմից նվաճված երկրների բնակչությանը շնորհած հրովարտակ-պայմանագրերին, որոնցով դարեր շարունակ կարգավորվել են մուսուլման նվաճողների փոխհարաբերությունները այսպիսով բնակչության հետ: Ուշադրության են արժանացել հատկապես այն պայմանագրերը, որոնք, ըստ հայկական միջնադարյան պատմական աղբյուրների, շնորհել են հայ և քրիստոնյա այլ համայնքների՝ իսլամի հիմնադիր Մուհամմադը ու նրա հաջորդները: Այդ պայմանագրերը մեր մատենագրության մեջ հայտնի են որպես «Ալի Մանշուր» (հրովարտակ) ու միտված են եղել պահպանելու և հաստատելու քրիստոնյա համայնքների էթնիկական ու եկեղեցական իրավունքները:

12-րդ դարի պատմագիր Սամուել Անեցին վկայում է, որ «արենսդիր, պատգամաբեր» Մուհամմադը մուրհակ է տվել Հայոց աշխարհին՝ համարձակ դավանելու քրիստոնեությունը այն պայմանով, որ յուրաքանչյուր տուն որպես հարկ վճարի չորս դրամ, որոշակի քանակով հացահատիկ, մեկ ձիատուրակ, ձեռնոց և մազե պարան: Հարկերից ազատվում էին հողերակալները, զինվորականները, իշխանական դասը: Այս դաշնագիրը հայտնի է «Մեծ Մանշուր» անունով՝ տարբերելու համար մյուս՝ «Փոքր Մանշուրից», որը 8-րդ դարում

<sup>1</sup> Սամուել Անեցի, *Հատարմանք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչև ներկայս ժայրաբաղ արարելոյ, յառաջարանով համեմատութեամբ, յանկումներով եւ ծանօթութիւններով Ա. Տէր Մրցմանի, Ա. Էջմիածնի տարան*, «Աղաթըշապատ, 1893, էջ 82, (այսուհետև՝ Սամուել Անեցի):

Մուհամմադ իրն Մրվան զորավարի (693–709) հայերին տված կրոնական բովանդակությամբ պայմանագիրն է: Դաշնագրերի հիմքում ընկած են Մուհամմադի կողմից Արաբական թերակղզու քրիստոնյա և այլակրոն քնակչությանը տրված պայմանագրերը: Հեռագայում հետևորդ խալիֆաները և մուսուլման իշխողները կրկնում էին Մարգարեի «թղթի» ֆենոմենը, օգտագործում իրենց շահերի համար, բայց և ապահովում էին իրենց նրկրում ապրող այլակրոնների հետ քարի հարաբերությունները, որպեսզի պահպանեն պետության ներքին խաղաղությունը, ամրապնդեն տնտեսությունն ու այլակրոններին ինչ-որ չափով ներառեն երկրի ընդհանուր սոցիալ-տնտեսական մթնոլորտում: Չի կարելի չուսումնասիրել այս պայմանագրերը, չժանտօանալ դրանց բովանդակությանն ու էությանը, քանի որ դրանք ժամանակի մեջ վերականգնված և նորովի հարմարեցված օրինակներ են:

Հնարավորինս ներկայացրել և լուսարանել ենք Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի՝ սույն թեմային վերաբերող արաբերեն, պարսկերեն ձեռագրերը և դրանց հայերեն թարգմանությունները՝ որպես հայ-արաբական միջնադարյան հարաբերություններն արտացոլող փաստեր: Թեև քավականաչափ ուսումնասիրված են մուսուլման զորահրամանատարների ու նվաճված երկրների քնակչության միջև կնքված պայմանագրերը, այնուամենայնիվ, «Ալի մանշուրները»՝ որպես Մուհամմադի և նրան հաջորդող խալիֆաների կողմից քրիստոնյա քնակչությանը շնորհված դաշնագրեր<sup>2</sup>,

<sup>2</sup> Հընթացս մենք օգտագործել ենք նաև «դաշնագիր» տերմինը, քանի որ միջնադարյան հայ-արաբական հարաբերություններն արտացոլող տնտեսներում այն նկղում է որպես դաշնագիր: Այդպես է գրում պատմաբան Հ. Անասյանը, տե՛ս, Անասեան Յ., Մանր երկեր, հրատարակություն ամերիկահայ միջազգային կոլեջի, Լոս Անջելես, 1987, էջ 627, (այսուհետ՝ Անասյան Հ., Մանր երկեր):

դեռևս համակողմանի ուսումնասիրության նյութ չեն դարձել ու չեն համակարգվել: Պարզապես համառոտ անդրադարձ-ներ են եղել առանձին հոդվածներում, որոնց մեջ մասնանշ-վել են այդ պայմանագրերի ստեղծման շարժառիթները, և հիշատակվել բովանդակությունը: Հատկապես պետք է նշել հայագիտության մեծ նրախտավորներ, միջնադարագետներ Հ. Անասյանի, Հ. Փափագյանի և Ա. Տեր-Ղևոնդյանի անուն-ները, ովքեր քացառիկ վաստակ ունեն այդ պայմանագրերը գիտական շրջանառության մեջ դնելու գործում:

Աղբյուրագիտական հարուստ փաստերով հագեցած այս աշխատանքում առաջին անգամ համալիր կերպով քննության է առնվել «Ալի Մանշուրի» ֆենտիմենը՝ որպես հայ-մուսուլմա-նական հարաբերությունները կարգավորող կարևոր գործոն, և նրա զարգացման ընթացքը:

Աշխատանքը կօգնի ավելի լավ ըմբռնելու, հասկանալու միջնադարյան իսլամական գաղափարախոսության արժե-քային համակարգի նրբությունները, որոնք դրսևորվեցին հպատակ ժողովուրդների նկատմամբ նվաճող արաբների ու-նեցած հարաբերական հանդուրժողականությամբ և հումա-նիզմով, որոնք իրենց արտացոլումը գտան տրված պայմա-նագրերում:

Տասնամյակներ շարունակ իսլամական երկրների հետ կապված խնդիրները չեն իջնում զանգվածային լրատվամի-ջոցների էջերից: Արաբատառ ձեռագրերի նյութի վրա հիմնված աշխատանքը կարող է նշանակալի դեր ունենալ հայ-արաբա-կան հարաբերությունների այս կամ այն շրջանը լուսարանելու գործում: Այժմ, երբ Հայաստանը դարձել է անկախ պետություն, և միջպետական հարաբերություններ են հաստատվել Հայաս-տանի և արաբական երկրների միջև, կենսական անհրաժեշ-տություն է դառնում հայ-արաբական հարաբերությունների

հիմքում դրված այս հրովարտակ-պայմանագրերի արդիականության վերհանումը: Դրանք կօգնեն արժևորելու և նորովի գնահատելու այդ հարաբերությունները:

Մինչև օրս քննարկվում են Մուհամմադ մարգարեի (610–632) և Ալի իբն Աբու Տալիբ խալիֆայի (656–661) անուններով դաշնագրերի պատմական վավերականության և ճշգրիտ պատկանելության խնդիրը, քանի որ գիտական որոշ շրջանակներ հակված են վիճարկելու այդ փաստաթղթերի պատմական արժեքը: Իրականում անհնար է անտեսել այն հանգամանքը, որ այդ դաշնագրերն արտացոլում են պատմական որոշակի դարաշրջաններ և իրենց ժամանակի մասին հավաստի տեղեկություններ հաղորդող հիշարժան աղբյուրներ են: Հետազոտողների կարծիքով՝ ամեն մի փաստաթուղթ, լինի դա քնօրինակ, կրկնօրինակ թե ընդօրինակություն, կարող է ունենալ իր ստեղծման շարժառիթները՝ որպես աղբյուր, և նշանակությունը<sup>3</sup>: Անվիճելի է, որ այդ բազմաթիվ դաշնագրերն ունեցել են իրենց առաջնային՝ նախնական օրինակները, ըստ որի՝ ապահովվել են խալիֆայության տնտեսական, հասարակական, բարոյաէթիկական կայունությունն ու քաղաքական շահերը, ինչպես նաև միտված են եղել կարգավորելու նվաճված բազմաթիվ ժողովուրդների հետ հարաբերություններն ու շփումները: Ըստ ռուս հայտնի աղբյուրագետ Ս. Մ. Կաշտանովի՝ պատմական յուրաքանչյուր փաստաթուղթ պարտավոր ենք ուսումնասիրել նրա հավաստիության աստիճանից անկախ<sup>4</sup>:

Ժամանակագրական առումով աշխատանքի հիմնական նյութն ընդգրկում է 7-րդ դարի 2-րդ կեսից մինչև 12-րդ դարն

<sup>3</sup> Каштанов С. М., О Подлинности и достоверности актовых источников, О подлинности и достоверности исторического источника. Под ред. А. В. Гонтаренко. Издательство Казанского университета, Казань, 1991, с. 28.

<sup>4</sup> Նույն տեղում:

ընկած ժամանակահատվածը, որը ներառում է առաջին չորս արդարադատ խալիֆաների (632-661), ինչպես նաև Օմայան և Աբբասյան խալիֆայությունների շրջանը: Անդրադարձ է կատարվել հետագա դարերին (մինչև 19-րդ դարը), երբ հայ ժողովուրդը, գտնվելով մուսուլման տարբեր նվաճողների տիրապետության տակ, ձգտում էր Մուհամմադ մարգարեի անունը կրող փաստաթղթերով դուրս-ինչ տանելի դարձնել իր վիճակը և նոր արտոնություններ ձեռք բերել մուսուլման իշխողներից:

Մենք համակողմանի քննության ենք ենթարկել մուհամմադյան դաշնագրերի<sup>5</sup> պայմանները՝ գուգահեռներ անցկացնելով նաև Մուհամմադի՝ Արաբական թերակղզու բնակչությանը շնորհած պայմանագրերի և նվաճված այլակրոն բնակչությանը տրված պայմանագրերի կետերի հետ:

Աշխատանքը շարադրված է հայկական և օտար (հիմնականում արաբներեն) սկզբնաղբյուրների համադիր քննության, թեմային առնչվող գրականության, ինչպես նաև պատմական փաստերի քննական վերլուծության սկզբունքի կիրառմամբ:

Աշխատանքի ընդհանուր տեսական հիմքը ռուս և եվրոպական արևելագետների՝ Վ. Վ. Բարտոլդի<sup>6</sup>, Ի. Պ. Պետ-

<sup>5</sup> Այս փաստաթղթերի տակ նկատի են առնվում Մեսրոպ Մաշտոցի սկզբնական մատենադարանի արաբատար Ֆունդում պահվող Մուհամմադ մարգարեի ու Ալի իբն Աբու Տալիբ խալիֆայի անուններով մեզ հասած և 16 -19-րդ դարերում ընդօրինակված բազմաթիվ դաշնագրեր, որոնց նախատիպը Մուհամմադի կողմից Նաջրան քաղաքի քրիստոնյաներին տրված պայմանագրի «քրիստոնեական» տարբերակն է, որի կազմման ժամանակը սահմանվում է 7 -9-րդ դարերի միջակայքում:

<sup>6</sup> Бартольд В. В., Работы по истории ислама и Арабского халифата, Сочинения, т. 6, "Наука", Москва, 1966.

րուչևակու<sup>7</sup>, Գ. Է. Ֆոն Գրյուներաումի<sup>8</sup>, Ա. Մասսեի<sup>9</sup>, Ա. Մեցի<sup>10</sup>, Ա. Կրիմակու<sup>11</sup> կոթողային աշխատություններն են: Օգտագործել ենք նաև մուսուլմանական կարևոր աղբյուրների արարելն րնագրերը, առանձին դեպքերում՝ արաբերեն քնագրերից կատարված հայերեն և օտարալեզու թարգմանությունները: Մուհամմադ մարգարեի վերաբերմունքը հրեաների և քրիստոնյաների նկատմամբ առավել հավաստի համատեքստում դիտարկելու համար օգտագործել ենք անգլահատելի աղբյուրներից մեկը՝ Դուրանը: Օգտվել ենք նաև Ի. Կրաչկովսկու գիտական, Ա. Ամիրխանյանցի՝ Դուրանի քնագրին ամենից ավելի հարազատ և համարժեք թարգմանություններից<sup>12</sup>:

Մուհամմադյան պայմանագրերի հիմքում դրվել են Մուհամմադի կողմից Արաբական թերակղզու հրեա և քրիստոնյա քնակչությանը տրված արտոնությունները, ինչպես նաև պարտավորությունները, որոնք մասնավորապես պահպանվել են 9-րդ դարի հայտնի գրիչ Արդ ալ-Մալիք Իբն Հիչամի (մահ.՝ 834-ին) աշխատության մեջ<sup>13</sup>. վերջինս այն գրել է Մուհամմադի

<sup>7</sup> Петрушевский И. П., Ислам в Иране в VII-XV веках, Курс лекций, "Наука", Ленинград, 1966.

<sup>8</sup> Грюнебаум фон Г. Э., Классический ислам. Очерк истории (600 -1258), "Наука", Москва, 1966.

<sup>9</sup> Массэ А., Ислам, очерк истории, "Наука", Москва, 1982.

<sup>10</sup> Мещ А., Мусульманский Ренессанс, "Наука", Москва 1996.

<sup>11</sup> Крымский А., История арабов, ихъ халифатъ, ихъ дальнейшая судьба. Краткий очеркъ арабской литературы, типография Варвары Гатцукъ, Москва, 1903.

<sup>12</sup> Коран. Перевод и комментарии И. Ю. Крачковского, "Наука", Москва, 1986. Գուրան: Արաբական քնագրին և Գուդմիրսիի Ամիրխանի և այլ ինդիկալատր արարագրություն թարգմանութեանց առաջնորդութեամբ հայրենի վերածննց Յ. Գուրաչքեան, «Իրանիք» հրատարակչություն, Վանուս, 1912:

<sup>13</sup> Das Leben Muhammed's nach Muhammad Ibn Ishak bearbeitet von Abd al-Malik Ibn Hisham aus den Handschriften zu Berlin, Leipzig, Gotha und Leiden B. I, Theil I, Gothingen, 1858. B. I, Theil 2, Gothingen, 1859, (այսուհետ՝ Ibn Hisham),

السيرة النبوية لابن هشام المجلدات، 1، 2، 3، 4، المكتبة العصرية، بيروت، 1424 - 2003

կենսագիր Իրն Իսհակի թողած նյութի հիման վրա: Թեմային առնչվող վերոհիշյալ պայմանագրերին է առդրադարձել նաև 9-րդ դարի մուսուլման պատմագիր ալ-Բալազուրին<sup>14</sup>: Արժեքավոր են նաև 9 –10դդ. մուսուլման պատմագիր ալ-Տարա - րիի<sup>15</sup> և 10-րդ դարի պատմագիր և աշխարհագետ ալ-Մասուդիի<sup>16</sup> աշխատությունները: Քիչ ավելի ուշ շրջանի մուսուլման պատմագիր Իրն ալ-Ասիրն իր բազմաառող աշխատության մեջ ամբողջացրել և ի մի է բերել արաբական նվաճումների վերաբերյալ կուտակված փաստական բոլոր նյութերը՝ հաստատելով նախորդների բազմաթիվ տեղեկությունները և անդրադառնալով նաև պայմանագրերին<sup>17</sup>:

Հիշարժան է նաև Մուհամմադ Համիդալլահի խմբագրած պարսկերեն աշխատությունը<sup>18</sup>, որի մեջ առկա են Մուհամմադ մարզարեի և Ալի իրն Աբու Տալիբ խալիֆայի անուններով քրիստոնյա համայնքներին (հայ, դալտի, ասորի) տրված պայմանագրերը: Այստեղ համակարգված կերպով ներկայացված են Մուհամմադ մարզարեի՝ Արաբական թերակղզու հրեա և քրիստոնյա բնակչությանը շնորհած դաշնագրերը, մուսուլման զորահրամանատարների կողմից տրված պայմանագրերը: Դրանք վերցված են 9 –12-րդ դարերի մուսուլման պատմիչներ

<sup>14</sup> الإمام أبو الحسن البلاذري، فتوح البلدان، مكتبة الهلال، بيروت، 1403-1983م (wjunahbun) البلاذري، فتوح البلدان

<sup>15</sup> ابن جعفر محمد جرير الطبري (تاريخ الرسول و الملوك لابي جعفر محمد بن جرير الطبري) الجزء الثاني، القاهرة، 1990م، دار المعارف، الجزء الثالث، القاهرة، 1962، الجزء الرابع، القاهرة، م 1977 (تاريخ الرسول و الملوك wjunahbun)

<sup>16</sup> أبو الحسن علي بن الحسن بن علي المسعودي، كتاب التنبيه والأثراف، Bibliotheca geographorum Arabicorum Tome VIII Brill, 1967.

<sup>17</sup> التكملة في التاريخ لعماد الدين عماد الخورزمي ابن حسن علي بن محمد ابن عبد الواحد البغدادي، معروف بان الاسم الجزري للقلب، بعض التكملة، الطبعة الثانية، الجزء الثاني، القاهرة، 1349-1930، الجزء الثالث، القاهرة، 1937-1938 (wjunahbun) ابن جعفر محمد بن جرير الطبري، تاريخ الملوك و الملوك في التاريخ

<sup>18</sup> نامه ها و بیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، تحقیق گردآورده دکتور سید محمد حسینی، تهران و سروش 1999م-1377، (نامه ها و بیمانهای سیاسی wjunahbun)

ալ-Վակիդիի, Արու Ռաբայդայի, ալ-Յակուբիի, Իբն ալ-Ասիրի և այլոց երկերից:

Որպես իր արժեքը չկորցրած պատմական սկզբնաղբյուր՝ կարևորել ենք նաև Ն. Մեդնիկովի աշխատությունը՝ միջնադարյան մուսուլման պատմագիրներից կատարած թարգմանություններով<sup>19</sup>:

Թեմային աղերսվող սկզբնաղբյուրներ են նաև հայ վաստակաշատ գիտնականներ Ա. Տեր-Ղևոնդյանի<sup>20</sup>, Բ. Խալաթյանցի<sup>21</sup>, Հ. Նալբանդյանի<sup>22</sup> մուսուլմանական աղբյուրներից քաղած նյութերի թարգմանությունները:

Մուսուլմանական պայմանագրերի ուսումնասիրության համար կարևոր են նաև հայկական միջնադարյան աղբյուրները: Հայաստանի վաղմիջնադարյան պատմությունը և հայ-արաբական փոխհարաբերություններն ուսումնասիրելու տեսա-

<sup>19</sup> Медников Н., Палестина отъ завоевания ея арабами до крестовыхъ походовъ по арабскимъ источникамъ, "Православный Палестинский сборникъ" 50-й вып, т. 17, вып. 2(4) Издание Императорского Православного Палестинского общества, СПб, 1897, вып. 2(2), СПб, 1897 (այսուհետ՝ Медников Н. Палестина отъ завоевания ея арабами до крестовыхъ походовъ по арабскимъ источникамъ, Православный Палестинский сборник...)

<sup>20</sup> Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներածությունը և ընթացիկ թարգմանությունը՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2005, տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, Արարական աղբյուրներ, 9 (այսուհետ՝ Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր), Իբն ալ-Ասիր, Լիակատար պատմություն (Ալ-Քամիլ, Ֆի-լ-Տարիխ), թարգմանությունը ընթացից, առաջարան և ծանոթագրություններ՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, Արարական աղբյուրներ, Բ, Հաջկանան ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1981 (այսուհետ՝ Իբն ալ-Ասիր):

<sup>21</sup> Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, հուսացե՛ք եւ թարգմանե՛ք Բ. Խալաթիանց, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1919 (այսուհետ՝ Արաբացի մատենագրերը Հայաստանի մասին):

<sup>22</sup> Արարական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, կազմեց Հ. Նալբանդյան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1965 (այսուհետ՝ Արարական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին):



կետից հատկապես անգնահատելի է 7-րդ դարի պատմիչ Սեբեոսի պատմությունը<sup>23</sup>: Մեծ արժեք ունեն նաև 8-րդ դարի պատմագիր Ղևոնդի<sup>24</sup>, 9-11-րդ դարերի պատմագիրներ Հովհաննես Դրասխանակերտցու<sup>25</sup>, Ստեփանոս Ասողիկ Տարոնեցու<sup>26</sup> աշխատությունները:

«Մեծ և Փոքր մանչուրների» մասին հիշատակում են 12-13-րդ դարերի պատմագիրներ Սամուել Անեցին<sup>27</sup>, Կիրակոս Գանձակեցին<sup>28</sup>, Մխիթար Անեցին<sup>29</sup>, 10-11-րդ դարերին վերագրվող Անանուն զրուցագրի պատմությունը<sup>30</sup>: Վերոհիշյալ պայմանագրերի դատակարգմանն է անդրադարձել 14-15-րդ դարերի մատենագիր Գրիգոր Տաթևացին<sup>31</sup>: Թեմայի ուսում-

<sup>23</sup> Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրութեամբ՝ Գ. Վ. Աբգաբյանի, ՀԱՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1979 (այսուհետ՝ Սեբեոս):

<sup>24</sup> Պատմութիւն Ղևոնդայ Մեծի վարդապետի հայոց: Յատարան՝ Կ. Եղևանց, ի տպարանի Ի. Ն. Սկորոխոզովի, Սանկտ Պետերբուրգ, 1887: Ղևոնդ: Պատմություն Թարգմանությունը, ներածությունը և ծանոթաչափությունները՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, «Մովսեսիան գրող» հրատարակչություն, Երևան, 1982 (այսուհետ՝ Ղևոնդ):

<sup>25</sup> Հովհաննես կարողիկոսի Դրասխանակերտեցու Պատմութիւն Հայոց, Էջեքոստատպարան օր. Ն. Ադանեսանցի, Թիֆլիս, 1912 (այսուհետ՝ Հովհաննես Դրասխանակերտցի):

<sup>26</sup> Ստեփանոսի Տարոնեցու Ասողիկան Պատմութիւն տիեզերական, ի տպարանի Ի. Ն. Սկորոխոզովի, Սանկտ Պետերբուրգ, 1885 (այսուհետ՝ Ստեփանոս Ասողիկ):

<sup>27</sup> Սամուել Անեցի:

<sup>28</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց: Աշխատասիրութեամբ՝ Կ. Մելիք Օհանջանյանի, ՀԱՄԻ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1961 (այսուհետ՝ Կիրակոս Գանձակեցի):

<sup>29</sup> Մխիթար Անեցի, Մատենա աշխարհավեպ իտելիսարանաց, Հայկական ՄԱՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1983 (այսուհետ՝ Մխիթար Անեցի):

<sup>30</sup> Պատմութիւն Անանուն զրուցագրի Կարծեցող Շապուհ Բագրատունի, քարգմանությունը զբարարից, ատարանն ու ծանոթաչափությունները՝ Մ. Հ. Դարբիջյան-Մելիքյանի, ՀԱՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1971 (այսուհետ՝ Անանուն զրուցագիր):

<sup>31</sup> Գրիգոր Տաթևացի, Հողդեմ տաճկաց, «ԼՍՎ - Պրինտ» հրատարակչություն, Երևան, 2009 (այսուհետ՝ Գրիգոր Տաթևացի):

նասիրության համար մեծ կարևորություն ունեն նաև Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի որոշ ձեռագրեր, Կաթողիկոսական դիվանում պահվող արաբերեն, պարսկերեն և թուրքերեն վավերագրեր<sup>22</sup>: Հայտնի հայ արևելագետ, պատմաբան Հ. Փափազյանը պարսկերենից թարգմանել է Մուհամմադ մարգարեի անունով կազմված պայմանագիրը<sup>23</sup>: Այն վերաբերում է նաև հայ հոգևորականության հարկային իմունիտետի խնդիրներին:

Աշխատանքի մեջ որպես պատմական սկզբնաղբյուր՝ օգտագործել ենք նաև Նաջրանի քնակչությանը Մուհամմադ մարգարեի շարիադ պայմանագրի «քրիստոնեական» տարբերակը<sup>24</sup>:

Մուհամմադյան հրովարտականքի պայմանները, մոսուլման իշխողների ու նվաճված քրիստոնյա քնակչության միջև փոխհարաբերությունների հարցերը քննարկելիս օգտագործված մասնագիտական և տեսական գրականությունից հիշատակել

<sup>22</sup> Կաթողիկոսական դիվան՝ թղթապանակ ևս, վավերագիր 1, Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրեր N 2622, էջ 115 ա-136բ, N 6984, էջ 303բ-305բ, արաբատոմ ձեռագրեր N 272, N 357, N 358, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 3, վավ. 130:

<sup>23</sup> Փափազյան Հ., Կաթողիկոսական 21, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. Հրովարտականք, պրակ Ա, (ԺԵ-ԺԹ դդ.) ՀԱՍՈՒՆ ԳԱ կրթությանը, Երևան, 1956, էջ 69-72:

<sup>24</sup> Колесников А., Две версии договора Мухаммада с христианами Наджрана, Палестинский сборник, том. 28(91), "Наука", Ленинград 1986, с. 24-33, Histoire Nestorienne (Chronique de Seert), seconde partie (II), publiee et traduite par Addai Sher, Paris, 1918, p. 602-617.

ենք նաև Վ. Ազարխայի<sup>35</sup>, Օ. Բուշակովի<sup>36</sup>, Ն. Հովհաննիսյանի<sup>37</sup>, Ա. Կոլեսնիկովի<sup>38</sup> և այլ աշխատություններ: Մյուս հեղինակների անունները տրված են գրականության ցանկում:

Մոտեմանադյան պայմանագրերի կազմման հիմքում երուսաղեմի հայկական համայնքին Մոտեմանադի շտրեած և հետագայում Ալի իբն Աբու Տալիբի, Օմար իբն ալ-Խատտաբ խալիֆաների ու մուսուլման իշխողների հաստատած պայմանագրերն են, որոնց մասին հիշատակում են երուսաղեմի պատմության մեծ գիտական Տ. Սավալանյանը և Ա. Հովհաննիսյանը, որոնք պատմական նյութերը շարադրելիս օգտվել են քրիստոնեական և մուսուլմանական աղբյուրներից:

Նվաճված երկրների, քաղաքների անունների լուսարանման համար օգտագործել ենք 13-րդ դարի հայտնի աշխարհագետ Յակոբ ալ-Համավիի աշխարհագրական բառարանը: Իսկ այդ պայմանագրերում առկա չափերի, կշիռների համարժեքը տալիս օգտվել ենք Վ. Խինցի աշխատությունից և Իսլամի հանրագիտարաններից:

Մինչ հետազոտության հիմնական խնդիրների լուսարանումը, մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում հար-

<sup>35</sup> Azarya V., *Armenian Quarter of Jerusalem. Urban life behind monastery walls*, Berkeley, Los Angeles, London, Univ. of California, 1984.

<sup>36</sup> Босняков О. Г., *История Халифата. Ислам в Арабии (570-633)*, т. 1, "Восточная литература", Москва, РАН, 1989. Նույնի, *История Халифата. Эпоха великих завоеваний (633-656)*, т. 2, "Восточная литература", Москва, РАН, 2000 (այսուհետ՝ Босняков О. История Халифата). Նույնի, *Средневековый город Ближнего Востока, VII-сердние VIII-в, социально-экономические отношения*, "Наука", Москва, 1984.

<sup>37</sup> Հովհաննիսյան Ն., *Արարական երկրների պատմություն*, հատոր 1, Արարները 7-րդ դարից մինչև 1516թ., «Ջանգալ-97» հրատարակչություն, Երևան, 2003: Նույնի, *Մերձավոր Արևելքի և Սիրիայի հայ համայնքները և նրանց հետաձգվածները*, «Լիմուշ» հրատարակչություն, Երևան, 2015:

<sup>38</sup> Колесников А., *Завоевание Ирака арабами (Иран при "Проведенных Халифах")*, "Наука", Москва, 1982.

գարժան արևելագետներ Ա. Կոզմոյանին, Հ. Ժամկոյանին,  
Վ. Տեր-Ղևոնդյանին և Ե. Մինասյանին մասնագիտական  
հարցերում մեզ ուղղորդելու և արժեքավոր խորհուրդների  
համար:

35  
وَأَعْوَانِي وَأَهْلِي  
وَسُلْطَةُ عَلَيْهِمْ  
مَكَامِكُمْ وَلَا تَنْصُرُوا  
بِهِمُ الْكُفْرَ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ  
ԿԱՏՈՒՄ

**ՄՈՒՐԱՄԱՐԿ  
ՄԱՐԳԱՐԵԻ  
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԳՔԸ  
ՔՐԻՍՏՈՆԳՅԱՆԵՐԻ  
ԵԿԵՍՄԱՐՔ**

استغفيرة ولا راهب عن رهبانيتها ولا نفراني  
عن نصرانيتها ولا راهب عن صومعته ولا ساح  
45 عن سياحته ولا يهدى من بيوت من بيوت  
كنائسهم ولا يدخل شي من بيوتهم في بناء  
المساجد ولا منازل المسلمين في جعل ذلك  
فتن يفتن عهد الله وخالف رسول الله وجان ذمته الله وان  
الرهبان ولا الاساقفة وتبعد منهم وتالذ بالباس الصوف  
في المنازل والمواضع المتعاقبة عن الامصار شيئا من الجارية ولا الخنزير  
وان يلبس على غيرهم من النصارى ممن هو ليس بمتعبد ولا راهب





I

**ՄՈՒՏՈՒՄԱՆ ԵՎ ԱՅԼԱԿՐՈՑ ԲՃԱԿՉՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԵՎ ՃԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ  
ՃԱՆԱԳՐՅԱԼՆԵՐԸ ԳՈՒՐԱՆՈՒՄ**

**Մ**ուսամադ մարգարեն քրիստոնեության մասին իր տեղեկությունները քաղել է Արաբական թերակղզու քրիստոնյա և հրեա վանականների հետ ունեցած կրոնական զրույցներից, որոնք, մինչ քրիստոնեության ներթափանցումն Արաբական թերակղզի արդեն իսկ տարածված էին արաբական աշխարհում: Դրանք էին Աբրահամի, Հագարի, Հովսեփի, Իսմայիլի և աստվածաշնչյան այլ կերպարների մասին զրույցները:

Մուսուլմանական միջնադարյան մատենագրության մեջ հիշատակվում է քրիստոնյա հոգևորականների հետ Մուսամադի տարաբնույթ շփումների մասին<sup>39</sup>: Դրանց վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում նաև հայ պատմագիրները, ըստ որոնց՝ Մուսամադը եկել է սուրբ Սիևա լեռը և աշակերտել Սարգիս Բահիրային, որը ծանոթացրել է նրան Հին և Նոր Կտակարաններին<sup>40</sup>:

Մեքքայի վերնախավի հետ տարածախոսությունների պատճառով Մուսամադն իր կողմնակիցների հետ հեռացավ Յասրիբ՝ Մադինա: Այստեղ արդեն կար հրեական մեծ համայնք, որը համերաշխ էր հեթանոս արաբների ու քրիստոնյաների հետ: Մադինայի բնակիչները ոչ միայն ընդունեցին Մուսամադի ուսմունքը, այլև վստահեցին նրան իրենց քաղաքի

<sup>39</sup> 1125/1. الطبري، تاريخ الرسول والعلوم، الجزء الثاني، ص.

<sup>40</sup> Մխիթար Անեցի, էջ 57-63:

հոգևոր ղեկավարությունը<sup>41</sup>: Պատմությունը պահպանել է Մադինայի համայնքի առաջին կանոնադրությունը: Այն կազմվել է մոտ 622–623 թվականներին, երբ տեղի ունեցավ Մուհամմադի հիջրան՝ արտագաղթը: Մուհամմադն այս կանոնադրության ստեղծման ժամանակաշրջանում արաբներին ու հրեաներին համարում էր մեկ միասնական համայնք (ումմա), քանի որ համոզված էր, որ ինքը քարոզում է հենց այն ուսմունքը, որ ժամանակին քարոզել է Մովսեսը: Այս կանոնադրությունը դարձել է մի «համաձայնագիր», կնքվել Մուհամմադի և Մադինայի քնակչության միջև՝ նախադրյալներ ստեղծելով նոր ձևավորվող մուսուլմանական հասարակության կազմավորման համար: Համաձայնագրի ամրոցական տեքստը մեզ է հասել Մուհամմադի վարքագիր Իբն Հիշամի (մահ.՝ 834թ.) միջոցով և զետեղված է «Աս-Միրա աև-Նարավիյա» («Մարգարեի վարքը») գրքում<sup>42</sup>: Այն վերաբերում է Մադինա քաղաքում քնակվող արաբական ցեղերին առ այն, որ նրանք գտնվում են Ալլահի ու նրա Մարգարեի հովանավորության ու պաշտպանության ներքո և համարվում են մեկ միասնական մուսուլմանական համայնք: Հիշատակվում են և՛ արաբական, և՛ հրեական ցեղերի անունները, որոնք պետք է բարյացակամ լինեն միմյանց ու մուսուլմանների նկատմամբ, օգնեն վերջիններիս պատերազմական ծախսերը հոգալու գործում: Այս համաձայնագրով Մադինայի քնակիչները պարտավորվեցին իրենց մեջ ծագած բոլոր վեճերը հանձնել Ալլահի ու նրա մարգարեի դատին<sup>43</sup>: Համաձայնագրում հրեաները քնութագրվում

<sup>41</sup> Sībū Բարտոլդ В. В., Работы по истории ислама и Арабского халифата, Сочинения, т. 6, с. 147, Большаков О., История Халифата, т. 1, с. 90.

<sup>42</sup> Sībū 129-126, السيرة النبوية لابن هشام المجلدات 2, ص. Ibn Hisham, Erster Band, Zweiter Theil, s. 341-344:

<sup>43</sup> Бартольд В.В., Работы по истории ислама и Арабского халифата, Сочинения, т. 6, с. 96.



են որպես «համայնք մուսուլմանների կողքին»<sup>44</sup>։ Իրականում այս փաստաթուղթը վկայում է Մուհամմադի՝ սկզբնական շրջանում հրեաների նկատմամբ ունեցած բարյացակամ վերաբերմունքի, նաև Մուհամմադի՝ նրանց կրոնի նկատմամբ ունեցած հանդուրժողականության մասին։ Նա առաջին պլան մղեց Իբրահիմին (Աբրահամ)՝ մտածելով, որ հրեաներն ու քրիստոնյաները, նրան համարելով իրենց կրոնի նախահայրը, կհամակրեն և կընդունեն նաև իր՝ Մուհամմադի քարոզչությունը։ Ղուրանի ամենաերկար ու գաղափարաբանորեն հագեցած սուրաներից մեկում՝ ալ-Բակարա սուրայում, կարդում ենք. «Երկնային գրքի մարդիկ» ասացին. «Հրեա կամ քրիստոնյա դարձեք, որպեսզի առաջնորդվեք։ Ասա. «Այս խնդրությունով կրոնները երբեք չեն կարող առաջնորդություն հանդիսանալ, այլ հետևեք Աբրահամի արդար կրոնին»<sup>45</sup>։

Մակայն շատ շուտով, երբ Մուհամմադին հաջողվեց Մադինայում ամրապնդել իր հոգևոր և աշխարհիկ իշխանությունը, նա ակտիվացրեց իսլամի քարոզը՝ «ձգտելով հավատափոխ անել իր ամենահամառ հակառակորդներին՝ հրեաներին»<sup>46</sup>։ Նա հրեական քանու կայնուկա ցեղին իսլամն ընդունելու կոչ արեց՝ սպառնալով, որ հակառակ դեպքում Ալլահը կախաժի նրանց։ Մուհամմադին հաջողվեց հրեական ցեղերին վտարել քաղաքից։ Այդ իրողությունը դրամատիկ գույներով պահպանվել է իսլամի պատմության էջերում։ Այնուհետև նա որոշեց իր գաղափարախոսության ազդեցությունը տարածել Սիրիայում, սակայն այստեղ կար մի լուրջ խոչընդոտ. դա իսայրաբ օազիսն էր, որը հիմնականում քնակեցված էր հրեաներով։ Իսայրաբի

<sup>44</sup> Гронебаум фон Г. Э., Классический ислам, очерк истории, с. 41

<sup>45</sup> 2:135, Սուրբ Ղուրան, պարսկերենից թարգմանեց Է. Հախսվերդյանը, «Եզնա» հրատարակչություն, Երևան, 2006:

<sup>46</sup> Flügel G., Geschichte der Araber vor den Sturz des Chalifates von Bagdad, band I, Leipzig, 1867, s. 80:

հրեաների հետ Մուհամմադը կնքեց հաշտության պայմանագիր՝ տրված «Մուսնաի օգնական և եղբայր Մուհամմադից»<sup>47</sup>: Ապա Մուհամմադը շարժվեց դեպի Վադի ալ-կուրա, որի բնակիչները չորսօրյա պաշարումից հետո համաձայնեցին ճանաչել մարգարեի իշխանությունը՝ նրան տալով իրենց բերքի որոշ մասը<sup>48</sup>: Մարգարեն համաձայնագիր կնքեց Թայմայի շրջանի քանի աղիյա ցեղի հետ, որը պետք է գլխահարկ վճարեր՝ իսլամի հովանավորության տակ լինելու պայմանով<sup>49</sup>:

Մուհամմադը սկզբում խորապես համոզված էր, որ ինքը քարոզում է հեղ յայն նույն կրոնը, ինչը ժամանակին քարոզել է Աբրահամը<sup>50</sup>: Այս շրջանում նա սիրով ու համակրանքով էր լցված հրեաների ու քրիստոնյաների նկատմամբ: Նա, լինելով միաստվածության ջատագով, առաջարկում էր «Գրքի ժողովրդին» պաշտել Աստծուն, որն ընդհանուր է արարների, հրեաների ու քրիստոնյաների համար, քանի որ, ըստ Մուհամմադի՝ Աստծո կողմից ընդունելի կրոնը իսլամն է<sup>51</sup>:

Ավելի ուշ՝ հրեաների հետ տարածայնությունների արդյունքում, Մուհամմադը հասկացավ, որ հավատացյալների (մուսուլմանների) նկատմամբ առավել թշնամանքով են համակված հրեաները և հեթանոսները. «Եվ դու կտեսնես, որ ամենամոռոտը հավատացյալներին նրանք են, ովքեր ասում են՝ «Մենք քրիստոնյա ենք»<sup>52</sup>:

Երբ Մեքքայում սկսվեցին հալածանքները Մուհամմադի ու նրա համայնքի նկատմամբ, համայնքի մի մասը քաղաքական

<sup>47</sup> 138. نامه ها و بیماهای سیاسی، ص 138.

<sup>48</sup> البلاذري، فتوح البلدان، ص 43-45، ابن الاثير الكامل في التاريخ، الجزء الثاني، ص 152.

<sup>49</sup> نامه ها و بیماهای سیاسی، ص 144.

<sup>50</sup> Вольфович О., История Халдифата, т. 1, с. 94.

<sup>51</sup> S11 3:19, Коран, перевод и комментарий И. Ю. Крачковского.

<sup>52</sup> 5:82, Նույն տեղում:

ապաստան գտավ Եթովպիայում<sup>53</sup>: Ըստ մուսուլմանական պատմական ավանդույթի՝ Եթովպիայի միապետը (Նեգուս) մինչև իր կյանքի վերջը մնացել է Մուհամմադի բարեկամը: Ղպտիների պատրիարքը, որն ապրում էր Ալեքսանդրիայում, ըստ արաբ պատմագիրների, մարգարեին նվիրել էր չորս ստրկուհի, և անգամ Եգիպտոսի նվաճման ժամանակ՝ Օմար խալիֆայի օրոք (634–644), մուսուլմանները վկայակոչում էին Մուհամմադի բարեկամությունը ղպտիների հետ<sup>54</sup>: Իր իշխանությանը ենթարկելով Արաբական թերակղզու մեծ մասը՝ Մուհամմադը կարող էր իր սկզբնական առաքելությունը համարել ավարտված: Եթե կրոնական գործունեության սկզբնական շրջանում նա հրեաներից ու քրիստոնյաներից չէր պահանջում իսլամի ընդունումը որպես փրկության միակ միջոց՝ գտնելով, որ հավատի մեջ հարկադրանք չկա, ապա այժմ նա սկսեց քննադատել նաև քրիստոնյաներին և հրեաներին, որոնք աղավաղել ու փոխել են Ս. Գիրքը, մոռացել օրենքների մի մասը, և դրա համար, ինչպես ասվում է Ղուրանում, «մենք ցանկ ենք նրանց մեջ թշնամություն և առելություն մինչև Հարության օրը»<sup>55</sup>:

Ըստ Ղուրանի՝ բոլոր հավատացյալները պարտավորվում են Աստծո ճանապարհին ջանալ, և Մուհամմադը համոզված էր, որ ինքն իր հավատացյալ ժողովրդի հետ պետք է պատերազմի այն ժողովրդի դեմ, որը դրժել է իր ուխտն Աստծո հետ, ծաղրել նրա մարգարեին: Մուսուլմանները պետք է պատերազմեն նրանց դեմ, ովքեր «չեն հավատում Ալլահին ու վերջին օրվան և չեն արգելում այն, ինչ արգելել է Ալլահը ու նրա

<sup>53</sup> 140 ար. 1968, «تاريخ الشعوب الإسلامية», بيروت, Грөөенбаум фон Г.Э., Классический ислам, очерк истории (600-1258), с. 31:

<sup>54</sup> Sibt Ibn Abd al-Hakam, Zавоевание Египта, ал-Магриба и ал-Андалуса, «Наука», Москва, 1985, с. 69–73:

<sup>55</sup> 5:14, Коран, перевод и комментарии И. Ю. Крачковского.

առաքյալը, և չեն դավանում ճշմարտության կրոնին, մինչև որ իրենց ձեռքով չտան գլխահարկը և չսվաստացվեն»<sup>56</sup>:

Վ. Բարտոլդը գրում է. «Եթե Ղուրանում խոսվում է այլակրոնների՝ հարկ վճարելու մասին «սվաստացված լինելով», ապա դրանից չի հետևում, որ հարկի գանձումը կատարվում էր սվաստացուցիչ արարողությունների կիրառմամբ»<sup>57</sup>: Նա այս հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը հիմնավորում է նրանով, որ «այդ հպատակները, որոնք աշխատում էին մուսուլմանների մոտ, ոչ այնքան անմիջական հպատակներ էին, որքան մուսուլմանական պետության հարկատուներ, որոնք նրա առաջ ունեին ֆինանսական պարտավորություններ»<sup>58</sup>: Մինչդեռ մուսուլմանական պատմագրության մեջ հանդիպում ենք Օմար իբն ալ-Խատտաբ խալիֆայի (634-644) օրոք հովանավորյալ (զիմմի) քնակչության՝ գլխահարկ չվճարելու պատճառով նրանց բռնությունների ենթարկելու փաստերի: Արու Յուսուֆը գրում է, որ Օմար խալիֆան, վերադառնալով Ասորիք կատարած իր ճանապարհորդությունից, տեսել է արևի տակ կանգնած մարդկանց, որոնց գլուխներին ձեթ էին քսել՝ գլխահարկ չվճարելու պատճառով: Օմարը հրամայել է նրանց ուժերից վեր աշխատանքով չձանրաբեռնել, քանի որ այդ մասին կարգադրել է դեռևս Ալլահի առաքյալը<sup>59</sup>:

Այսպիսով, այս հարկը գանձվում էր միայն «Գրքի ժողովրդից», որը պետք է վճարեր այն՝ որպես փրկագին: Հետագայում մուսուլմանական կրոնաիրավական համակարգում ավելի հստակ ու պարզորոշ սահմանվեց ջիզիայի՝ գլխահարկի

<sup>56</sup> 9, 29, նույն տեղում:

<sup>57</sup> Бартольд В. В., Работы по истории ислама и Арабского халифата, Сочинения, т. 6, с. 419.

<sup>58</sup> Նույն տեղում:

<sup>59</sup> Մ. Սևա Արու Յուսուֆ, Արար մատնագրեր, Թ-Ժ դարեր, Երևան, 2005, էջ 104:

ձևակերպումը: Ա. Մեցը գրում է, որ գլխահարկը վճարվում էր ըստ բնակչության վճարունակության աստիճանի, համապատասխանաբար՝ «12, 24 և 48 դիրհեմի չափով, իսկ այն շրջաններում, որտեղ ոսկե դրամներն էին կիրառվում, տարեկան 1, 2 և 3 դինար»<sup>60</sup>: Գլխահարկ վճարելուց ազատվում էին կանայք, երեխաները, ծերերը, վանականները, որոնք ապրում էին նպաստներով: Իսկ եթե հաշմանդամը եկամուտներ ուներ, նրանից էլ էր գլխահարկ գանձվում<sup>61</sup>: Գլխահարկի վճարման դիմաց հովանավորյալ հարկառու բնակչությանը «տրվում էին թղթե տեղեկանքներ: Եվ ավելի անբարենպաստ ժամանակներում նրանց վզերից կախվում էին պիտակներ, և ձեռքերի վրա դրվում էր կնիք»<sup>62</sup>: Ղևոնդը ևս հիշատակում է, որ Աբրաայանների օրոք Հայաստանում հարկը վճարած բնակիչների վզերից ևս կախվում էին կապարե կնիքներ<sup>63</sup>:

Հարկի այս տեսակի լավագույն քննորոշումը տվել է II-րդ դարի մուսուլման իրավագետ ալ-Մավարդին. «Ինչ վերաբերում է գլխահարկին, ապա այն սահմանվում է ըստ շնչերի, և անվանումն էլ ծագում է «ջիզիա» (հատուցում, վարձ) բառից, այնպես որ մենք հավաքում ենք այն նրանցից՝ ի նշան նվաստացման կամ որպես վարձատրություն՝ նրանց կանքը խնայելու համար»<sup>64</sup>: Գլխահարկի ենթակա ոչ մուսուլման հպատակները միևնույն ժամանակ պարտավոր էին կատարել այլ հարկադրանքներ ևս, որոնց մի մասը պարտադիր էր, մի

<sup>60</sup> Мец А., Мусульманский Ренессанс, с. 48.

<sup>61</sup> Массэ А., Ислам, очерк истории, с. 63.

<sup>62</sup> Мец А., նշված աշխատ., էջ 49:

<sup>63</sup> Ղևոնդ, էջ 105:

<sup>64</sup> Ал-Мавердӣй- Медников Н., Палестина от завоевания ее арабами до крестовых походов по арабским источникам, Православный Палестинский сборник, вып. 50, т. 17, вып. 2(4), с. 1330, Hammer P., Über die Landverwaltung unter dem Chalifate, Berlin, 1835, с. 116-117.

մասն է՝ կամավոր: Այլակրոնների պարտադիր պարտավորությունները վեցն էին.

1. «Չպարսավել Ալլահի գիրքը՝ Դուրանը, և չանվանարկել այն:
2. Չանվանել Ալլահի մարգարեին խաբեքա:
3. Չարատավորել մուսուլմանական հավատը:
4. Չամուսնանալ մուսուլմանի հետ:
5. Չդրդել մուսուլմանին՝ իր հավատից հրաժարվելու:
6. Չօգնել և չստուարել մուսուլմանների դեմ պատերազմողներին»<sup>65</sup>:

Այսպիսով Մուհամմադի և այլակրոնների ճանապարհները բաժանվում էին: Ավելին. ինչպես տեսնում ենք, պատմական փաստերն ընդգծում են Մուհամմադի վերաբերմունքի և հարաբերության աստիճանական զարգացումը, որը հետագայում պիտի դառնար «քաղաքակրթությունների բախման պատճառ»:

Ըստ մուսուլմանական իրավագիտության՝ հրեաներն ու քրիստոնյաները համարվում էին «Գրքի ժողովուրդ» (սալ ալ-քիթաբ), որոնց կրոնն ինչ-որ ընդհանրություն ուներ իսլամի հետ: Իսլամի հիմքը միաստվածությունն էր, որի գաղափարը՝ «Չկա Աստված՝ բացի Ալլահից, և Մուհամմադը Նրա Մարգարեն է», ամրագրվում էր Դուրանի բազմաթիվ այաթներում: Այսպես կոչված «անհավատները» տարրերվում էին իսլամի հետևորդներից միայն նրանով, որ իբրև թե հեռացել էին իրենց կրոնի «սկզբնական մաքրությունից», ազավաղել Աստծո կողմից մարդկանց տրված գիտելիքները: Սակայն, ամեն դեպքում, քրիստոնյաներն ու հրեաները հեթանոսներ չէին և հետևաբար կարող էին լինել մուսուլմանների բարեկամները: Այս առումով մուսուլմանները, հրեաներն ու քրիստոնյաները

<sup>65</sup> Muir W., *The Caliphate its Rise, Decline and Fall*, Edinburg, 1924, p. 137.

րը համարվում են երկնային կրոնի ժողովուրդներ, և, ինչպես կարծում են մուսուլմանական իրավագիտության ներկայացուցիչները, նրանց միջև «տակա է ցեղակցություն և ազգակցական կապ»<sup>66</sup>:

Հադիսներում (պատմություններ Մուհամմադի կյանքի մասին) հանդիպում են այս կրոնների նկատմամբ ունեցած Մուհամմադի պաշտպանողական վերաբերմունքի փաստեր: Օրինակ՝ Մուհամմադն ասում էր. «Ով վնասի զիմմիին, վնաս կպատճառի ինձ, ով ինձ վնասի, վնաս կհասցնի Ալլահին, ով վնաս հասցնի զիմմիին, ես նրանից հաշիվ կպահանջեմ Հարության օրը»<sup>67</sup>: Հովանավորյալների դասը կազմում էր «Գրքի ժողովուրդը» (անկ ալ-քիթաբ): Ղուրանում «անկ ալ-քիթաբ» հասկացությունը դիտարկվում է որպես մարդկանց մի խումբ, որը, ըստ իր կրոնի, զբաղեցնում է միջին տեղ հավատացյալների, այսինքն՝ մուսուլմանների, և հեթանոսների ու անհավատների միջև<sup>68</sup>: Այս դասի մեջ էին մտնում հրեաներն ու քրիստոնյաները, սակայն ժամանակի ընթացքում այս խմբի մեջ ներառվեցին նաև սաբեադիները<sup>69</sup> և զրադաշտականները<sup>70</sup>: «Գրքի ժողովրդի» վերաբերյալ գաղափարին Մուհամմադը հանգել էր քրիստոնյա վանականների հետ ունեցած զրույցների ընթացքում ու իր կրոնական գործունեության շրջանում:

<sup>66</sup> الغرضلوي ي.، الحلال والحرام في الإسلام، الناشر: مكتبة وهبة، 1405م، 1984م القاهرة، ص. 323.

<sup>67</sup> Նույն տեղում, էջ 325, Bat Y., The Dhimmi, Jews and Christianity under Islam, Madison, 2001, p. 70:

<sup>68</sup> Տես 2:137, Գուրան, քարգմ. Ա. Ամիրխանևանց:

<sup>69</sup> Սաբեադիներ -կրոնական համայնք, միջանկյալ դիրք էր զբաղում հավատացյալների ու հեթանոսների միջև, 1970 «Գրքի ժողովրդի» մաս կազմելով (տես Ислам, Энциклопедический словарь, "Ислам" №2115, 1991, с. 201), էջ 76:

<sup>70</sup> Крымский А., История арабов, ихъ халифаты, ихъ дальневосточныя судбы, с. 166.

Առաջ անցնելով՝ նշենք, որ արաբական նվաճումներից հետո արաբների հանդուրժողականությունը հրեաների ու քրիստոնյաների նկատմամբ հիմնավորվում էր նաև նվաճված երկրներում դաշնակիցներ և օգնականներ ունենալու անհրաժեշտությամբ: Այդ երկրներում «Գրքի ժողովուրդ»-ները կարող էին իրենց կրոնական ծեսերը կատարել, ունենալ աղոթասենյակներ՝ լինելով Ալլահի ու նրա Մարգարեի հովանավորության տակ և կազմելով հովանավորյալների (աիլ ալ-զիմմա) կրոնական դասը<sup>71</sup>: Այդ դասին տրվում էր ներքին ինքնավարություն՝ պատրիարքի ղեկավարությամբ: Այդպիսի խմբերում յուրաքանչյուր անդամ պարտավորվում էր մուսուլմանական համայնքին վճարել գլխահարկ (ջիզիա)՝ որպես արյան գին, «պարտավորված լինելով հնազանդվել մուսուլմանական պետությանը»<sup>72</sup>:

Այսպիսով, Մուհամմադի վերաբերմունքը «Գրքի ժողովրդի» նկատմամբ առաջին հերթին իր արտացոլումն ունեցավ Դուրանում, որի սուրաներում ամրագրվեց այլակրոնների նկատմամբ մուսուլմանական համայնքի հովանավորության, պաշտպանության ու հանդուրժողականության դրույթը՝ գլխահարկ վճարելու պայմանով:

<sup>71</sup> Տես Աիլ ալ-զիմմա-հովանավորյալներ են կոչվում այն ոչ մուսուլմանները, որոնք ընդունել են մուսուլմանների տիրապետությունը, վճարում են գլխահարկ (ջիզիա) ու հողահարկ, նմանականների հովանավորությունը (զիմմա), ինչև արտաքին թշնամիներից պաշտպանության, անձի կոյրքի անձնումխնելություն էր նշանակում (տես Ислам, Энциклопедический словарь, с. 27)։

<sup>72</sup> Петрушевский И., Ислам в Иране в VII-XV веках, Курс лекций, с. 182.





Վաղ իսլամին նվիրված գիտական գրականության մեջ պայմանագիրը կոչվում է «ահդ», որը թարգմանվում է որպես «ուխտ», «երդում», «կարգադրություն»<sup>73</sup>: Հետագայում «պայմանագիր» նշանակությամբ սկսեցին օգտագործվել նաև «աման» (ապահովության գիր) կամ «շարտ» (պայման, պայմանագիր), «սուլի» (հաշտության պայմանագիր) եզրույթները: «Ահդ» պայմանագիրը մեծ մասամբ որոշում էր ոչ մուսուլմանների համայնքային կամ նրանց իշխանների հողատիրական իրավունքները, և այդ պատճառով էլ ոչ մուսուլմանները և առաջին հերթին քրիստոնյաները կոչվում էին «պայմանագրի ժողովուրդ»<sup>74</sup> (ահլ ալ-ահդ):

Անդրադառնալով «ահդ» եզրույթին իսլամի զարգացման վաղ շրջանում՝ նշենք, որ Ղուրանում այն օգտագործվում է երկու նշանակությամբ՝ Ալլահի ուխտը մարդկանց հետ, մարդկանց ուխտը Ալլահի առաջ՝ ամրագրված երդմամբ, և պայմանագիր հեթանոսների և անհավատների հետ: Ըստ Ղուրանի՝ Ալլահը պայմանագիր է կնքել մուսուլմանների հետ, որոնք մտել են նրա հովանավորության տակ, Ալլահն ուխտ է կնքել Աբրահամի այն սերնդի հետ, որը մաքուր է ու ազնիվ (անշուշտ, խոսքը վերաբերում է մուսուլմաններին)<sup>75</sup>:

<sup>73</sup> Ислам. Энциклопедический словарь, с. 26.

<sup>74</sup> Տե՛ր Ղևոնդյան Ա., Հայ նախարարների հողատիրական իրավունքները, Հոդվածների ժողովածու, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 2003, էջ 286:

<sup>75</sup> Sûru 2:124, Коран, перевод и комментарии И. Ю. Крачковского:

«Ահդ» տեսակի դաշինքը հայտնի էր դեռ նախախաղամական շրջանում, որի միջոցով մարդիկ ամրագրում էին իրենց միջև առկա պայմանագրային պարտավորությունները: Մուսուլմանական կրոնափրավական համակարգում այն փոխադարձ պարտավորությունների մասին երկկողմանի կամ քաղմակողմանի պայմանագիր է:

«Ահդը» կարող էր կնքվել միջնորդների օգնությամբ կամ էլ առանց նրանց, առանձին մարդկանց և տարբեր խմբերի միջև: Անհավաստների հետ «ահդը» պետք է կնքվեր այնպես, որ մուսուլմանները, դրանից ելնելով, ստիպված չլինեին խախտել Ղուրանի կրոնական որևէ սկզբունք և չընկնեին անհավատների ու հեթանոսների ազդեցության տակ:

Դաշինքի մի այլ տեսակ էր «ահդ ալ-ալլա»-ն (պայմանագիր խնամակալության մասին), որը կնքվում էր միայն մուսուլմանների միջև և կրում էր անհատական բնույթ: Այս պայմանագրով ոչ արաբ մուսուլմանները դառնում էին ուսմայի անդամ:

Պայմանագրի ժողովուրդը (ահլ ալ-ահդ), որն այդ պայմանագրով մտնում էր Ալլահի ու նրա Մարգարեի հովանավորության և պաշտպանության տակ, ինչպես արդեն ասվել է, հիմնականում այլակրոններ էին՝ հրեաներ ու քրիստոնյաներ: Վերջիններս պարտավորվում էին օգնել մուսուլմաններին արտաքին թշնամիների դեմ պայքարում՝ փոխարենը ստանալով նրանցից անձի, ունեցվածքի, կալվածքների անձնոսմյութության երաշխիք:

«Ամանը» ավելի ընդհանուր իմաստ ուներ. այն ունեցողն սպառնալից էր երաշխիք էր ստանում իր անձի, ունեցվածքի, հողերի համար: Ղուրանում այս եզրույթը չկա, դրա փոխարեն գործածվում է ջիվար (հովանավորություն, պաշտպանություն, պարտավորություն) եզրույթը:

Մուհամմադի՝ արաբական ցեղերին հղած ուղերձներում այս նշանակությանը օգտագործվում է նաև «զիմմա» բառը: Առաջին անգամ «ամանը»՝ որպես «պայմանագիր անձի, կյանքի, ունեցվածքի անձեռնմխելիության մասին», հանդիպում է Խալիդ իբն ալ-Կալիդի՝ Դամասկոսի բնակչությանը տված թղթում (634թ.)<sup>76</sup>: «Ամանը», ի տարբերություն «ահդի» ու «զիմմայի», ոչ մուսուլմանների, առաջին հերթին քրիստոնյաների կյանքի և գույքի ապահովությունն է՝ առանց փոխադարձ պարտավորությունների<sup>77</sup>:

«Սուլեը» կնքվում էր մուսուլմանների և նվաճված տարածքների բնակչության միջև: Այս պայմանագրով հիմնականում երաշխավորվում էին բնակչության կյանքի և ունեցվածքի անվտանգությունը, կրոնական շինությունների և քաղաքային պարիսպների պահպանումը՝ գլխահարկ և հողահարկ վճարելու պայմանով: Դրանք ստորագրվում էին տվյալ քաղաքը, շրջանը գրաված մուսուլման զորահրամանատարի և տեղի բնակչության ներկայացուցիչների (կառավարիչ, եպիսկոպոս) միջև: Նախքան որևէ բնակավայրի գրավումը անհրաժեշտ էր այլակրոններին առաջարկել ընդունել իսլամը: «Իսկ եթե նրանք հրաժարվեին ընդունելուց, գրում է Ա. Մասսեն, ապա հնարավոր էր երկու տարբերակ՝ կամ հակամարտությունը լուծվում էր զինված պայքարով նրանց և մուսուլմանների միջև (նվաճում գեների ուժով), կամ էլ բնակիչները վճարում էին գլխահարկ՝ մուսուլմանների հովանավորության դիմաց»<sup>78</sup>: Մուհամմադն այս դեպքում տարբերում էր մի կողմից կռապաշտների նվաճում, մյուս կողմից՝ հրեաների ու քրիստոնյաների վերջիններս ունեին երկնային գրքեր, որոնք իրավունք էին

<sup>76</sup> Ислам. Энциклопедический словарь, с. 27:

<sup>77</sup> Aman-Shacht Y., 429a-430b, The Encyclopaedia of Islam, edited by B. Lewis, vol I, 1960, Leiden-London, E. J. Brill-UZAC.

<sup>78</sup> Массэ А., Ислам, очерк истории, с. 61.

տալիս նրանց համարվելու «Գրքի ժողովուրդ»։ Այս հանգամանքից ելնելով՝ «Մուհամմադը շնորհում էր նրանց իրավունք՝ դավանելու իրենց կրոնը՝ հարկ վճարելու պայմանով»<sup>79</sup>։

Մուսուլման իրավագետ ալ-Շաֆիին նշում է, որ այս պայմանագրերը պետք է լինեին ժամանակավոր, և դրանց իրավասության ժամկետը չպետք է գերազանցեր տասը տարին, քանի որ, 628թ. Հուդայբիյայի ճակատամարտից հետո Մուհամմադը պայմանագիր է կնքել միայն տասը տարվա համար<sup>80</sup>։ Հասկանալի է, որ իսլամի ընդունումից հետո պատմական և քաղաքական իրադարձություններն ավելի արագ էին փոփոխվում, և մշտական պայմանագրերը դառնում էին ժամանակավրեպ։

Առաջին անգամ «անի ալ-զիմմա» (հովանավորյալ ժողովուրդ) եզրույթը հանդիպում է արաբական ցեղերին Մուհամմադի հղած ուղերձներում (629–630), ինչպես նաև Ղուրանում «Ալլահի ու նրա Մարգարեի հովանավորություն» իմաստով։ Սակայն արդեն Եմեսի Նաջրան քաղաքի քրիստոնյաների հետ կնքած պայմանագրում (632թ.) «զիմմա» բառը դառնում է համարժեք «այլակրոնների հովանավորություն» եզրույթին<sup>81</sup>։

«Զիմման» ավելի շուտ ուներ կրոնական նշանակություն, իսկ «սուլիք»՝ աշխարհիկ։ Այսպիսով, Արաբիայի այլակրոն քնակչությունը, ընդունելով «զիմմիի» կարգավիճակը, պարտավորվում էր իր կամքի ազատության համար վճարել գլխահարկ, հողահարկ՝ միաժամանակ ընդունելով հովանավորյալների համար նախատեսված բոլոր պայմանները։ Այս առնետով հանդերձ՝ «զիմմիի» ֆենոմենը պատմության մեջ մնում է որպես մուհամմադյան քաղաքականության մարդասիրության դրսևորումների և հանդուրժամետության ապացույցներից մե-

<sup>79</sup> Նույն տեղում

<sup>80</sup> Stiu Haiu A., На пути к исламской реформации, Москва, 1999, с. 169:

<sup>81</sup> Ислам. Энциклопедический словарь, с. 27.

կը: Ամենամոլեռանդ հավատացյալն անզամ իրավունք չունի  
վիրավորել զիմնիին՝ մարդկանց, որոնք իսլամի հովանավո-  
րության ներքո էին:



**ՄՈՒԿԱՄԱՍԿԻ ԿՈՂՄԻՅ ԱՐԱՐԱԿԱՆ ԹԵՐԱԿՂՉՈՒ  
ԵՎ ԵՄԵՆԻ ԸՆԶՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՔՐԻԱՏՈՆԵՅԱ  
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՏՐՎԱԾ ԴԱՅՄԱՆԿԱԳՐԵՐԸ՝ ՈՐՊԵՍ  
ԱՅԼԱԿՐՈՆՆԵՐԻ ՏԵՏ ԿԱՐԱՔԻՐՈՒԹՅԱՆ ՄՈՂԵԼ**

**Ք**աղրի և Ուխուդի մարտերում տարած հաղթանակներից հետո Մուհամմադի դիրքերն ամրապնդվեցին, նրա բանակը համալրվեց նորադավաններով, և Արաբական թերակղզում նրա հեղինակությունը բարձրացավ: Մուհամմադի բոլոր կենսագիրները վկայում են, որ Հուդայբիյայի հաշտությունից անմիջապես հետո Մուհամմադն իսլամի կրոնն ընդունելու կոչով ուղեորձևեր է հղել Բյուզանդիայի կայսր Հերակլեսին (610-641), Պարսկաստանի թագավոր Խոսրով II-ին (591-628), Եգիպտոսի կառավարիչ Մուկաուկիսին, Եթովպիայի նեգուսին, Օմանի, Եմենի թագավորներին, Բահրեյնի, Յամանայի կառավարիչներին<sup>82</sup>: Իր այս ուղեորձևերում նա կոչ էր անում վերջիններին՝ ընդունելով իսլամը՝ երկրպագել միակ Աստծուն՝ Ալլահին: Խոսրով թագավորին հղած ուղեորձի մագաղաթն ձեռագիրը 1963թ. հայտնաբերվել է Լիբանանի արտգործնախարար Անրի-Փարալոնի հավաքածուում: Այդ նամակի կրկնօրինակը պահպանվել է նաև 10-րդ դարի պատմիչ ալ-Տարիխի «Պատմության» մեջ, որտեղ հավաստիության համար հիշատակված է նաև հաղորդողների անբողջ շղթան (խննդ):

Մուհամմադյան դաշնագրերի հիմքում ընկած են նաև նրա՝ Արաբական թերակղզու քրիստոնյա և հրեա բնակչությանը շնորհած պայմանագրերի հիմնական բովանդակությունը:

<sup>82</sup> Sibt Ibn Hisham, Erster Band, Zweiter Theil, s. 972. أبو الحسن السعدي. كتاب التبيين والأثراف 260-261 ج ١.

Այսպես, ըստ ալ-Բալազուրիի, ամրանալով Թաքուկում, Մուհամմադն իսլամ ընդունելու կոչով սուրհանդակներ ուղարկեց հարևան օազիսներ, իսկ Խալիդ իբն ալ-Վալիդին ուղարկեց 420 հեծյալներից բաղկացած ջոկատ՝ գրավելու Դումաթ ալ-Ջանդալը (այժմ՝ Ջաուֆ), որի կառավարիչը քինդա ցեղի քրիստոնյա իշխան Ուքայդիբ իբն Արդ ալ-Մալիքն էր։ Նրանք ևս Մուհամմադի հետ կնքեցին խաղաղության համաձայնագիր, որը տեսել ու արտագրել է ալ-Վակիդին։ Ըստ այդ համաձայնագրի՝ Ուքայդիբը և նրա հպատակները պարտավորվեցին ընդունել իսլամը, տալ իրենց հողային ունեցվածքի 1/5-ը, որոնք անմշակ, լքված հողեր էին։ Փոխարենը նրանք ստացան անձնտնմխելիության ու ապահովության նրաշխիք, նաև հողեր, հոտեր։ Այս պայմանագրի մասին հիշատակում են նաև մուսուլման մյուս պատմագիրները։ Ուքայդիբի հետ կնքած պայմանագրի քննադիրն առկա է նաև ալ-Բալազուրիի աշխատության մեջ. պատմիչը հիշատակում է, որ Ուքայդիբն իսլամ ընդունեց, իսկ Դումաթ ալ-Ջանդալի քնակիչները պարտավորվեցին իրենց անմշակ հողերը, նաև ամրոցները, աղբյուրները տրամադրել մուսուլմաններին, տալ նրանց ձիեր, օղազրահներ, մաս հասել իրենց արմավենիների քերքից և վճարել զաքաթ (հարկ)։ Փոխարենը նրանք ձեռք կրերնին Ալլահի պայմանագիրը և Մուհամմադի հավատարմությունը<sup>69</sup>։ Սակայն Դումաթ ալ-Ջանդալի քնակիչների կարգավիճակի մասին տեղեկությունները հակասական են. Իբն Հիշամը նշում է, որ քնակիչները վճարում էին գլխահարկ, ինչը նշանակում էր, որ նրանք իսլամ չընդունեցին<sup>70</sup>։ Այնուհետև Մուհամմադի մոտ է գալիս Ռուուբիի որդի Յուհաննան (Հուվհանես)՝ Այ-

<sup>69</sup> البلاذري، فتوح البلدان، ص. 69

<sup>70</sup> Sbu Ibn Hisham, Erster Theil, s. 903, سيرة النبوية لابن هشام، 4، المجلدات، ص. 141-142

լա<sup>65</sup> քաղաքի իշխանը: Մուհամմադը նրա հետ կնքում է խաղաղության և ապահովության պայմանագիր, համաձայն որի՝ յուրաքանչյուր չափահաս մարդ, որն ապրում էր այդ հողում, պետք է վճարեր տարեկան մեկ դինար. տղամարդկանց թիվը հասնում էր երեք հարյուրի, և այդպիսով պետք է գանձվեր ընդհանուր հաշվով՝ 300 դինար: Այլայի քրիստոնյա և հրեա բնակիչները պարտավորվում էին նաև օգնել իրենց քաղաքով անցնող մուսուլմաններին<sup>66</sup>:

Այս պայմանագրի ամրոտջական բնագիրն առկա է Իրն Սաադի թղթերում: Այստեղ Մուհամմադը հավաստում է, որ երբեք չի կովի քաղաքի բնակիչների դեմ՝ առանց նրանց այդ մասին զգուշացնելու: Նա առաջարկում էր Յուհաննային և քաղաքի բնակիչներին իսլամ ընդունել և կամ գլխահարկ վճարել՝ հնազանդվելով Ալլահին, նրա առաքյալին ու բանագնացներին: Բնակիչները պարտավորվում էին նաև գեղեցիկ հագուստներ պատրաստել նրանց համար: Պայմանագրում հիշատակվում է Մուհամմադի սիրելի օրդեգիր Ջալդի անունը, որն ամենայն հավանականությամբ նրա ղեսպանորդներից էր: Քաղաքի բնակիչները պարտավորվում էին գոհացնել մարգարեի ղեսպանորդներին, հակառակ դեպքում Մուհամմադը կարող էր գերեզմարել նրանց: Բնակիչները բարեխոսելու համար պարտավորվում էին միջնորդ-ղեսպանին տալ երեք ուղտաբեռ գարի:

Պայմանագրի նրկույթը դառնում է դիվանագիտության մեթոդ: Միևնույն ժամանակ այս պայմանագրերը մեզ համար պարզ են դարձնում 7-րդ դարի նյութական բարիքների արժեքը (գարի, դինար, արմավ, ձկնեղեն և այլն):

<sup>65</sup> Այլան քաղաք է Մթցերկրական ծովի ափին. բնակեցված էր հիմնականում հրեաներով (տես Jacot's Geographisches Wörterbuch, band. 1, Leipzig, 1924, s. 422):

<sup>66</sup> البلاذري فتح البلدان، ص. 86، السيرة النبوية لابن هشام، المجلدات، 4، ص. 141



Մուհամմադի մոտ են շտապում նաև Մակնայի, Ջարբայի, Ազրուհի քրիստոնյաները, որոնց հետ նույնպես Մուհամմադը խաղաղության և հաշտության պայմանագիր է կնքում: Ալ-Բալազուրին հիշատակում է, որ, ըստ այդ պայմանագրի, Ազրուհի քնակիչները պարտավորվում են Մուհամմադին վճարել տարեկան հարյուր դինար: Իսկ Ջարբայի քնակիչների գլխահարկի չափի մասին պատմագիրը չի հիշատակում<sup>67</sup>: Իրն Սաադը բերում է ալ-Վակիդիի գրի առած պայմանագրի քնագիրը, որը Մուհամմադը տվել է Ազրուհի քնակիչներին՝ որպես ապահովություն Ալլահի ու նրա Մարգարեի կողմից: Ըստ պայմանագրի՝ վերջիններս իրենց հերթին պարտավորվում են քաղցածակամ լինել մուսուլմանների հանդեպ, վտանգի պահին օգնել ու աջակցել նրանց<sup>68</sup>:

Բնակիչները պարտավորվում են որպես գլխահարկ վճարել հարյուր դինար մաքուր ոսկի: Մեա թե ինչպես էր հարստանում մուսուլմանների գանձարանը, որը և զրավում էր Մուհամմադի ուսմունքի՝ օրեցօր բազմապատկվող նորադավաններին: Ըստ Մակնայի<sup>69</sup> քնակիչների հետ կնքած խաղաղության և ապահովության պայմանագրի՝ տեղի քնակչությունը պարտավորվում է Մուհամմադին տալ ձկան, ինչպես նաև կանանց գործած քամբակցա մանվածքի և իրենց ձիերի, օղազրահների և բերքի 1/4-ը: Ալ-Բալազուրին գրում է, որ այս տեղեկությունները լսել է մի եգիպտացուց, «որն անձամբ տեսել է այն՝ գրված կարմիր կաշվի վրա»<sup>70</sup>: Սակայն մուսուլմանները նույնպես ունե-

<sup>67</sup> *Al-Muṣannaf* by al-Balāzūrī, Էջ 67, 141 և. 275, *سيرة النبي والأشراف* السيرة النبوية لابن هشام المجلدات، ص. 141.

<sup>68</sup> *Հմմտ. Ибн-Саад-Медников Н., Палестина от завоевания ее арабами до крестовых походов по арабским источникам, Православный Палестинский сборник, 50-й вып., т. 17, вып. 21), с. 37.*

<sup>69</sup> Մակնան քաղաք է Ալլայի մոտ, ըստ ալ-Վակիդիի՝ տեղի քնակիչները երմնակախում հրեաներ էին (*տես* 167 և. *تلمة ها وبيماليهاي سياسي*، ص. 167):

<sup>70</sup> *البلادي قروح البلدان*، ص. 67-68.

ին պարտավորություն. նրանք չպետք է ճնշեն քրեականներին: Քաղաքի կառավարիչ կարող էր ընտրվել քաղաքի քրեականներից կամ Ալլահի առաքյալի ընտանիքի անդամներից որևէ մեկը: Պայմանագիրը կնքել է Ալի իբն Աբու Տալիբը: Գոյություն ունի նաև Մակնաջի քրեականը՝ Մուհամմադի շնորհած պայմանագրի ևս մի տարբերակ:

Այս տարբերակում ևս կարևորվում է մեկ հանգամանք՝ ապահովության պայմանը: Քաղաքն իր քրեականներ և ունեցվածքով գտնվում է Ալլահի ու Մուհամմադի հովանավորության տակ, և քաղաքի կառավարիչ կարող է դառնալ կամ քաղաքի քրեականներից և կամ Մուհամմադի զերդաստանի անդամներից որևէ մեկը: Այս պայմանագիրն իր բովանդակությամբ ու ծավալով հիմնականում տարբերվում է նախորդ օրինակից, այն է՝ քաղաքի քրեականները չեն մասնակցի պատերազմական գործողություններին կովի դաշտում, չեն մասնակցի զորահավաքին, նրանց վրա հարկ չի դրվի, տասանորդ չեն վճարի, և եթե քաղաքի քրեականներից որևէ մեկը դիտավորյալ սպանի մուսուլմանի, ապա նրա դատավճիռը կորոշեն մուսուլմանները: Քաղաքի քրեականների հետ մուսուլմանները չպետք է վարվեն այնպես, ինչպես վարվում էին զինմիների հետ, այսինքն՝ չպահանջեն գլխահարկ, որը պարտադիր էր զինմիի համար: Ավելին, նրանք կարող էին մտնել սրբություն, այցելել մուսուլման կառավարիչներին և այլն: Խոստացվում էր նյութական և բարոյական աջակցություն: Յուրաքանչյուր անձ կարող էր մեկնել քաղաքից՝ մտալով Մուհամմադի հովանավորության տակ, քանի որ կրոնի մեջ պարտադրանք չկար: Իսկ ով ցանկանար հետնել «Ալլահի Մարգարեի ազգին»՝ դառնալով մուսուլման, չէր վճարի իր ունեցվածքի 1/4-ը, որը կազմում էր հիստն դինար<sup>91</sup>:

<sup>91</sup> 228. نامه ها و بیامتهاي سیاسی. ص 228.

Նախորդի համեմատությամբ այստեղ զիջումներ կային. ընդգծվում էին այն արտաքին հատկանիշները, որով քրիստոնյա և հրեա բնակչությունը պետք է նմանվեր մուսուլմաններին: Այսինքն՝ իրենց գլխի առջևի մազափունջը կարող էին չխուզել, նրանց չէր արգելվում կարճ, գունատվոր, նաև շքեղ հագուստներ հագնելը, ձի հեծնելը, զենքի օգտագործումը, ինչը տարբերում էր մուսուլմանին ոչ մուսուլմանից: Մինչդեռ մեզ հայտնի է, որ զիմմիները չպետք է երթնեկեփն ձիերով կամ ուղտերով: Այսինքն՝ պայմանագիրը մի քարացած սահմանում չէր, և դրա հումանիստական ու ազատական լինելու աստիճանը կախված էր և՛ պայմանագիրը տվողից, և՛ այն ընդունողից: Նրանք չպետք է իրենց կոշիկի կապերն արծակենին, նաև կազմակերպեն իրենց հարազատների հուղարկավորությունը մինչև գերեզմանոց ու ողբային նրանց վրա: Իսկ պայմանագրի բնագրի որևէ փոփոխություն նրանց կարծանացներ Ալլահի ու նրա հրեշտակի դատաստանին: Ուշագրավ է այն փաստը, որ վերոհիշյալ պայմանագրի այս վերջին կետերն առկա են հետագայում Օմար խալիֆային վերագրվող և Ասորիքի քրիստոնյաների կազմած փաստաթղթում<sup>90</sup>:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ հենց այս ժամանակաշրջանում են ձևավորվել մուսուլմանների ու այլակրոնների հարաբերությունների չափանիշները, թեև տվյալ պայմանագրի վերջին կետերը բացակայում են մուսուլման պատմագիրների հիշատակություններում: Դա պատահական անտարբերություն չէր նրանց կողմից. ենթադրելի է, որ վարքի ազատա-

<sup>90</sup> Հմմտ. Ան, Երկեր, հատոր 2, «Հայաստան» հրատարակչություն, 1967, էջ 276-277: Քրիստոնյաների նկատմամբ եղած մուսուլմանների վերաբերմունքը մշակված է մուսուլմանական իրավագիտության մեջ, որին անդրադարձել են մի շարք հետազոտողներ (տես Tritton A., *The Calips and their non muslim subjects*, London, 1930, Гирсас В., *Права христиан на Востоке по мусульманским законам*, в печати в В. Головина, С. Петербурге, 1865).

կանության այդ կետերն առավել ուշ շրջանի արդյունք են, երբ վերջնականապես մուսուլմանական կրոնաիրավական համակարգի մեջ ձևավորվել ու հաստատվել էր վերաբերմունքը այլակրոնների նկատմամբ:

Մուսուլմանական պատմագրության մեջ հիշատակվում է Մուհամմադի՝ Բահրեյնի կառավարիչ Մանզուր Իբն Սաուիին՝ Խոսրովի ներկայացուցչին, գրավոր ուղերձը, որտեղ Մուհամմադը կոչ է անում նրան դառնալ դեպի իսլամը՝ վստահեցնելով, որ դա ներում կրերի Բահրեյնի քնակիչների մեղքերին<sup>93</sup>:

Եմենում նոր կրոնի տարածման և ամրապնդման գործում մեծ դեր ունեցավ Նաջրանի քրիստոնյա քնակչության հետ Մուհամմադի կնքած պայմանագիրը: Արաբական թերակղզու քրիստոնյա, հրեա քնակչությանը Մուհամմադի շնորհած պայմանագրերն ունեն բացառիկ նշանակություն իսլամի հետևորդների ու նրանց նվաճած ժողովուրդների փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրության տեսակետից, քանի որ դրանք հետագայում մեծ դեր են խաղացել երկու կողմերի միջև սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունների կարգավորման գործում: Բանակցությունների համար Նաջրանից Մադինա է ժամանում պատվիրակություն, որը քաղկացած էր վաթսուն հոգուց: Պատվիրակության անդամներից էին եպիսկոպոս Աբու Հարիս իբն ալ-Քամանն ու Սայիդ Քուրբ իբն ալ-Քամանը: Մուհամմադը նրանց ընդունում է մզկիթում և առաջարկում դավանափոխ լինել, սակայն պատվիրակության անդամները չեն ընդունում նրա առաջարկը<sup>94</sup>: Նաջրանի քրիստոնյաների հետ Մուհամմադի կնքած պայմանագրի մասին վկայում են 9-12-րդ դարերի մուսուլմա-

<sup>93</sup> الطبري، تاريخ الرسول والملوك، الجزء الثالث، ص. 1600، البلاذري، فتوح البلدان، ص. 80

<sup>94</sup> ابن هشام، Erster Band. Erster Theil, s. 401: البلاذري، فتوح البلدان، ص. 71

նական միջնադարյան աղբյուրները<sup>95</sup>: Այդ պայմանագրի մասին հիշատակում է նաև միջնադարյան քրիստոնեական ժամանակագրության անանուն հեղինակը<sup>96</sup>:

Մուսուլման պատմագիրները մեջբերում են պայմանագրի տեքստը կամ միայն հիշատակում այն: Տարբեր հեղինակների աշխատություններում փաստաթղթի բովանդակության նույնականությունը հիմք է տալիս ենթադրելու, որ «մուսուլմանական» բոլոր տարբերակները հանգում են մեկ սկզբնաղբյուրի: Տեքստի բովանդակության առումով նմանատիպ են պայմանագրի օրինակները, որ հիշատակում են Աբու Յուսուֆը և ալ-Բալազուրին:

Ըստ հետազոտողների՝ Աբու Յուսուֆի մոտ առկա պայմանագրի տեքստն ավելի մոտ է բնագրին, չնայած այս վարկածը կարիք ունի տեքստաբանական լուրջ հետազոտությունների<sup>97</sup>:

Պայմանագրում նշվում է, որ Ալլահի առաքյալ Մուհամմադը հարկ է դնում բնակչության բերքի, ոսկու, արծաթի, տնային իրերի, ստրուկների վրա և բնակչության նկատմամբ բարենհան կլիխի, եթե վերջիններս որպես խարաջ (պայմանագրի բնագրում այն օգտագործվել է գլխահարկի իմաստով) վճարեն հազար հազուստ ամեն ռաջաբ ամսին և հազար հազուստ՝ ամեն սաֆար ամսին:

Յուրաքանչյուր հազուստի արժեքը մեկ ունցիա էր (ուկիյա) 7-րդ դարում Մադինայում օգտագործվող ուկիյան հավասար էր քառասուն դիրհեմի կամ չորս դինարի, այսպիսով՝ երկու հազար հազուստը հավասար էր ութ հազար դինարի<sup>98</sup>: Նաջրանցիները պարտավորվում էին Մուհամմադի պատգամա-

<sup>95</sup> نامه ها و بیامتهای سیاسی، ص. 228.

<sup>96</sup> *Siis Histoire Nestoïrenne (Chronique de Seert)*, seconde partie (II), publiée et traduite par Addai Sher, Paris, 1918, p. 601-617.

<sup>97</sup> Большаков О., История Халифата, т. I, с. 266.

<sup>98</sup> *Siis* նույն տեղը:

րենքներին միայն մեկ ամսով կացարան հատկացնել, մարգարեի համայնքին տալ երեսուն օղագրահ, երեսուն ծի, երեսուն ուղտ կամ այլ ապրանքներ: Պետք է բացառվեին խարդավանքներն ու դավաճանությունները: Նաջրանը, նրա շրջակայքը, քաղաքի քնակիչների կյանքը, հավատքը, հողը, ունեցվածքը, քարավանները, եկեղեցիներն անցնում էին Ալլահի հովանավորության տակ՝ վայելելով Ալլահի առաքյալ և մարգարե Մուհամմադի պաշտպանությունը: Վերջինս երաշխավորում էր, որ չնն փոխվի նրանց սովորույթներն ու կենսակերպը: Եպիսկոպոսը չէր հեռացվի իր եպիսկոպոսությունից, վանականը՝ իր վանականությունից, և հոգևորականը՝ իր հոգևորականությունից: Նաջրանցիները պատասխանատվություն չէին կրում անցյալում կատարած ծանր արարքների համար: Նրանք չպետք է զորքում ծառայեին, տասանորդ վճարեին: Նաջրանի քնակիչների իրավունքների մասին հարցը պետք է լուծվեր արդարությամբ. Նաջրանում չպետք է լինեին վշտացածներ և վշտացնողներ: Մուհամմադը, սակայն, զգուշացնում էր, որ քաղաքի քնակիչները չպետք է զբաղվեին վաշխառությամբ, հակառակ դեպքում՝ կզրկվեին իր հովանավորությունից: Նաջրանի քրիստոնյա քնակչության վրա տարածվում էր Ալլահի հովանավորությունը և Մուհամմադ մարգարեի պաշտպանությունը՝ հավիտյանս հավիտենից, մինչև Ահեղ Դատաստան: Վերջում ամրագրվում էին պայմանագրի կնքման ժամանակ ներկաների անունները՝ «Աբու Մուֆյան իրն Հարր, Ղալլան իրն Ամր, Մալիք իրն Աուֆ, ալ-Նասրի, Ադրա իրն Հարիս ալ-Խանգալի և ալ-Մուդիրա»<sup>99</sup>: Մուհամմադի հաղթանակից հետո հին թշնամիները (Աբու Մուֆյան) ոչ միայն բարեկամ դարձան, այլև եռանդուն մասնակցություն ունեցան խալամական պետու-

<sup>99</sup> Sīnū Xrestomatīyā po istoriī Khalīfata, sostovīl i perevodīl L. Nadiyradze, izdatel'stvo moskovskogo universiteta, Moskva, 1968, s. 85.

թյան կայացման գործում: Այս պայմանագիրը վերաբերում էր միայն Նաջրան քաղաքի բնակչությանը, քանի որ գլխահարկը վճարվելու էր ոչ թե գյուղատնտեսական մթերքներով, այլ Նաջրանում պատրաստված հագուստներով:

Բացի պայմանագրի այս տարրերակից, որը պահպանվել է 9-12-րդ դարերի մուսուլման պատմագիրների երկերում, գոյություն ունի նաև այս պայմանագրի այլ տարրերակ. այն գետեղված է անանուն «Նեստորական պատմության» մեջ, որը լույս է տեսել 20-րդ դարասկզբին: Պայմանագիրը կազմվել է հիջրայի 265 (878-879) թվականին:

Պայմանագրի այս երկրորդ տարրերակը նշանակալիորեն տարբերվում է մեզ հայտնի «մուսուլմանական» տարրերակից: Տարբերությունն ամենից առաջ ծավալի կառուցվածքի և ոճի մեջ է:

Պայմանագրի «քրիստոնեական» տարրերակը բաղկացած է հարաբերականորեն ինքնուրույն և զրեթե հավասար մասերից: Ժամանակագրության հեղինակն առաջին մասն անվանում է պայմանագիր (ահդ), երկրորդ մասը՝ հրաման կամ ֆերման: Մանրամասնորեն շարադրվում են այն պատճառները, որոնք դրդել են Մուհամմադին՝ պայմանագիր կնքելու հատկապես քրիստոնյաների և ոչ մյուսների հետ: Ի տարբերություն պայմանագրի «մուսուլմանական» տարրերակի, որը նախատեսված է միայն Նաջրան քաղաքի քրիստոնյա բնակչության համար, այստեղ Մուհամմադն Ալլահի ու իր անունից պայմանագիր է կնքում բոլոր նրանց հետ, ովքեր դավանում են քրիստոնեական կրոնը<sup>100</sup>: Այն կնքվում է մուսուլմանների հաջորդ սերունդների համար ևս, որպեսզի նրանք ճանաչեն քրիստոնյաների իրավունքներն ու վերջիններիս վերջնեն

<sup>100</sup> Колесников А., *Две версии договора Мухаммада с христианами Наджрана*, Палестинский сборник, вып. 28(91), с. 25.

իրենց հովանավորության ներքո: Քրիստոնյաները պետք է պայմանագրի կետերը կատարեն ու պահպանեն: Իսկ նա, ով խախտի այս պայմանագիրը, փոխի այն, կզրկվի Ալլահի ու նրա մարգարեի հովանավորությունից: Ըստ այս պայմանագրի՝ հիմնական պատճառներից մեկը, ինչը դրդել է Մուհամմադին նման պայմանագիր կնքելու քրիստոնյաների հետ, նրանց բարեպաշտությունն է, որը պարտավորեցնում է մուսուլմաններին իրենց հերթին հավատարիմ մնալ այս պայմանագրին: Այնուհետև խոսվում է հրեաների նրդմնագանցության մասին, որոնք չարությամբ են լցված Ալլահի ու նրա առաքյալի նկատմամբ և ժխտում են վերջինիս արժանիքները: Կարելի է ենթադրել, որ Մուհամմադի ու հրեաների հարաբերություններն արդեն լարված են եղել, և այդ շրջանում Մուհամմադն առավել համակրանքով է վերաբերվել քրիստոնյա ժողովուրդներին, քան հրեաներին: Թվարկվում են Մուհամմադի մոտ եկած քրիստոնյա վանականների անունները՝ ալ-Մայյիդը (ալ-Հասանի), Արդիշո իբն Հաջրան, Աբրահամ վանականը, Իսա եպիսկոպոսը՝ քառասուն հեծյալների ուղեկցությամբ Նաջրանից, նաև ուրիշ հավատակիցներ՝ քրիստոնեություն դավանողների արարական և ոչ արարական հոդերից: Վերջիններս խոստանում են, որ, վերադառնալով իրենց դավանակիցների մոտ, նրանք հավատարիմ կմնան պայմանագրին՝ չխախտելով այն, չփոխելով իրենց վարքը և առաջարկելով իրենց օգնությունը հրեաների դեմ պատերազմում: Շեշտվում է, որ «քրիստոնյաները Մուհամմադի հավատի նկատմամբ իրենց հավատարմության մեջ հավատարմում են հրեաներին ու հեթանոսներին»<sup>104</sup>:

Շեղիսակն այնուհետև անցնում է պայմանագրի նրկորդ

<sup>104</sup> Histoire Nestoienne (Chronique de Seert), seconde partie (II), publiée et traduite par Adolai Sher, Paris, 1938, p. 601-617:



մասին՝ բուն նյութին, որտեղ շարադրված են երկկողմ պարտավորությունները: Մուհամմադը պայմանագիր է կնքում Ալլահի անունից, և այդ պատճառով էլ նրա պահպանումը պարտադիր է բոլորի համար:

Ուղերձը հղվում է ալ-Մայիդ իբն Հարիս ալ-Քաաբին, նրա համայնքի մարդկանց, բոլորին, ովքեր աշխարհի բոլոր կողմերում դավանում են քրիստոնեական հավատը: Այստեղ նշվում է ամենակարևորը՝ այն, որ այս պայմանագիրը և՛ պահպանագիր է, և՛ գթություն, և՛ արդարություն ու հովանավորություն: Ով պահպանի ու կատարի այն, նա ընդմիշտ ձեռք կրերի Մուհամմադի պաշտպանությունը: Այս ուղերձում Մուհամմադը պահանջում է Իսրայելի որդիներից (նկատի ունի բացառապես քրիստոնյաներին) հնազանդություն, հավատարմություն՝ փոխարենը խոստանալով գործով պաշտպանել նրանց իր երկրի սահմանամերձ շրջաններում և երաշխավորելով նրանց եկեղեցիների, ժամատների, աղոթարանների, վանականների կացարանների անվտանգությունը: «Չեն քանդվելու նրանց եկեղեցիներն ու աղոթարանները, ոչ մի շինություն չպետք է մզկիթ դառնա: Վանականներն ու հոգևորականները, մազն զգեստ հագնողները (քրիստոնյա ճգնախորհները, աստպատականները), ովքեր ապրում են լեռներում, չպետք է հարկ վճարեն»<sup>102</sup>: Մնացած քրիստոնյաները, ովքեր չեն պատկանում հոգևոր դասին, պետք է վճարեն տարեկան միայն չորս դիրհեմ կամ շերտավոր կտորից հազուստ, կամ նրա արժեքը: Պետք է նշել, որ այս կետը բացակայում է պայմանագրի առաջին տարբերակում:

Այն քրիստոնյաները, ովքեր ունեն խոշոր կալվածքներ, հուտեր ու նախիրներ և ցամաքում ու ծովում՝ մեծ առևտուր,

102. شهاب ق. د. المركز القومي للأبحاث في سوربة. المطبعة الجديدة، دمشق، 1406 هـ، 1985 م، ص. 10-9.

մշակում էին թանկարժեք քարեր, տարեկան պետք է վճարեին տասներկու դիրհեմ<sup>103</sup>: Հողահարկն ու գլխահարկը պետք է գանձվեր նաև նրանցից, ովքեր ժառանգությամբ հող էին ստացել: Հարկերից ազատվում էին ճամփորդները: Քրիստոնյաներին չէր պարտադրվում մասնակցել պատերազմներին, օգնել մուսուլմաններին զենքով կամ ձիերով: Արգելվում էր նրանց բռնի ուժով դավանափոխ անելը. քրիստոնյաներն ունեին այն նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ մուսուլմանները: Պայմանագրում խոսվում է նաև քրիստոնյաների և մուսուլմանների ամուսնության մասին, որը չպետք է պարտադրված լինի: Մուսուլմանի հետ ամուսնացող քրիստոնյա կինը կարող է պահպանել իր հավատը: Քրիստոնյաները չպետք է նախկինում կատարած հանցանքների համար պատասխանատվություն կրեն: Պատերազմի ժամանակ չպետք է տեղեկություններ հաղորդեն մուսուլմանների կամ նրանց թշնամիների օգտին: Քրիստոնյաները երեք օր ու գիշեր օթևան պետք է տան մուսուլմաններին, նրանց անասուններին: Անիրաժեշտության դեպքում պետք է մուսուլմանին թաքցնեն իրենց տանը, կերակրեն և չհանձնեն թշնամուն:

Պայմանագրի վերջում բերվում են այն երեսուներկու վկաների անունները, ովքեր ներկա են եղել պայմանագրի կնքմանը: Հիշատակվում են չորս արդարադատ խալիֆաների անունները: Վկաներից ոչ մեկի անունը չի համընկնում պայմանագրի «մուսուլմանական» տարբերակի վերջում բերված վկաների անունների հետ, որոնք ընդամենը հինգն են: Եվ դա ընական է, քանի որ, ամենայն հավանականությամբ, պայմանագրի «քրիստոնեական» տարբերակը կազմվել է ավելի ուշ շրջանում, և պայմանագրին հանդիսավորություն ու լրջու-

<sup>103</sup> Մանրամասները տես Гирсас В., Права христиан на Востоке по мусульманским законам, с. 24-25

թյուն հաղորդելու համար վերջում ավելացվել են խալիֆաների անունները:

Անցնելով «մուսուլմանական» և «քրիստոնեական» տարբերակների համեմատական բնութագրին՝ նշենք, որ առաջինի բովանդակությունն ու կառուցվածքը համընկնում են արաբական նվաճումների նախօրյակին և այդ տարիներին կազմված ու նույն թեման շոշափող պայմանագրերի բովանդակության և կառուցվածքի հետ. դրանք հայտնի են միջնադարյան մուսուլման պատմագիրների երկերից: Պայմանագրի այս տարբերակում թվարկվում են Նաջրանի քրիստոնյաների կոնկրետ պարտականությունները՝ վճարել նշված հարկը, էմենում ապստամբություն բռնկվելու դեպքում օգնություն ցույց տալ մուսուլմաններին: Այս դեպքում երաշխավորվում է քաղաքի բնակիչների կյանքի, գույքի, հողի, եկեղեցիների ապահովությունը, բացառվում կրոնի հարցերին և ներքին գործերին որևէ միջամտություն: Հոգևոր դասը պահպանում է իր դիրքն ու իրավունքները:

Վկաների անունները թվարկված են երկրորդ մասի վերջում, այդ պատճառով երկու մասերն էլ, չնայած եղած տարբերություններին, ներկայացվում են որպես մեկ միասնական ամբողջություն:

Իհարկե, Մուհամմադի և Նաջրանի քրիստոնյաների միջև կնքված այս երկու պայմանագրերից ավելի հավաստի է առաջինը: Պայմանագրի «քրիստոնեական» տարբերակն ունի մի շարք հատկանիշներ, որոնք հիմք են տալիս պնդելու, որ այն թվագրվում է ավելի ուշ ժամանակաշրջանով: Նախաբանը (պայմանագրի առաջին մասը) իր բովանդակությամբ ավելի շատ հիշեցնում է քարոզ: Այն առատ է Ղուրանից արված մեջբերումներով և համեմատություններով: Վկաների շարքում

հաջորդաբար նշվում են չորս արդարադատ խալիֆաների անունները՝ Աբու Բաքր, Օմար, Օսման, Ալի<sup>104</sup>:

Նաջրանի բնակչության հետ կնքած պայմանագիրը բոլոր քրիստոնյաների համար ընդհանուր դարձնելու ձգտումն ակնհայտ է, և այս առումով այն հակադրվում է առաջին տարբերակին:

Արդեն նշվել է, որ Արաբական թերակղզու քրիստոնյա և հրեա բնակչության հետ Մուհամմադի կնքած պայմանագրերում չի նշվում գլխահարկի չափը, որ հաճախ գանձվում էր բնամթերքով՝ կախված տվյալ շրջանի բնական հարստություններից: Օրինակ՝ բանի ուրիդ հրեական ցեղին տրված պայմանագրում նշվում է բնահարկի չափը՝ տասն ուղտաբեռ ցորեն, տասն ուղտաբեռ գարի, ամեն տարի հիստոն ուղտաբեռ ցորեն<sup>105</sup> և այլն: Եթե Այլայի բնակիչները պետք է վճարեին երեք հարյուր դինար, ապա Ջարբայի և Ազրուիի բնակիչները՝ հարյուրական: Իսլամի հաստատման առաջին տասնամյակներում նման մոտեցումը գալիս էր տվյալ քաղաքի կամ շրջանի բնակիչների վճարունակության աստիճանից:

Այս ժամանակաշրջանում դեռևս մշակված չէր հարկերի, մասնավորապես՝ գլխահարկի գանձման հստակ մեխանիզմ: Այն կանոնակարգվեց և իր ավարտուն տեսքն ստացավ Արբայանների օրոք, և գրի առնվեց մուսուլմանական կրոնաիրավական համակարգի մի շարք ներկայացուցիչների՝ Մալիքի, Շաֆեի, Աբու Հանիֆայի աշխատությունների մեջ<sup>106</sup>:

<sup>104</sup> Sbu Колесников А., *նշված աշխատ.*, էջ 32-33:

<sup>105</sup> 73 *كتاب الفتوح البلدان* ص.

<sup>106</sup> Sbu Mülller A., *История ислама с основания до новейших времен*, т. I, перевод с немецкого под ред. Н. Медникова, издательство Л. Ф. Пантелеева, С. Петербург, 1895, с. 301, Sbu-Ղևոնդյան Ա., *Հայ ժողովրդի իրավական վիճակը Խալիֆայության տիրապետության ներքո, Հոդվածների ժողովածու*, էջ 300-302:

Ըստ մի շարք հետազոտողների՝ Նաջրանի քրիստոնյաների հետ Մուհամմադ մարգարեի կնքած պայմանագրի «քրիստոնեական» տարբերակի ստեղծման ժամանակագրական շրջանակները ձգվում են 7-րդ դարի կեսից մինչև 9-րդ դարի առաջին կեսը: Ըստ նրանց՝ Նաջրանի պայմանագրի «քրիստոնեական» տարբերակի ի հայտ գալն Արարական խալիֆայության կազմի մեջ մտնող քրիստոնյա մի շարք երկրների բնակչության բողոքի արտահայտությունն էր քրիստոնեական եկեղեցու իրավունքներն ու շահերը ոտնահարող մուսուլմանական իշխանությունների ոտնձգությունների դեմ<sup>107</sup>: Կարծում ենք՝ այս պայմանագրի «քրիստոնեական» տարբերակի ստեղծման նպատակը մուսուլմանների գերիշխանության ներքո քրիստոնյա հպատակների իրավունքների անբացարձակ էր: Չնայած որ այս տարբերակը կազմվել է ուշ շրջանում, այն արժեքավոր աղբյուր է վաղ շրջանի քրիստոնեության պատմության ուսումնասիրության համար, և կարծում ենք, որ «քրիստոնեական» տարբերակի ստեղծման համար որպես աղբյուր է ծառայել հենց մուսուլման պատմագիրների գրի առած պայմանագիրը:

Անդրադառնալով պայմանագրի «մուսուլմանական» տարբերակին՝ նշենք, որ Մուհամմադի մահից հետո խալիֆա դարձած Աբու Բաքրը (632-634) հաստատեց Մուհամմադի այս պայմանագիրը և Նաջրանի բնակչությանը տվեց նոր պայմանագիր, որով նույնպես հաստատվում է Ալլահի ու նրա մարգարեի կողմից քրիստոնյա բնակչության, նրա ունեցվածքի, կրոնի, հոգևորականների, եկեղեցիների հովանավորությունը: Հոգևոր դասի իրավունքները մնում են անփոփոխ. նրանք չպետք է հարկ վճարեն, հեռացվեն իրենց պաշտոններից:

<sup>107</sup> Sbu Колесников А., Две версии договора Мухаммада с христианами Халд-жана. Палестинский сборник, вып. (28)91, с. 32-33:

Պայմանագրի վերջում բերվում են վկաների անունները՝ «ալ Մուստավրիդ իբն Օմարը՝ բանու ալ կայս ցեղից, Ամրը՝ Աբու Բաքրի ծառան, Ռաշիդ իբն Հուզայֆան, ալ-Մուդիրան»<sup>104</sup>:

Այնուհետև Օմար I խալիֆայի օրոք Նաջրան քաղաքի քնակիչները գալիս են նրա մոտ և խնդրում վերահաստատել Աբու Բաքրի՝ իրենց տված պայմանագիրը: Օմար խալիֆան, որ առանձնանում էր քրիստոնյաների նկատմամբ իր զգուշավոր վերաբերմունքով, դրա մեջ վտանգ է տեսնում մուսուլմանների համար<sup>105</sup>: Նա Էմենի Նաջրան քաղաքի քնակիչներին տեղահան է անում ու քնակեցնում Իրաքի Նաջրանում՝ հրամայելով նրանց այնքան հողատարածքներ հատկացնել, որքան նրանք ունենին Էմենում: Օմար խալիֆան քաղաքի քնակիչներին տալիս է պայմանագիր, որով կոչ է արվում ընդունել իսլամը, քանի որ միայն այդ դեպքում նրանք կարող են ապրել իրենց քաղաքում<sup>106</sup>, հակառակ դեպքում նրանք կզրկվեին խալիֆայի հովանավորությունից և պաշտպանությունից:

Գուցն ճշմարիտ է պատմության մեջ պահպանված այն փաստը, որ Օմարը նրկություն էր քրիստոնյաների ուժից, և այդ էր պատճառը, որ նրանց հարկադրեց տեղափոխվել Իրաք: Այսպիսի տարափոխություն էր ստանում Մուհամմադի պայմանագրերին քնորոշ հանդուրժողականությունը և դանդաղ ու հետևողականորեն մոլեռանդության տարրեր էր ձեռք բերում:

Օմարի մահից հետո Նաջրանի քնակիչները Օսման խալիֆային (644-656) նույնպես խնդրում են հաստատել վերոհիշյալ պայմանագիրը: Օսման խալիֆան իր փոխանորդ Վալիդ իբն Ուքբայի անունով մի պայմանագիր է գրում: Այնտեղ

<sup>104</sup> 1981-1987 թ. الجزء الثالث، تاريخ الرسول والملوك، خستوماتيا по истории Халифата, с. 85-86.

<sup>105</sup> Die Culturgeschichte des Orients unter den Chalifen, von A. von Kremer, band I, Wien, 1875, s. 10.

<sup>106</sup> نامه ها و بیامتهاي سياسي، ص. 242

նշվում է, որ Իրաքի Նաջրան քաղաքի հոգևորականներն ու բնակիչները եկել են խալիֆայի մոտ և բողոքել Օմարի կողմից իրենց վրա դրված հարկերից: Գլխահարկը, որ գանձվում էր հագուստներով, Օսմանը նվազեցրեց երեսուն կտորով և որպես նաջրանցիների սեփականություն ճանաչեց այս բոլոր հողերը, որ նրանց տրվել էր Օմարի կողմից: Պայմանագրում նշվեց, որ բնակիչներն օգտվում են Ալլահի և խալիֆայի հովանավորությունից ու պաշտպանությունից, և որ մուսուլմանների ու քաղաքի քրիստոնյա բնակչության միջև պետք է հաստատվեն բարիդրացիական հարաբերություններ: Այսպիսով, Օսման խալիֆան հաստատեց Օմարի՝ նաջրանցիներին տված պայմանագիրը, որի մասին հիշատակում են Աբու Յուսուֆը, Աբու Ռեայդան, ալ-Բալազուրին<sup>31</sup>: Աբու Յուսուֆը գրում է, որ հետագայում խալիֆա Ալի Իբն Աբու Տալիբը (656–661) նույնպես հաստատեց այս պայմանագիրը, երբ նրա մոտ եկան Իրաքի Նաջրան քաղաքի բնակիչները:

Պարզ է դառնում, որ դեռևս վաղ միջնադարում քրիստոնյաները (մասնավորապես՝ հոգևոր դասը) Մուհամմադի անունով շրջանառության մեջ են դրել պայմանագրեր՝ իրենց իրավունքները մուսուլման իշխողների ոտնձգություններից պաշտպանելու համար: Կարելի է փաստել, որ Նաջրանի քրիստոնյաների հետ Մուհամմադի կնքած պայմանագրի «քրիստոնեական» տարբերակն իր հերթին հիմք է ծառայել, հետագայում քրիստոնյա տարբեր համայնքներ Մուհամմադի անունով պայմանագրեր շրջանառության մեջ դնեն, որոնց հիմնական դրույթները, և երկկողմ պարտավորությունները, ինչպես հետագայում կտեսնենք, համընկնում են այս, առաջին, նախնական տարբերակի հետ:

<sup>31</sup> Տես նույն տեղը, էջ 248:











**I**  
**ՄՈՒՏԱՄԱԳԻ ԵՎ ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԻՃԽԱՆՎՈՐԵՆԻ՝**  
**ԵՐՈՒՍԱԳԵՄԻ ԲԱՅՈՑ ԲԱՄԱՅՆՔԻՆԵ ԿՎԱՍՑ**  
**ԳԱՆՆՈՎՐԵՐԸ**

**Մ**ուսուլմանական դաշնագրերի ուսումնասիրության հարցում առանձնահատուկ նշանակություն ունի Երուսաղեմի քրիստոնյա, մասնավորապես՝ հայկական համայնքին տրված պայմանագիրը, որը հաստատել է սկզբում Ալի իբն Աբու Տալիբը, և հետագայում՝ Օմար խալիֆան և Այյուբյան հարստության հիմնադիր Մալահ ալ-Դինը (1171–1193):

Երուսաղեմի պատմության մեծ գիտակ եպիսկոպոս Աղավնունին գրում է, որ քրիստոնեության հաստատման վաղնշական ժամանակներից հայ ուխտավորներ էին այցելում Երուսաղեմ: Հայոց Անաստաս վարդապետը իշխան Համազասպ Կամարականի խնդրանքով այցելել է Երուսաղեմ և կազմել տեղի հայկական վանքերի ցուցակը, որոնց թիվը հասնում էր յոթանասունի<sup>102</sup>: Նրա երկը մնզ է հասել ուշ շրջանի ձեռագրերով<sup>103</sup>: Այս երկին անդրադարձել է նաև Ղ. Իսմիճյանը՝ կատարելով մեջբերումներ, որ դեռևս Տրդատ արքայի (287–330) թագավորության և ս. Գրիգոր Լուսավորչի (302–326) հայրա-

<sup>102</sup> Հմմտ. Աղանունի Մ., Հայկական հին վանքեր և եկեղեցիներ սուրբ Երկրին մէջ, ուսումնասիրութիւններ, տպարան Սրբոյ Յակոբեանց, Երուսաղեմ, 1931, էջ 150:

<sup>103</sup> Ամենավաղ ժողովածուն, որտեղ նշված է բնագիրը, Մատենադարանի 1770 թվաթամարը կրող գրչագիրն է՝ ընթրիխանեված 1589 թվականի մի ձեռագրից, որն էլ իր հերթին կազմվել է 1425 թ. (տևս Չորանյան Պ., Անաստաս վարդապետի կազմած Երուսաղեմի հայկական վանքերի ցուցակի հարցերի շուրջ, Պատմա-քանասիրական հանդես, 1(156), ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2001, էջ 28):

պետության օրոք «մեծամեծք հայոց շինեցին վանորայք ի սուրբ քաղաքն յերուսաղէմ»: Նա նշում է, որ «քազմութիւն ուխտաւորաց ի մերոց հայկազանց յաճախեին գնալ անդր եւ նմին իրի դէպ լիներ այլ եւ այլ նախարարաց զանազան վանորայս լինել ի դիւրութիւն քնակութեան ուխտաւորաց իւրաքանչիւր ցեղից յուրոյն ուրոյն վանս»<sup>14</sup>: Տ. Սավալանյանը ևս նշում է, որ Երուսաղեմում «Կոստանդիանոսի ու անոր մոր՝ Հեղինէին ընծայուած Ս. Տեղեաց շինութիւններուն ըստ ազգային աւանդութեան, մասնակից եղած է մերս Տրդատ»<sup>15</sup>՝ նկատի ունենալով Անաստաս վարդապետի երկը: Մի շարք հետազոտողներ Անաստասի երկը թվագրում են 7-րդ դարով:

5-6-րդ դդ. Երուսաղեմի հայոց վանքերի շքեղության մասին են վկայում 19-րդ դարի վերջերին Երուսաղեմի տարբեր հատվածներում կատարված շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված հայատառ սքանչելի խճանկարները<sup>16</sup>, Երուսաղեմի վանքերի ու եկեղեցիների բազմաքանակության մասին է վկայում նաև Անտիոք Ստրատիգը<sup>17</sup>:

4-5-րդ դդ., իստկապես Ս. Հակոբ եկեղեցու կառուցումից հետո, հայ վանականներն իրենց հոգևոր իշխանությունը տարածեցին Պաղեստինի, Սիրիայի, Եգիպտոսի հայ բնակչության վրա: Այս շրջանում հայ առաքելական եկեղեցին

<sup>14</sup> Իսմիրնեան Ղ., Հաթիսուրբին աշխարհագրական Հայաստանեաց աշխարհի, հատոր Բ, ի տպարանի Մրբոյն Յակոբի, Վենետիկ, 1835, էջ 199:

<sup>15</sup> Սաւալանեանց Տ., Պատմութիւն Երուսաղեմի, գրաքար քնագիրէն աշխարհարարի վերածեց Մ. Եպիսկոպոս Նշանեան, հատոր I, տպարան սրբոյ Յակոբեանց, Երուսաղէմ, 1931, էջ 212 (այսուհետ՝ Սավալանյան Տ., Պատմություն Երուսաղեմի):

<sup>16</sup> Տևն Հովսեփյան Գ., Նշուքեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հատոր Բ, ՀՍՍՀ ՊԱ հրատարակչություն, Երևան, 1987, էջ 340-342:

<sup>17</sup> Հմմտ. Стратиг А., Палестина Иерусалима персами в 614 г., тип. Импер. Академии наук, С. Петербург, 1909, с. 25-29:

ընդդիմացավ Բյուզանդական կայսրության փորձերին, որը ձգտում էր «եկեղեցիների միասնության» դրոշի ներքո գրկել Հայաստանի բնակչությանը քաղաքական ինքնուրույնությունից: 6-րդ դարում Երուսաղեմի Ա. Հակոբ եկեղեցու հիմքի վրա ստեղծվեց հայկական թեմը: Այս շրջանում Երուսաղեմի հայ և հույն եկեղեցիների միջև, դավանաբանական վեճերից բացի, պայքար էր գնում ստանձնելու Երուսաղեմի սրբավայրերի և միասնական քրիստոնեական եկեղեցու ղեկավարությունը: Այս պայքարի ընթացքում հայոց եկեղեցին մեծ ճնշումների ենթարկվեց, որի մասին հիշատակում է Ասատուս վարդապետը<sup>108</sup>, ինչպես նաև Երուսաղեմի՝ ծագումով հույն Հովհաննես եպիսկոպոսապետը (575–593): Նա Աղվանից Աբաս կաթողիկոսին (552–596) ուղղած նամակում<sup>109</sup> գրում է, որ քաղաքի հայերը «մին հալածեալքն առ թագաւորն գնացին՝ ասելով, եթէ հալածեաց ըզմեզ հայրապետն Երուսաղեմի»: Հովհաննես եպիսկոպոսն իր նամակում հաստատում է, որ հայոց իշխաններն այցելել են Երուսաղեմ և փորձել հայոց վանքերը պաշտպանել ոտնձգություններից: Ուշագրավ է այն, որ նա նաև հաստատում է հալածանքի փաստը, որն իրագործվել է ոչ միայն Երուսաղեմի հայոց, այլև աղվանական վանքերի և հոգևորականության նկատմամբ<sup>110</sup>:

Երուսաղեմի հայ համայնքի դավանական կողմնորոշման խնդիրը սրվեց հատկապես 6-րդ դարի 2-րդ կեսին, որի պատճառով էլ Ասատուս վարդապետը Համազասպ իշխանի

<sup>108</sup> Ալիշան Ն., Հայապատում, Պատմիչք եւ պատմութիւնց հայոց, մաս Բ, Ի վանս Մուրք Ղազարու, Վենետիկ, 1901, էջ 229, տես նաև Հովհաննեսիայն Ն., Աբարական երկրների պատմություն, հատոր I, էջ 87:

<sup>109</sup> Երուսաղեմի Յովհաննես եպիսկոպոսի թուղթը առ Աբաս աղուանից կաթողիկոս, հրատարակեց Կ. Վարդապետ, արստոտյան «Աբարատ» ամսագրից, տարբան Մայր աթոռոյ Ա. Էջմիածնի, Վարդարշապատ, 1896, էջ 3:

<sup>110</sup> Տես նախ տեղը, էջ 5:

խնդրանքով այցելեց Երուսաղեմ՝ գրի առնելու հայոց վանքերի ցուցակը: Այս բոլոր հիշատակությունները փաստում են, որ հայերը գործուն մասնակցություն են ունեցել քաղաքի տնտեսական, հոգևոր և մշակութային կյանքում<sup>121</sup>: Փաստորեն արաբական արշավանքների նախօրյակին Երուսաղեմի հայ հոգևորականությունը կայուն դերակատարում ուներ քաղաքի կյանքում: Նրա իրավասության տակ էին մի շարք սրբավայրեր, և այս հանգամանքը աննկատ չէր մնում արաբ նվաճողների կողմից: Կարելի է պնդել, որ մուսուլման պատմագիրների հիշատակած և Օմար խալիֆայի՝ Երուսաղեմի քրիստոնյա քնակչությանը տված պայմանագիրը ընդհանուր էր համարվում քաղաքի քրիստոնյաների համար: Ըստ Երուսաղեմի պատմության գիտակ Տ. Սավալանյանի «Պատմություն Երուսաղեմի» աշխատության՝ հայոց Աբրահամ պատրիարքը, տեսնելով մուսուլմանական կրոնի հաջողությունները Մուհամմադ մարգարենի օրոք, քրիստոնյաներից կազմված պատվիրակության հետ ժամանեց Մադիսա՝ ցանկանալով նրանից ստանալ հայկական համայնքի անվտանգությունն ապահովող փաստաթուղթ: Մարգարեն ընդառաջեց նրա ցանկությանը՝ «տալով ձեռքին դրոշմը կրող հառատարնագիր մը, վասնզի ինք անգրագետ էր»<sup>122</sup>: Այս պայմանագիրը տրվում էր «Երուսաղեմ ու Դամասկոս ու Արաբիոյ մյուս սահմանները գտնուող Հայոց եպիսկոպոսներուն ու վարդապետներուն եւ հպատակ ժողովուրդներուն, եթովպացիներուն, դպտիներուն եւ ասորիներուն»: Թվարկվում են հայ համայնքին տրված բոլոր սրբավայրերը Երուսաղեմում՝ Ս. Հարություն տաճարը, Ս. Հակոբ եկեղեցին, Ձիթենյաց վանքը, Բեթղեհեմի եկեղեցին և այլն,

<sup>121</sup> Հմմտ. Azarya V., *The Armenian Quarter of Jerusalem*, London, 1984, p. 57-59:

<sup>122</sup> <sup>122</sup> Սավալանյան Տ., նշված աշխատ. հատր I, էջ 26է:

որոնք հետագայում վեճի առարկա դարձան հայ և հույն եկեղեցիների միջև: Աբրահամ պատրիարքը ևս, իր հերթին, պարտավորվեց հարկեր վճարել մուսուլմանական համայնքին: Ըստ Տ. Սավալանյանի, սակայն, այժմ Երուսաղեմի պատրիարքարանի դիվանատանը չկա հիշյալ հավատարմագիրը, որի փոխարեն հին թղթի վրա գրված մի հրովարտակ կա, որը «ընագիրին պատճենը ըլլալ կը թուի և երեսուն վկաների ստորագրութիւնը կը կրն, որոնց մէջ է նաև Օմարի անունը»: Այն «հիճրէթի հաստատութենէն առաջ գրուած է, ուստի թուական ալ չի կրէր»<sup>123</sup>: Տ. Սավալանյանը նշում է, որ Մուհամմադի՝ Աբրահամ պատրիարքին տված պայմանագրի մասին հիշատակում է Եգիպտոսի Այյուբյան հարստության հիմնադիր Սալահ ալ-Դինը՝ Երուսաղեմի հայ միաբանությանը շնորհած իր հրովարտակում:

Նշենք, որ Տ. Սավալանյանի վերոհիշյալ երկի համար աղբյուրներ են Հին ու Նոր Կտակարանները և հայ պատմագիրների՝ Մեքենսի, Ղևոնդի, Ստեփանոս Ասողկի և այլոց երկերը, բազմաթիվ հրովարտակներ, հիշատակարաններ, ինչպես նաև Ջեքի Էդ-Դինի «Յաղթութիւն Երուսաղէմի» երկը: Վերջինս մուսուլմանական պատմագրությանը հայտնի չէ: Միայն Մ. Օրմանյանն է, որ հիշատակում է նման մի անձնավորության մասին. «Պաշմարճիզատէ Ջէքի Էֆէնտի», որը եղել է «օսմանցի քննիչ Երուսաղէմի սուրբ տեղեաց»<sup>124</sup>: Կա նաև տեսակետ, որ նա ծագումով արաբ չէր, այլ քրիստոնյա, որն արաբերենով է գրել իր ժամանակագրությունը<sup>125</sup>: Տ. Սավա-

<sup>123</sup> Սավալանյան Տ., նշված աշխատ. հատոր 1, էջ 262:

<sup>124</sup> Օրմանյան Մ., Ազգաբազառում: Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հատոր Ա, Բ, Գ, Մայր աթոռ Ա. Էջմիածին, 2001 պատշեմ՝ Օրմանյան Մ., Ազգաբազառում, հատոր Գ, պոնոակ 4055:

<sup>125</sup> Տես Սավալանյան Տ., նշված աշխատ. հատոր 1, էջ 413:

լանյանը նշում է, որ Մուհամմադ մարգարեից հետո՝ արաբական նվաճումների շրջանում, Աբրահամ պատրիարքը քառասուն հայ վանականների հետ դիմեց Ալի իբն Աբու Տալիբին, որ հաստատի Մուհամմադի՝ իրենց տված արտոնագրերը: Հեղինակը, հիմք ընդունելով Ջեքի Էդ-Դինի վերոհիշյալ երկը, գրում է, որ այս դեպքը եղել է Օմարի՝ Երուսաղեմը գրավելուց առաջ<sup>126</sup>: Նա նաև նշում է, որ 636թ., երբ Օմարը գրավեց Երուսաղեմը, քաղաքի հայկական համայնքին տրված Մուհամմադի պայմանագիրն ամրագրվեց նոր դաշնադրությամբ: Երբ Օմարը մոտեցավ քաղաքի պարիսպներին, նրա մոտ շտապեց քաղաքի հույն պատրիարք Սոֆրոնիոսի նղբայր Դետրոսը և խնդրեց նրանից ապահովության գիր՝ պարտավորվելով հարկ վճարել: Օմարը տվեց այդ պայմանագիրը, ըստ որի՝ ապահովության երաշխիք էր շտրիվում քաղաքի բնակիչներին, ունեցվածքին, եկեղեցիներին, որոնք չպետք է քանդվեին, և այնտեղ մուսուլմանները չպետք է բնակվեին: Հեղինակը գրում է, որ Երուսաղեմի հայ բնակիչներն էլ իրենց հերթին Օմարին ներկայացրին Մուհամմադի՝ քաղաքի հայկական համայնքին շտրիած պայմանագիրը: Խալիֆան, համոզվելով, որ փաստաթուղթը իսկական է, հաստատեց այն և տվեց նոր պայմանագիր, որն աննշան տարբերություններով կրկնում էր նախորդը: Օմար խալիֆայի՝ Երուսաղեմի հայկական համայնքին տված այս պայմանագիրը որոշ չափով համընկնում է մուսուլմանական պատմագրության մեջ վկայված Երուսաղեմի քրիստոնյա բնակիչներին տրված պայմանագրի կետերի հետ: Քաղաքից հեռացողներին խոստանում էին անվտանգություն, քաղաքում մնացողների գույքին՝ անձեռնմխելիություն: Հայ բնակիչները պետք է քաղաքից դուրս հանեին հույն ավագակներին ու լրտեսներին: Նրանք, ովքեր մնում էին

<sup>126</sup> Նույն տեղում, էջ 271:



քաղաքում, պետք է հարկ վճարեին, սակայն մինչև հունձքի շրջանը նրանցից ոչինչ չպետք է պահանջվեր: Պայմանագրում նշվում է Գրիգոր Ուրֆացու անունը (հավանաբար՝ Գրիգոր Ուոհայեցի կամ Ուոհացի), ով հպատակություն էր հայտնել Օմարին: Այս ամենը գալիս է մեկ անգամ ևս ապացուցելու, որ նվաճող արաբը զերծ չէր մարդասիրության դրսևորումներից: Արաբի հիմնական նպատակն ավերածությունն ու ջարդը չէր, մի նրևույթ, որ մենք տեսնում ենք մի քանի դար ուշ՝ թաթար-մոնղոլների նվաճումների ժամանակ, որի մտաին արաբ պատմիչ Իրն ալ-Ասիրը գրում է սահմոկեցուցիչ տողեր: Միջնադարյան նվաճող արաբին հատուկ էր երդմանը հաստատ մնալու, նախնյաց ասպետական «պատվի կողքը», որով հպարտանում էին անցյալում ավազուտների և դաժան քուական պայմաններում ապրող արաբական ցեղերը:

Տ.Սավալանյանի աշխատության մեջ քերվում է նաև Ջեքի Էդ-Դինի վկայակոչված Երուսաղեմի քրիստոնյա բնակչությանը Օմարի տված պայմանագրի տեքստը, որն իր բովանդակությամբ համընկնում է մուսուլման պատմագիրների (ալ-Տարաբի) հիշատակած պայմանագրի հետ: Երուսաղեմի հայկական համայնքի պատմությունն ուսումնասիրել են նաև Մ. Օրմանյանը, Ա. Հովհաննեսյանցը: Վերջինս իր պատմությունը շարադրել է՝ հենվելով հին և արդի հայ մատենագիրների թողած հիշատակությունների վրա, օգտագործելով Եգիպտոսի սուլթանների հրովարտակները: Նա, անդրադառնալով Օմար խալիֆայի՝ Երուսաղեմի քրիստոնյա և հայ բնակչությանը շտրիած պայմանագրերին, հիշատակում է նաև Օմար խալիֆային վերագրվող Ասորիքի քրիստոնյա բնակչությանը տրված պայմանագիրը, որով սահմանվում էին քրիստոնյաների պարտավորությունները մուսուլմանական համայնքի նկատմամբ: Օմարի կողմից Երուսաղեմը գրավելուց հետո

քաղաքի հայ եպիսկոպոսներն իրենց իրավունքներով ու լիազորություններով հավասարվեցին հույների պատրիարքին, և «...գրեթե կաթողիկոսական փոխանորդ էին Պաղեստինի և Ասորիքի մէջ՝ Եգիպտոսի սուլթանութեան հպատակ գաւառաց վրայ»<sup>27</sup>։ Մ. Օրմանյանը նշում է, որ 7-13-րդ դարերի ընթացքում Երուսաղեմի մատյաններում նշված են քսանմեկ հայ եպիսկոպոսների անուններ։ Հետագա դարերի ընթացքում էլ Երուսաղեմի հոգևոր առաջնորդները ձգտում էին մուսուլման իշխողներից առանձնաշնորհներ և արտոնություններ ձեռք բերել՝ անվտանգ դարձնելու համար հայկական համայնքի կյանքը։ Այսպես՝ Մ. Օրմանյանը գրում է, որ 1311-ին Երուսաղեմի աթոռակալ Սարգիսը (1281-1313) հայ համայնքի իրավունքները պաշտպանելու և իր դիրքերն ամրապնդելու համար դիմեց Եգիպտոսի սուլթան Նասր Մուհամմադին՝ ցույց տալով նրան Օմարի՝ հայ համայնքին շտրեհաձ պայմանագիրը։ Սուլթանը 1312-ին իր նոր հրովարտակով հաստատեց այն։ Սարգիսը մի անգամ էլ դիմեց սուլթանին՝ հաստատելու հայոց իրավունքները Երուսաղեմում, քանի որ վրաց եկեղեցին ցանկանում էր սեփականել Ս. Հակոբի վանքը և «տեր լինել հայոց հաստատություններուն»<sup>28</sup>։

1187-ին, երբ Այյուբյան հարստության հիմնադիր Սալահ ալ-Դինը մտավ Երուսաղեմ, այնտեղ կային մոտ հազար հայ ընտանիք և հինգ հարյուր հայ ուխտավոր։ Տ. Սալվաբանյանը նշում է, որ նրա մոտ է գալիս քաղաքի հայոց պատրիարք Աբրահամը (1179-1192)՝ իր հպատակությունը հայտնելու, նաև ցույց տալու Երուսաղեմի հայկական համայնքին՝ Օմարի, Ալի-ի շտրեհաձ պայմանագրերը։ Նա խնդրում է հասնուատել այս փաստաթղթերը նոր դաշնադրությամբ։ Սալահ ալ-Դինը նոր

<sup>27</sup> Օրմանյան Մ., Ազգապատում, հատոր Բ, սյունակ 2135:

<sup>28</sup> Նույն տեղում, սյունակ 2137:

հրովարտակ է շնորհում հայկական համայնքին, որով հաստատվում էին վերջինիս իրավունքները մի շարք սրբավայրերի ու եկեղեցիների նկատմամբ<sup>109</sup>:

Նշենք, որ հայ-արաբական վաղնջական շփումներին և Երուսաղեմի հայկական համայնքին Մուհամմադի ու նրա հաջորդների տված պայմանագրերին անդրադարձել են նաև ժամանակակից արաբ պատմաբանները:

Արաբ հետազոտող Մուհամմադ Ալի Հուրիյեն իր աշխատության մեջ հիշատակում է Տ. Սավաբայանսի նրկը՝ նշելով Մուհամմադի՝ Աբրահամ պատրիարքին, ինչպես նաև Օմարի՝ Երուսաղեմի հայկական համայնքին տված պայմանագրերի մասին, և գրում է, որ հայ-արաբական պայմանագրերի պատմությունը գալիս է դեռևս 652թ. Ասորիքի կուսակալ Մուավիայի և հայոց զորավար Թեոդորոս Ռշտունու կնքած փոխադարձ համաձայնագրի իրողությունից<sup>110</sup>:

Արաբ պատմաբանները (Ֆուադ Շուբատ) ևս հավաստում են, որ Օմարը, նվաճելով Երուսաղեմը, ապահովության գիր է տալիս հայկական համայնքին՝ նկատի ունենալով Մուհամմադի բարեհաճ վերաբերմունքը քրիստոնյաների նկատմամբ և նրա կողմից Երուսաղեմի հայկական համայնքին նրա տված դաշնագիրը<sup>111</sup>:

Մուհամմադ մարգարեի՝ Երուսաղեմի հայկական համայնքին տված պայմանագիրը մուսուլմանա-հայկական շփումնե-

<sup>109</sup> Տե՛ս Սավաբայանսի Տ., նշված աշխատ., հատոր I, էջ 408-413, Տիբ-Հոլ-հասենայանց Ա., Ժամանակագրական պատմություն Ա. Երուսաղեմի, հատոր Ա, էջ 155-163:

<sup>110</sup> معرض الكتاب العربي الأزمنى الأول تحت رعاية الدكتور علي الحوري، جامعة حلب، 1995، ص. 4

<sup>111</sup> شباط ف.، المركز القانوني للأجانب في سورية، ص. 11

րի ամենավաղ ապացույցն է և մատնանշում է հայերի՝ մուսուլմանների հետ փոխհամաձայնության գալու առաջին փուլը<sup>12</sup>:

Այսպիսով՝ կարելի է եզրահանգել, որ Երուսաղեմի հայկական համայնքին տված Օմարի պայմանագիրը, որի խկությունը հաստատել են հետագա դարերի մուսուլման իշխողները, ունի պատմական և փաստական ամուր ու կայուն հիմք: Հայկական համայնքը քրիստոնեության հաստատման վաղնջական ժամանակներից ի վեր ստեղծել է հարուստ մշակութային արժեքներ՝ գործուն մասնակցություն ունենալով քաղաքի հոգևոր և քաղաքական կյանքին: Այս փաստը անկաստ չի մնում: Օմար խալիֆան հայկական համայնքին տալիս է առանձնաշնորհումներ՝ ղեռն ս. Գրիգոր Լուսավորչի հայրապետության օրոք քաղաքի՝ հայերի կառուցած սրբավայրերի, եկեղեցիների, վանքերի համար: Այս մասին են վկայում Երուսաղեմի պատմության հայկական աղբյուրները:

Նշենք, որ Երուսաղեմի վրացական համայնքն էլ իր հերթին Օմար իրն ալ-խատտար խալիֆայից է ստանում իր անվտանգությունն ու ապահովությունը նրաշխավորող պայմանագիր:

637-ին՝ Երուսաղեմի գրավումից հետո, Օմար խալիֆան հատուկ հրովարտակով հաստատում է Երուսաղեմի քրիստոնյա համայնքի անվտանգությունը, որի մասին հիշատակում է 10-րդ դարի քրիստոնյա պատմագիր Եվտիքիոսը<sup>13</sup>:

Շնտազոտողների կարծիքով՝ Օմարն իր այս պայմանագրում հատուկ վերապահում է անում քաղաքի դպտի և վրացի բնակիչների համար, սակայն չեն բացառում, որ Եվտիքիոսը, կրոնական բանավեճի մեջ լինելով միաբնակ դպտիների հետ,

<sup>12</sup> Sisu Dadoyan S., *The Armenians in the Medieval Islamic world*, vol 1, New Brunswick and London, 2011, p. 52:

<sup>13</sup> Текст Евтикия, Медников Н., Палестина от завоевания ее арабами до крестовых походов по арабским источникам, Православный Палестинский сборник, 50-й вып., т. 17, вып. 2(4), с. 12:

քերում է Օմարի պայմանագրի տեքստը նշանակալի աղճատումներով ու աղավաղումներով:

Վրացիներն էլ հիշատակում են Օմարի՝ Ձիթենյաց լեռան վրա Երուսաղեմի եթովպացի, դպտի, վրացի և հայ քնակությունը տրված մեկ այլ պայմանագրի տեքստ: Այնտեղ նշվում է, որ վերոհիշյալ համայնքները խոստում են ստացել Մուհամմադ մարգարեից, քաղաքի պատրիարքը՝ Մոֆրոնիոսը, պայմանագրով ազատվում է գլխահարկից և ամեն տեսակի տուրքերից, իսկ քաղաքի քնակիչներն ստանում են կյանքի, գույքի, եկեղեցիների ապահովություն: Նրանք Կուսմամա եկեղեցին մտնելիս պատրիարքին հարկ պետք է վճարեն: Դաշնագրի վերջում նշվում են ներկաների անունները՝ Օսման իբն Աֆֆան, Մաադ իբն Ջադդ, Արդ առ-Ռահման իբն Աուֆ և այլք<sup>134</sup>:

Այսպիսով՝ Երուսաղեմի քրիստոնյա համայնքներին տրված այս բոլոր պայմանագրերն ապահովում էին նրանց անվտանգ կեցությունը, նրանց հարաբերությունները մուսուլմանական իշխանությունների հետ:

<sup>134</sup> Յ. ԵՃԵՏՆԱԺՅ, *Չախըջլեա ԵՃԻՇՅԻ ՄՅԻՆՃԱ ՅԻՆՃԱՅ VII ԵՂՂՅՆՅՈՆ ԵՃԻՇՆԱՅՅԵՆ ՅԻՆՃԵՃՅՈՒ, Չախըջլի ճՈՅՇԹՅՈՒՅ, Մ. 9, ԻՅՃ. Ի. ՄԵՃԻՃՅՅԵԼԻ, ԹԻՂՈՒՆԻ, 2002, ՃՅ. 335-385, Մաիա Ստեփնանե (Վրացիների կարգավիճակը Սուրբ հոգում VII դ. վառարարդի համամայն, Թբիլիսի, 2002, էջ 335-385):*



## ԻՆՏԵՆՍԻՎ ԵՎ ԿՐԿՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԵՆԵՐԻ (ՎԻՐՔ, ԱՊՎԱՆՔ) ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՏՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

**Ա**րարական նվաճումների շեմին Հայաստանը բաժանված էր մանր իշխանությունների, որոնք անկախության էին ձգտում: Բյուզանդական կայսրությունը, ինչպես նաև նոր կայացող Արարական խալիֆայությունը ձգտում էին օգտագործել այս իրավիճակը՝ իրենց ազդեցությունը տարածաշրջանում ամրապնդելու համար: Դեպի Փոքր Ասիա արարական արշավանքների ելքից և արաբա-բյուզանդական հետագա ռազմական զարգացումներից կախված՝ Կոստանդ II կայսեր (641–668) համար պարզ է դառնում, որ անհրաժեշտ է Բյուզանդիայի դիրքերն ամրապնդել Հայաստանում՝ հնարավորություն ստեղծելով թիկունքից սպառնալ Փոքր Ասիա ներխուժած թշևանուն: Սակայն կայսրը դիմում է լույ քաղաքական սադրանքների և Հայաստանին քաղկեդոնականությունը պարտադրելու միջոցների, որոնք հանգեցնում են հայ-բյուզանդական հարաբերությունների սրմանը: Արարական նվաճումների նախօրյակին Հայոց իշխան Թևոդորոս Ռշտունին (639–654) ջանում էր վարել ճկուն քաղաքականություն:

7-րդ դարի 50-ականներին Բյուզանդիան քանակցություններ է սկսում Խալիֆայության հետ: Այդ նպատակով բյուզանդացի զորավար Պրոկոպիոսն ուղևորվում է Դամասկոս, որտեղ պայմանավորվածություն է ձեռք բերում արաբներին տրվելիք հարկի չափի մասին:

Պայմանագրի կնքումը նշանակում էր, որ արաբական որևէ արշավանքի դեպքում Բյուզանդիան այլևս չէր կարող օգնել Հայաստանին: Թեոդորոս Ռշտունին հասկանում է, որ ինքը միայնակ ի վիճակի չէ երկիրը պաշտպանելու արաբական ներխուժումներից, և Բյուզանդիայից չափազանց կախվածությունը կրելի Հայաստանում քաղկեդոնականության ընդունմանը: Քաղաքական նման բարդ իրավիճակի մեջ հայտնվելով՝ հայոց սպարապետը վճռական քայլ է կատարում՝ բանակցությունների մեջ մտնելով Ասորիքի արաբ կուսակալ Մուավիայի (639–661) հետ:

652-ին երկու կողմերը կնքում են պայմանագիր: Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանն իրավացիորեն նշում է, որ դեպքերին ժամանակակից «Սերենուի կողմից բերված տեքստում պայմանագիրը բնութագրված է որպես հաշտության պայմանագիր»<sup>125</sup>:

Հայաստանը երեք տարով ազատվում էր Խալիֆայության նկատմամբ հարկային պարտավորության կատարումից և միայն ժամկետը լրանալուց հետո պետք է վճարեր արքունի հարկն ու սակը, որոնց չափերը որոշվելու էին հայերի հայեցողությամբ: Հայաստանը պարտավորվում էր Խալիֆայությանը տալ հացահատիկ, որն ըստ Մուավիայի՝ «... ես ի սակն արքունի անգարեմ» նշանակում էր, թե այդ հացահատիկը ոչ թե ձրի էր տրվելու, այլ նրա արժեքը հաշվելու էին երեք տարի հետո գանձվելիք հարկի դիմաց: Հայերը կարող էին ունենալ տասնհինգհազարանոց հեծելազոր, որը, ըստ պայմանագրի, պարտավոր էր ամեն տեղ մասնակցել մարտերին՝ բացի Ասորիքից: Ըստ պատմաբան Ս. Մելիք-Բախշյանի դիտարկման՝ «Ասորիքի շեշտադրումը նշանակում էր, որ արաբներն իրենց տիրապետության կենտրոնական շրջաններում հայ-

<sup>125</sup> Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հատոր 1, էջ 82:

կական ուժերի կարիքը չէին զգում, այլ դրանց օգտագործումը նրանք նախատեսում էին հիմնականում Բյուզանդիայի դեմ, մասնավորապես որ հաջորդ կետով արաբները պարտավորվում էին պաշտպանել Հայաստանը՝ հատկապես Բյուզանդական կայսրության հարձակումներից<sup>106</sup>։ Իսկ Ա. Տեր-Ղևոնդյանը նշում է, որ հայոց հեծելազորը սահմանափակ շրջաններում չպետք է մասնակցեր Բյուզանդիայի դեմ մղվող մարտերին<sup>107</sup>։ Օտար հարձակումների ղեկավարում արաբները պարտավորվում էին այնքան զորք ուղարկել Հայաստան, որքան կպահանջեին հայերը։ Պայմանագրով արաբները չպետք է միջամտեին Հայաստանի ներքին գործերին և, որպես դրա երաշխիք, պարտավորվում էին ոչ միայն զորք չմտցնել այնտեղ, այլև երկրի քրեղերում չտեղավորել ոչ մի արաբ զինվոր։

Այսպիսով՝ Հայաստանը տարեկան չնչին հարկի դիմաց ստանում էր որոշակի ինքնավարություն։ Սույն պայմանագրով զոնեն առժամանակ պահպանվում և ապահովվում էր երկրի անվտանգությունը և երաշխավորվում Հայաստանի ներքին ինքնավարությունը։ Ըստ նրևույթին, հայ նախարարները թեև համարվելու էին Խալիֆայության հպատակներ, սակայն պահպանելու էին իրենց ինքնուրույնությունը և սեփական հողատիրական ժառանգական իրավունքներն ու այլ արտոնություններ։ Պայմանագրում արտահայտված էր նաև հայերի նկատմամբ Խալիֆայության մեղմ և զիջողական վերաբերմունքը, և դա հասկանալի է, քանի որ արաբա-բյուզանդական մրցակցության պայմաններում Հայաստանն իր դիրքով եր-

<sup>106</sup> Տես Մելիք-Բախչյան Ա., Հայաստանը VII-IX դդ դարերում, «Միտք» հրատարակչություն, Երևան, 1960, էջ 69-70։

<sup>107</sup> Տես Տեր-Ղևոնդյան Ա., Հայաստանը VI-VIII դարերում (Արարական նվաճումներին նախորդող և տիրապետության հաստատման առաջին շրջան), Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1996, էջ 66։



կու կողմերի համար որոշակի կարևորություն ուներ: Հայերի նկատմամբ ցուցաբերած համեմատաբար մեղմ վերաբերմունքով արարները ձգտում էին թուլացնել Բյուզանդիայի ազդեցությունը Հայաստանի վրա, ստանալ հայերի աջակցությունն ու ռազմական օգնությունը, ինչպես նաև կասեցնել Կովկասից սպառնացող խազարական վտանգը: Հասկանալի է, որ այդ ընդգծված հանդուրժողականությունը պետք է շարունակվեր այնքան ժամանակ, քանի դեռ Խալիֆայության ներսում ընթանում էին գահակալական նրկպառակությունները, քանի դեռ արարները չէին ամրապնդել իրենց դիրքերը նվաճված նրկրներում: Այս պայմանագիրը զայրացնում է Կոստանդ II-ին, որը, ըստ Մեքենտի, հարյուրիազարանոց իր բանակով հարձակվում է Հայաստանի վրա<sup>108</sup>: Օսման խալիֆան, զբաղված լինելով իր երկրի ներքին խնդիրներով, չի կարողանում անհրաժեշտ օգնություն ցուցաբերել Թևոդորոս Ռշտունուն, որն ամրանում է Աղթամար կղզում սպասելով նրա օգնությանը: Մուավիայից որպես օգնություն ստանալով յոթիազարանոց արաբական զորամաս՝ նա պատերազմ է սկսում քյուզանդացիներին քշելով դեպի Տրապիզոն և մեծ ավարով ու թանկարժեք նվերներով վերադառնում Դամասկոս՝ Մուավիայի մոտ, որը Ռշտունուն նշանակում է Հայաստանի, Վիրքի և Աղվանքի կառավարիչ:

Երջանկահիշատակ Ա Տեր-Ղևոնդյանը նշում է, որ 652-ին Ասորիքի կուսակալ Մուավիայի և Հայոց իշխան Թևոդորոս Ռշտունու միջև կնքած դաշնագիրը «բացառիկ նշանակություն ունեցող երևույթ է հայ միջնադարի պատմության մեջ, քանի որ նա հայկական պետականության շահերը ավելի բարձր

<sup>108</sup> ՏՄՍ Մեքենոս, էջ 165:

դասեց, քան խախուտ բարեկամությունը քրիստոնյա նենգ կայսրության հետ»<sup>139</sup>:

Իսկ պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի դիտարկմամբ վերոհիշյալ պայմանագիրը «երկու երկրների միջև կնքված առաջին դիվանագիտական պաշտոնական փաստաթուղթն էր, որը որոշում էր Հայաստանի քաղաքական իրավիճակը և տահմանում երկու կողմերի հարաբերությունների բնույթը»: Այն «հայ քաղաքական մտքի, կամքի, հետատեսության և դիվանագիտական արվեստի խոշորագույն նվաճումն էր, Հայոց սպարապետ և իշխան Թեոդորոս Ռշտունու որպես պետական գործչի պատմական հաղթանակը»<sup>140</sup>:

Ի դեպ, Թեոդորոս Ռշտունու կերպարը մուտք է գործել հայկական ժողովրդական էպոս՝ որպես Թևաթորոս, Քեռի Թորոս<sup>141</sup>: Մեր դյուցազներգության հերոսական դրվագներից են 750 և 851 թթ. սասունցիների ապստամբությունները արաբների հարկային քաղաքականության դեմ: Արաբ հարկահանները (Բադին, Կոզբադին, Մուդին, Չարխադին) Սևրա Մելիքի հրամանով ներխուժում են Հայաստան՝ տանելու յոթ տարվա չվճարած հարկը (խարաջ): Էպոսի սկզբում՝ Սանասարի ու Բադղասարի մասին պատմող ճյուղում, հայտնի է դառնում, որ երբ Բադղադի խալիֆան անուսնացավ Ծովինարի հետ, խոստացավ հայերին յոթ տարով ազատել հարկերից<sup>142</sup>: Իսկ Դավթի մասին պատմող ճյուղում ասվում է, որ երբ Դավիթը վերանորոգում է Մարութա վանքը, կարգում վանական միա-

<sup>139</sup> Անտոյ, Պատմություն (ժամաթագրությունները՝ Ա Տեր-Ղևոնդյանի), էջ 140:

<sup>140</sup> Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հատոր 1, էջ 82-83:

<sup>141</sup> Տեն Սամսա ծոփ, Արեղյան Մ., Մելիք-Օհանջանյան Ա., Երևան, 1936, էջ ԺԴ:

<sup>142</sup> Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, «Արևիկ» հրատ., Երևան, 1990, էջ 70:

քանություն, Մսրա Մելիքը բարկանում է և հրամայում Խուրաշուն՝ զորքով արշավել Սասուն, ավերել վանքը: Վերջինիս հաջողվում է նաև թալանել այն և սպանել վանքի միաբաններին: Դավիթը կոտորում է Մսրա Մելիքի ուղարկած զորքին՝ կենդանի թողնելով Խուրաշուն միայն այն քանի համար, որ նա իր տեսածը պատմի Մելիքին: Վերջինս Կոզրադիսի գլխավորությամբ զորք է ուղարկում Սասուն՝ յոթ տարվա խարաջը ժողովրդից գանձելու համար<sup>143</sup>:

Այսպես, էպոսում հայերից հարկվելիք յոթ տարվա խարաջի պատմությունը անհիմն չէ: Այն իր արմատներով կապված է 652-ին Թևոդոսյան Ռշտունու և Մուավիայի կնքած դաշնագրի հետ, որի համաձայն՝ հայերը որոշակի ժամկետով ազատվում էին արաբներից հարկ վճարելուց: Մեքենոսի պատմության մեջ տեղադրված պայմանագրի տեքստում հարկ վճարելու ժամկետը նշվում է «զերեամ մի» արտահայտությամբ, որը մեզ է հասել աղճատված: Հնագույն ձեռագրերում այն ունի «վեր է ամմի» և «վեր է ամմի» ձևերը, ինչը հետազոտողներին հիմք է տվել ենթադրելու, որ «վեր է»-ի վերջին «է» տառը «յոթ» թվանշանի իմաստ ունի, և որ հայերը յոթ տարով ազատվել են Արաբական խալիֆայությանը հարկեր վճարելուց<sup>144</sup>: Ահա այս տարբերակի հիման վրա էլ իրենց եզրակացություններն են արել այնպիսի մեծություններ, ինչպիսիք են Հյուբշմանը, Մակլերը, Լեոն, Մ. Օրմանյանը: Վերջինս գրում է, որ հայերը, ըստ պայմանագրի, պետք է հպատակվեին արաբներին՝ պարտավորվելով «առ այժմ ապահարկ մսալ եօթը տարի, ետքը սակ կամ հարկ տալ որչափ որ կարենան» և հղում է Մեքենոսին<sup>145</sup>: Դաշնագրի կնքման թվականի և արաբներին վճարվելիք հար-

<sup>143</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 287-288:

<sup>144</sup> Տե՛ս Մեքենոս, էջ 345:

<sup>145</sup> Օրմանյան Մ., Ազգապատում, հատոր II, պրոնոսկ 840:

կի հետ կապված բոլոր դիտարկումները ուսումնասիրության ենթարկելով, մի շարք հետազոտողներ կարծում են, որ վերոհիշյալ պայմանագիրը կնքվել է 651-ին, երբ արարները գրավեցին Սասանյան Պարսկաստանն ու Միջին Ասիան: Ըստ այդ դիտարկումների՝ 652-ին Բյուզանդիայի Կոստանդ կայսրը արշավում է Հայաստան, իսկ 653-ին Արաբական խալիֆայությունից օգնական զորք ստանալով՝ Թեոդորոս Ռշտունին բյուզանդական զորքին դուրս է մղում Հայաստանից: Ներսես Տայեցի կաթողիկոսը, որը միաբանվել էր Բյուզանդիայի կայսեր հետ, մեկուսանում է և վեց տարի ապրում իր ծննդավայր Տայքում<sup>146</sup>: Ըստ պատմաբան Հ. Հարությունյանի՝ 651-ին կնքված այդ դաշինքը հայ ժողովրդին յոթ տարով ազատել է հարկերից, իսկ ժամկետը լրանալուց հետո Թեոդորոս Ռշտունին այդ խնդիրը կարգավորելու նպատակով մեկնել է Դամասկոս, սակայն հիվանդացել է և մահացել<sup>147</sup>: Ըստ հետազոտողի՝ հայոց սպարապետը 658-ին է մեկնել Մուսլիմայի մոտ՝ ճիշտ յոթ տարի հետո: Միայն նրա մահից հետո է Ներսես կաթողիկոսը վերադարձել իր պաշտոնին:

Մուսլիման, թեև պայմանագիր էր կնքել Ռշտունու հետ, ըստ որի՝ Հայաստանը պահպանում էր իր ինքնավարությունը, այնուհանդերձ որոշում է նվաճել Հայաստանը: Այս արշավանքի մասին հիշատակում են երեք պատմիչներ՝ Թեոփանեսը, Սեբեոսը և ալ-Բալազորին: Ըստ ալ-Բալազորիի՝ Օսման խալիֆան հրամայում է Մուսլիմային Հայաստան ուղարկել Հաբիբ իբն Մասլամային: Վերջինս պաշարում է Կարևո քաղաքը (Կալիկալա), որի քնակիչները կովի են դուրս գալիս արարեն-

<sup>146</sup> Տե՛ս Հարությունյան Հ., Սեբեոս նախկնդուսի պատմության մեջ եղած մի պայմանագրի ժամկետի ճշման հարցի շուրջը, գիտական աշխատություններ, հատոր 1, Հայկական ՄԱԻ, Երևանի պետ. մանկավարժական ինստիտուտի հրատարակություն, Երևան, 1940, էջ 204:

<sup>147</sup> Նույն տեղում:

րի դեմ, սակայն պարտության մատնվելով՝ երաշխավորագիր (աման) են խնդրում քաղաքից հեռանալու համար, իսկ մնալու դեպքում՝ պարտավորվում գլխահարկ վճարել<sup>146</sup>։ Բնակիչներից շատերը հեռանում են։ Այնուհետև Հաբիրը, տեղեկանալով, որ Արմանիկոսի պատրիկը (հավանաբար՝ Մավրիանոսը) մեծ զորք է հավաքել, օգնություն է խնդրում Օսմանից, առաջ է շարժվում Կարնո քաղաքից՝ հասնում Մարդադի գավառ (Մարբալա) և քանակ դնում։ Նրա մոտ է գալիս Խլաթի պատրիկը (հավանաբար՝ Մուշեղ Մամիկոնյանը)՝ բերելով իր հետ Իյադ իբն Ղանմից ստացած զրոյությունը, ըստ որի՝ հարկ վճարելու պայմանով երաշխավորվում էին նրա անձը, ունեցվածքը, երկիրը։ Հաբիրը հաստատում է այն։ Պատմագիրը նշում է, որ Խլաթի պատրիկը «բերեց իր վրա դրված հարկերը և ընծաներ նվիրեց, որը նա (Հաբիրը) չընդունեց»<sup>147</sup>։ Այնուհետև Հաբիրը հասնում է Սիփան (ալ-Սիբանա), որտեղ ճանաչում է Մուկսի (Մուքս) իշխանի տիրույթները՝ խաղաղության երաշխավորագիր տալով նրան։ Մոտելով Արճեշ (Արջիշ) և Ապահունիս (Բաջունասյս) գավառները՝ Հաբիրը ռազմիկներ է ուղարկում ոչ միայն դրանք գրավելու, այլև գլխահարկ գանձելու համար։ Հաբիրի մոտ են գալիս գյուղերի մեծամեծները, և «նա (Հաբիրը) ճանաչեց նրանց իրավունքները՝ հողահարկ վճարելու պայմանով»<sup>148</sup>։ Ըստ Հաբիր իբն Մասլամայի՝ Դվինի բնակչությանը շնորհած պայմանագրի, որը տրվում էր քաղաքի քրիստոնյաներին, հրեաներին, զրադաշտականներին, ներկա և քացակա բնակիչներին, երաշխավորվում էր նրանց անձի, ունեցվածքի, եկեղեցիների, տաճարների, քաղաքի պարիսպ-

<sup>146</sup> Թեոֆիլ Գուրգենյան, «Պատմություն Հայաստանի», Երևան, 1966, հատոր 1, 196, «...من التاريخ الكامل في التاريخ الجزء الثالث, ص. 43»

<sup>147</sup> Թեոֆիլ Գուրգենյան, «Պատմություն Հայաստանի», Երևան, 1966, հատոր 1, 199, «...من التاريخ الكامل في التاريخ الجزء الثالث, ص. 34, אין 147»

<sup>148</sup> Թեոֆիլ Գուրգենյան, «Պատմություն Հայաստանի», Երևան, 1966, հատոր 1, 115, «...من التاريخ الكامل في التاريخ الجزء الثالث, ص. 115»

<sup>149</sup> Թեոֆիլ Գուրգենյան, «Պատմություն Հայաստանի», Երևան, 1966, հատոր 1, 199, «...من التاريخ الكامل في التاريخ الجزء الثالث, ص. 199»

ների անվտանգությունը, նաև բնակիչների կյանքի ապահովությունը մուսուլմանների հովանավորության տակ այնքան ժամանակ, քանի դեռ բնակիչները հավատարիմ կմնային այս ուխտին՝ վճարելով գլխահարկ և հողահարկ<sup>151</sup>։ Արաբական նվաճումների ժամանակ հայերին տրված բոլոր պայմանագրերը, այդ թվում նաև 652-ին Մուավիայի և Թեոդորոս Ռշտունու միջև կնքած դաշնագիրը, 654-ին Հաբիբ իբն Մասլամայի՝ Դվինի բնակչությանը տված պայմանագիրը պետք է դիտարկել որպես դաշնագրերի (ահդ) ավանդույթի շարունակություն, որի հիմքը դրվել էր դեռևս Մուհամմադ մարգարեի օրոք՝ նրա գործունեության մեղիկյան շրջանում (622-632թթ.)։ Ըստ այդ ավանդույթի՝ վերոհիշյալ պայմանագրերը երուսաղեմի հայկական համայնքին Մուհամմադի տված պայմանագրի վերահաստատումներն են<sup>152</sup>։ Ալ-Բալազուրին հաղորդում է, որ Հաբիբը գրավում է նաև Գանսին, Աշոցքը (Աշուշ), Կոտայքը (Բուտիս), Դվինի շրջակա բոլոր գյուղերը, ջուկատներ է ուղարկում Շիրակ, Տայք (Սիրաջ), «Նա (Հաբիբը) մարդ ուղարկեց Շիրակ, Տայք ու Բագրևանդ, ու եկավ նրանց պատրիկը, և նա հաշտություն կնքեց այդ (գավառների) համար այն պայմանով, որ հարկ վճարեն, մուսուլմաններին խորհուրդներ տան, հյուրընկալեն և օգնեն նրանց թշնամիների դեմ»<sup>153</sup>։ Հաբիբն այնուհետև գրավում է նաև Նախիջևան (ալ-Նաշաուվա) քաղաքը և Դվինի հաշտության պայմանագրի նման պայմանագիր տալիս նրա բնակիչներին։ Նման պայմանագիր է տրվում նաև Վասպուրականի (Բուսֆուրջան) պատրիկին, որը տարեկան

<sup>151</sup> Sbu Chazaryan M., *Armenien unter der arabischen Herrschaft*, Marburg, 1905, s. 21, Յակոստ ալ-Համալի, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 62-63։

<sup>152</sup> Հսմն. Dodoyan S., *The Armenians in the medieval Islamic world*, vol 1, p. 60։

<sup>153</sup> 199 من الأثر، الجزء الثالث، ص. 44-43، ابلانري، فوح القناد، ص. 199 Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, էջ 271, Իբն ալ-Ասֆր, էջ 55։

հարկի փոխարեն նվերներով գոհացնում է մուսուլման գին-վորներին:

Հաբիբի՝ Տփղիսի (Տաֆլիս) քնակչությանը տված պայմանագրով երաշխավորվում էին քնակչության կյանքը, գույքը, տաճարները, վանքերը, կրոնը, ծիսակատարությունները՝ պայմանով, որ նրանք գիտակցեին իրենց նվաստ վիճակն ու վճարեին գլխահարկ՝ յուրաքանչյուր տնից մեկ դինարի չափով: Նշվում էր, որ գլխահարկի չափը թեթևացնելու նպատակով չպետք է մի քանի տներ (ծխեր) միանային, իսկ մուսուլմանները չպետք է տները քաժանեին՝ ավելի շատ հարկ ստանալու համար: Քնակչությունը պարտավորվում էր օգնել մուսուլմաններին խորհուրդներով, աջակցել նրանց, մեկ գիշեր հյուրընկալել՝ «Գրքի ժողովրդի» համար ընդունելի կերակուր տալով: Եթե քնակիչներն իսլամ ընդունեին, ապա կդառնային մուսուլմանների եղբայրները, հակառակ դեպքում պետք է գլխահարկ վճարեին: Պայմանագրում նշվում էր. «Եթե որևէ պատճառով մուսուլմանները չկարողանան օգնել և ձեր թշնամին նեղի ձեզ, ապա նրանք պատասխանատու չեն, և այս պատճառով անվավեր չի համարվի ձեր պայմանագիրը»<sup>64</sup>: Ալ-Բալազորին հիշատակում է նաև Ջառահ իբն Արդալլահ ալ-Հաբամիի՝ Տփղիսի քնակիչներին տված պայմանագիրը, որով նա հաստատում էր Տփղիսի քնակչությանը Հաբիբի տրված պայմանագիրը: Այս պայմանագրում նաև նշվում են ապահովության ու հովանավորության մեջ գտնվող շրջանները և որ քնակիչներն «այդ ջրաղացների ու խաղողի այգիների համար պետք է վճարեին տարեկան միանգամից հարյուր դիրհեմ»<sup>65</sup>: Հաբիբի պայմանագրում նշված արգելքը՝

<sup>64</sup> 201-200. البلاذري، فتوح البلدان، ص. 45-46: Բալազորի, Ալաբազի մուսուլմանները Հայաստանի մասին, էջ 45—46:

<sup>65</sup> Նույն տեղում:

միանգամից մի քանի տներ միավորելը, վկայում է, որ Վրաստանում այս շրջանում առկա է եղել հողատիրության նման ձև, որը հնարավորություն էր տալիս միավորելու տները՝ քիչ հարկ տալու համար: Արաբական նվաճումների նախօրյակին հողատիրության համայնական եղանակն առկա էր նաև Բյուզանդիայում, Սասանյան Պարսկաստանում: Ինչ վերաբերում է Ջառոահի՝ Տփղիսի բնակչությանը տված պայմանագրին, ապա, ըստ այնտեղ առկա որոշ կետերի, կարելի է ենթադրել, որ դրանք կարծես թե վերականգնում են Հաբիբի պայմանագրի կորսված կետերը: Այստեղ նշվում է, որ այս պայմանագիրը հաստատում է Տփղիսի բնակչությանը Հաբիբի տված պայմանագիրը, որտեղ մանրամասն շարադրված է գլխահարկի գանձման մասին հատվածը, և խոսք չկա հողահարկի մասին: Ջառոահի պայմանագրում գլխահարկը միայն հիշատակվում է, իսկ ջրաղացների և խաղողի այգիների վրա դրված հարկի մասին խոսվում է ավելի մանրամասն: Հարավոր է, որ Հաբիբն իր պայմանագրի մեջ հարկման էր ենթարկել խաղողի այգիներն ու ջրաղացները, սակայն հարկի չափի որոշումը՝ հարյուր դիրհեմ, պատկանում էր Ջառոահին: Դատելով վերջինիս պայմանագրի ներածական մասից՝ այն Հաբիբի պայմանագրի կետերի վերաշարադրանքն է: Ինչ վերաբերում է պայմանագրի լրացուցիչ պարտավորություններին, որոնք առկա են Ջառոահի պայմանագրում, ապա, ըստ հետազոտողների, այդ պայմանները դրել է հենց Ջառոահը<sup>166</sup>:

Ալ-Տարարին ևս բերում է Տփղիսի բնակչությանը Հաբիբի տված պայմանագրի տեքստը, սակայն բոլորովին այլ խմբագրությամբ: Նշվում է, որ բնակիչներին, նրանց գույ-

<sup>166</sup> Снѣ Сипенкова Т., К истории завоевания Закавказья арабами, Вопросы истории стран Азии, издательство ленинградского университета, Ленинград, 1965, с. 153:



քին, վանքերին, եկեղեցիներին, կրոնական ձեռներին տրվում է ապահովություն՝ պայմանով, որ հնազանդվեն, և ամեն մի տուն վճարի մեկ դիմար: Բնակչությունը պարտավորվում էր խորհուրդներով օգնել մուսուլմաններին՝ նրանց թշնամիների դեմ մարտերում, հյուրընկալել և կերակրել, ճանապարհ ցույց տալ մուսուլման ճամփորդին ու չվասել նրան, նաև ոչ պակաս կարևոր մի պայման, որը համառոտեն կրկնվում էր՝ եթե քնակիչները իսլամ ընդունեին, կղանային մուսուլմանների եղբայրները: Ալ-Տարաբին, ի տարբերություն ալ-Բալազուրիի, բերում է վերոհիշյալ պայմանագրի կնքմանը ներկա եղողների անունները<sup>67</sup>:

Ալ-Բալազուրին այնուհետև գրում է, որ արաբները գրավում են Վիրքի մի շարք գավառներ և քնակչության հետ հաշտություն են կնքում հողահարկ ու գլխահարկ վճարելու պայմանով: Հայաստանի հիմնական մասի և Վիրքի նվաճմանը գուգահեռ Արաբական խալիֆայությանը հպատակվում են նաև Հայաստանի արևելյան նահանգները, Աղվանքը, մերձկասպյան շրջանները, որոնց մասին հիշատակում է ալ-Բալազուրին: Այդ նրկրամասերը նվաճելու համար Օտման խալիֆան ուղարկում է Սալման իբն Ռարիա ալ-Բահիլիին: Վերջինս գլխահարկ ու հողահարկ վճարելու պայմանով գրավում է Փայտակարանը (Բայրական)՝ երաշխավորելով տեղի քնակչության կյանքի, ունեցվածքի, քաղաքի պարիսպների անվտանգությունը: Այսպիսով, նվաճվող ժողովուրդների նկատմամբ վերաբերմունքը կախված էր այն քանից, թե ինչպես էին նրանք հանձնվում: Եթե չէին դիմադրում, ապա հաշտության պայմանագրով կարգավորվում էին և՛ քաղաքական, և՛ տնտեսական հարաբերությունները: Նվաճումների վաղ շրջանին հատկապես քնորոշ է արաբների հանդուրժողականությունը

<sup>67</sup> الطبري تاريخ الرسول والمشركين الجزء الرابع، 2674/1، 2675/1.

կամքի ազատության նկատմամբ, որն ամենայն հավանականությանը դեռևս Մուհամմադ մարգարեի վերաբերմունքի արձագանքն էր:

Հետագայում, երբ արաբական տիրապետությունը հաստատվեց նվաճված երկրներում, դժվար է խոսել մարդասիրության դրսևորումների և հանդուրժողականության մասին, երբ արաբ իշխողներն իրենց իշխանությունը ամրապնդելու համար դիմում էին կանայականությունների: Շատ հաճախ անտեսվում էին հպատակ քնակության՝ պայմանագրերով ամրագրված իրավունքները: Այսպես, Հայաստանում արքայան խալիֆա Մանսուրը (754-755) այնքան էր ճնշում իր հպատակներին, որ նրանք, ինչպես հիշատակում է Սամուել Անեցին, այլևս վճարելու ոչինչ չունենալով, իրենց նեղեցյալների գերեզմաններն էին փորում թանկարժեք իրեր գտնելու հույսով<sup>104</sup>: Իսկ Ղևոնդ պատմագիրը գրում է, որ Արքայանների օրոք արաբները հարկեր էին հավաքում ոչ միայն կենդանի մարդկանցից, այլև մեռյալներից<sup>105</sup>: Եվ եթե արաբական նվաճումների շրջանում պայմանագրի կամ խոստման խախտումը արաբների համար տարու էր, ապա հետագայում նրանք շատ հաճախ դրժում էին այն: Այսպես, 10-րդ դարում Ատրպատականի ամիրա Յուսուֆը հակամարտությունների մեջ էր մտել Հայոց Սմբատ Բագրատունի թագավորի (892-914) հետ, որը փորձում էր նրա հետ հաշտության եզրեր գտնել: Այդ նպատակով իր մոտ նկատ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսին (908-927) ձերբակալելուց հետո Յուսուֆը անձի անձեռնմխելիության խոստում է տալիս հայոց թագավորին, բայց նրան շղթայակապ իր մոտ բերելով՝ դրժում է խոստումը, խոշտանգում և կախում Սմբատին:

<sup>104</sup> Տե՛ս Սամուել Անեցի, էջ 88:

<sup>105</sup> Տե՛ս Ղևոնդ, էջ 105:



**Բ**այկական համայնքներին տրված և Մոսխամադ մարզա-րնի անունով պայմանագրերը հայկական մատենագրոթյան մեջ հայտնի են որպես «Մեծ Մանշուր» և «Փոքր Մանշուր»: Դրանք ավելի շուտ կրոնական ուղղվածություն ունենին և միտված էին պահպանելու հայոց եկեղեցու և հոգևոր դասի իրավունքները:

Սինա լեռան մոտ գտնվող Ս. Կատարինս վանքի հետ կապված է մի պատմություն, ըստ որի՝ 625-ին վանքի հոգևորականները պատվիրակություն են ուղարկում Մաղիսա՝ հովանավորություն ու ապահովություն խնդրելու իսլամի մարզաբեից: Վանքի թանգարանում պահպանվում է մի փաստաթուղթ, ըստ որի վանականներն ազատվում են հարկերից Մոսխամադի հրահանգով: Շարափոր է, որ Մոսխամադը Սիրիա և Պաղեստին կատարած իր առևտրական ճամփորդությունների ժամանակ այցելած լինի Սինայի վանք:

640-ին՝ արաբական նվաճումների ընթացքում, վանքն իրոք ազատվում է հարկերից՝ Ամր իբն ալ-Աս զորավարի հրահանգով: Հետագոտողների կարծիքով՝ մարզաբեի անունով այդ փաստաթուղթն ամենայն հավանականությամբ ի հայտ է եկել Ֆաթիմյան խալիֆայության օրոք (969–1171) Եզիպտոսում<sup>100</sup>, և հատկապես Հաքիմ խալիֆայի օրոք (996–1021): Վերջինս դաժան էր հրեաների և քրիստոնյաների նկատմամբ, հետապնդում էր նրանց: Նրա կատավարման օրոք Եզիպտոսում շատ

<sup>100</sup> Крылов А., Монастырь св. Екатерины на Синае, Вестник московского университета, 4/1991, серия 13, Восток и зедение, 4/1991, Москва, 1991, с. 60:

վանքեր ու եկեղեցիներ են ոչնչացվում: Ըստ ավանդության՝ Հաբիմը հրամայում է ավերել Ս. Կատարինն վանքը: Հոգևորականները վանքից տասը մետր հեռավորությամբ մի մզկիթ են կառուցում, ինչն էլ խալիֆային հետ է պահում իր արատավոր մտադրությունից: Հենց այդ ժամանակահատվածում անհրաժեշտություն է առաջանում ունենալ Մուհամմադ մարգարեի անունով մի փաստաթուղթ, որը կերաշխավորեր նրանց ապահովությունը մուսուլմանական տիրապետության տակ:

Մուհամմադի մահից հետո մուսուլմանները նվաճված երկրների քրիստոնյա քնակչության նկատմամբ դրսևորում են հանդուրժողականություն՝ գլխահարկ և հողահարկ վճարելու պայմանով: Մակայն հետագա դարերում քրիստոնյաները, գտնվելով մուսուլմանական իշխանության ծանր լծի տակ, շրջանառության մեջ էին դնում իշխողների հովանավորությունը հաստատող պայմանագրեր և դրանց վավերականությունը օրինականացնելու համար հիշատակում էին Մուհամմադ մարգարեի անունը: Դա պատմության ամենաակնառու երևույթներից մեկն է, որը չպետք է անտեսել: Այսպես՝ Մխիթարյան միաբանության մատենադարանում պահվում է մի ձեռագիր, ըստ որի՝ Մուհամմադ մարգարեն պայմանագիր է կնքել հայերի հետ՝ «երարձ գտրն ի Հայոց: Եւ արար զնոսա ի կամս ապաստանս, զի համարձակ պաշտնացնն Քրիստոս Աստուած և տայցնն զճազայն»<sup>84</sup>:

Ի դեպ, օտարազգի հեղինակներից Յ. Շիլտերեզերը, հիմք ունենալով Մուհամմադի մասին հայկական միջավայրում տարածված ավանդությունները, նշում է, որ վերջինս խոստացել է խաղաղության մեջ պահել հայերին: Հեթանոսներին արգելվել

<sup>84</sup> Մայր ցուցակ հայերն ձեռագրաց, հրատարակեալ ի Մխիթարեան միաբանութենէ, կազմեցին Հ. Յակովբոս, Վ. Տաշեան, հասոր Ա. զիբք Բ. Մխիթարեան տպարան, Վիեննա, 1891-1895թթ., էջ 59:

է զինի օգտագործել, միակ վերապահությունը արվել է հայերին, որի համար վերջիններս պետք է մուսուլմաններին վճարելին ամենամսյա հարկ<sup>102</sup>: Ֆ. Բրունը Յ. Շիլտերգելի գրքի թարգմանության մեջ նշում է, որ նրա այս հիշատակությունը հաստատում է հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Ցավոք, այս փաստի հավաստիությունը մենք չկարողացանք գտնել նրա պատմության մեջ:

Միջնադարում հայոց կաթողիկոսը ոչ միայն Հայաստանի (տվյալ դեպքում Արմինիա նահանգի) հոգևոր առաջնորդն էր, այլև կարևոր դեր էր խաղում երկրի քաղաքական կյանքում: Պատահական չէր, որ 703-ին՝ Արաբական խալիֆայության դեմ հայոց ապստամբությունից հետո, նախարարների խնդրանքով հենց Մահակ Ձորափորեցի կաթողիկոսը (677-703) ուղևորվեց արաբ գորահրամանատարի մոտ՝ մղմունկու նրա քարկությունը և հնարավորության դեպքում՝ ձեռք բերելու հայոց աշխարհի անվտանգությունն ապահովող պայմանագիր: Հավելենք, որ, բացի 652-ին Թեոդորոս Ռշտունու և Մուավիայի կնքած պայմանագրից, Արաբական խալիֆայության հետ բանակցությունների և դաշնագրերի քննարկման ժամանակ հայոց նկնդեցին էր, որ ներկայացնում էր հայերին: Հայ պատմագրության մեջ պահպանվել է մի հիշատակություն, ըստ որի՝ 8-րդ դարում հայոց Հովհաննես Օմնեցի կաթողիկոսը (717-728) այցելել է Օմար II Օմայան խալիֆային (717-720) և նրանից ստացել կրոնական բովանդակությամբ մի պայմանագիր: Այս կապակցությամբ Մ. Օրմանյանը գրում է, որ Ստեփանոս Ասողիկը և Սամուել Անեցին, որոնք ավելի վաղ են գրել իրենց աշխատությունները, չեն հիշատակում արաբ ամիրապետի անունը, որին այցելել է հայոց կաթողի-

<sup>102</sup> Հմմտ. Արգաթյան Գ., Հայերը Շիլտերգելի ուղեգրությունում, Առանձնատիպ, Բանքեր Երևանի համալսարանի ՁՊՁԷ, Երևան, 1997, էջ 108:

կուր: Մինչդեռ Վարդան Արևելցին նշում է Օմարի, իսկ Կիրակոս Գանձակեցին՝ Հեշմի (Հիշամի) անունները: Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հիշամ խալիֆան (727–743) Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի պաշտոնավարության վերջին տարիներին է իշխել, Մ. Օրմանյանն իրավացիորեն կարծում է, որ այդ հիշարժան այցելությունը եղել է Օմայան Օմար II խալիֆայի օրոք՝ 720 թվականից առաջ կամ նրա՝ կաթողիկոս դառնալուց հետո: Պատմագիրը նշում է, որ խալիֆան՝ զարմանացած կաթողիկոսի՝ իր հարցերին տված իմաստուն պատասխաններից, առաջարկել է նրան երեք ցանկություն հայտնել: Կաթողիկոսը խնդրել է խալիֆային, որ չստիպեն քրիստոնյաներին ուրանալ իրենց հավատը, եկեղեցականներին ազատեն հարկերից, և մուսուլմանական պետության սահմաններում քրիստոնյաներն իրավունք ունենան ազատորեն դավանելու իրենց կրոնը: Երբ կաթողիկոսն այս պայմանների վերաբերյալ գրավոր պայմանագիր է խնդրել, խալիֆան կատարել է նրա խնդրանքը, իր մատանիով կնքել այդ փաստաթուղթը և շույլ պարզևներ տալով կաթողիկոսին՝ մեծ պատվով ուղարկել Հայաստան:

Ինչպես տեսնում ենք, շատ հաճախ հայոց կաթողիկոսներն էին իրենց հեղինակությամբ վճռում երկրի համար առավել կենսական ու կարևոր նշանակության հարցերը: Այսպիսով, հայոց եկեղեցին և կրոնական հաստատությունները հովանավորություն են ստանում Արարական խալիֆայության տիրապետության ներքո, կղերականությունը հարգվում ու տեսականորեն ազատվում է հարկերից:

Այժմ, անդրադառնալով «Մեծ Մանչուրին», նշենք, որ այն առաջին անգամ իր «Պատմության» մեջ հիշատակում է 12-րդ դարի պատմիչ Սամուել Անեցին: Նա համառոտակի անդրադառնում է Մուհամմադի գործունեությանը, արաբների

արշավանքներին Հայաստան, Պարսկաստան, Եգիպտոս և Նշուր, որ Մուհամմադը «զլուխ վաճառականացն՝ եգիպտացի... հաստատեալ էր ադանդովն Արիոսի ու Կերիսթոսի... արգել զսուրն ու քանի խրատու նորա հնազանդեցուցին ինքնեաց զմեծ մասն տիեզերաց: Եւ անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ Հայոց աշխարհիս՝ համարձակ ունել զքրիստոնեութիւնս և վաճառեաց նոցա զհաւատս նոցա, յամենայն տանէ առեալ դ դրամ և զ մոթ խորբալ՝ և ձիառուպրակ մի և պարան մի մազէ և ձեռնարար մի: Իսկ ի քահանայից՝ և յազատաց՝ և ի հեծելոց՝ ոչ հրամայեաց առնուլ զհարկն»<sup>163</sup>:

Այս պայմանագրի կետերի մասին հիշատակում է նաև 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին, որի համար աղբյուր է եղել Սամուել Անեցու պատմությունը: Այդ պայմանագրին է անդրադարձել նաև 12-13-րդ դարերի պատմիչ Մխիթար Անեցին, որը գրել է իր պատմության՝ մեզ հնտաքրքրող հատվածները Սամուել Անեցու երկի առավելագույն օգտագործմամբ<sup>164</sup>:

Հ. Մանանդյանը, ուսումնասիրելով այս դաշնագիրը, նշում է, որ դրամը 7-րդ դարում Մերձավոր Արևելքում օգտագործվող արծաթե դրամն էր, որը, ըստ իր արժեքի, հավասար է մոտ հիսուն կոպեկի, իսկ վերոհիշյալ չորս դրամը հավասար էր մոտ երկու ոսկի ոտյուր: Երեք մոդ խորբալը մադաձ ցորենն էր, որը կշռում էր քսանինը կիլոգրամ և երեք հարյուր յոթանասունվեց գրամ կամ մոտ երկու փութ: Այնուհետև հայ պատմաբանի դիտարկումից պարզ է դառնում, որ «վերոհիշյալ վկայության մեջ «ազատ»-ներից հետո հիշատակված հեծելագորը, հավանորեն, ուամիկներից կազմված «այրուծին» է, որ գոյություն ուներ արդեն մարգպանության շրջանում: Ուշագրավ է, որ այս հեծելագորը, որն ազատ էր

<sup>163</sup> Սամուել Անեցի, էջ 82.

<sup>164</sup> Հմմտ. Մխիթար Անեցի, էջ 103:

հարկերից, ինչպես նաև «ազատ»-ներն ու քահանաները ստանում էին Օմայաններից հատուկ ոռճիկ՝ տարեկան հարյուր հազար դահեկան»<sup>165</sup>:

Իր հերթին Խ. Սամուելյանը, անդրադառնալով պայմանագրում հիշատակված «ազատներ» եզրույթին, նշում է, որ դրանք մանր հողատեր ազնվականներ էին: Ինչ վերաբերում է «ազատ» եզրույթին, ապա այն պարթևական ծագում ունի, և նրա իմաստն ավելի պարզ կլինի, եթե նկատի ունենանք, որ Հայաստանի նախարարական ինստիտուտը շատ գծերով նման էր Սասանյան Պարսկաստանի Ֆեռդալական կառուցվածքին: Ազատները հիմնականում զինվորականներ էին, մեծ մասամբ՝ հեծյալներ<sup>166</sup>:

Ղևոնդը գրում է, որ հայկական հեծելազորի զինվորների վարձը վճարել են արաբները, որով փորձել են իրենց ռազմական ուժերը պահել կենտրոնացված վիճակում, նաև ռազմական պարտականությունների մի մասը դնել տեղական ժողովրդից կազմված զորքի վրա: Պատմագիրը նշում է, որ 8-րդ դարի առաջին կեսերին Հայոց իշխան Աշոտ Բագրատունին (732-749) գնացել է Հիշան խալիֆայի մոտ (724-743), որը կարգադրել է վճարել հայկական զորքի նախկին երեք տարիների վարձը՝ յուրաքանչյուր տարվա համար՝ հարյուր հազար արծաթ<sup>167</sup>:

Ի դեպ՝ արաբական վարչատնտեսական քաղաքականության հիմքում դրվել էին Բյուզանդական կայսրության և Սասանյան Պարսկաստանի հարկային ու տնտեսական համակարգերը: Սասանյան Պարսկաստանի վարչական համա-

<sup>165</sup> Մանանդյան Հ., Երկեր, հատոր Բ, ՀՄԸ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1960, էջ 212:

<sup>166</sup> Հմմտ. Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հատոր 1, Արմֆանի հրատարակչություն, Երևան, 1939, էջ 219:

<sup>167</sup> Հմմտ. Պատմություն Ղևոնդայ մեծի վարդապետի հայոց, էջ 113:



կարգը մշակվեց Խոսրով Ա Անուշիրվանի օրոք (531-538), ով կարգադրեց, որ կատարվի հողերի չափազրում, ճշգրտորեն հաշվվի մարդկանց, արմավենիների և ձիթենիների թվաքանակը, որից հետո միայն սահմանվեն հարկերը: Մասանյան Պարսկաստանում հողահարկի հետ վճարվում էր նաև գլխահարկ, որի չափը չորս, վեց, ութ կամ տասներկու դիրհեմ էր<sup>168</sup>: Այս տնտեսական բարեփոխումներն արարներն օգտագործեցին իրենց նվաճած երկրներում:

Վերոհիշյալ արտոնագիրը «Ալի Մանշուր» անվանելու մասին առաջին գրավոր հիշատակությանը հանդիպում ենք 14-15-րդ դարի մատենագիր Գ. Տաթևացու «Գիրք հարցմանցի» «Հնդդեմ տաճկաց» գլխի վեցերորդ «Մուրուրթին այլազգեաց» հատվածում: Հեղինակն այստեղ քննադատաբար է անդրադառնում Մուհամմադի մարգարեական առաքելությանը՝ նշելով, որ «Հայոց մեծ թուականին ԴԷ (97թ.) եւ եզր կաթողիկոսի տասներորդ տարին ոմն Մահմետ անունով, Իսմայելի ցեղից, Արդուլի որդին անմոռաց երդումով դաշնագիր՝ մուրհակ տուեց Հայոց աշխարհին, որ այժմ կոչում է Մեծ Մանշուր (հրովարտակ)»<sup>169</sup>: Այսուհետև շարադրում է պայմանագրի պայմանները՝ սրված Հայոց երկրին:

Ինչպես տեսնում ենք, Գ. Տաթևացու հիշատակած պայմանագրի այս օրինակում նշվում է, որ եզրի կաթողիկոսության (630-641թ.) օրոք Մուհամմադ մարգարեն, իրեն ենթարկելով «տիեզերքի մեծ մասը», պայմանագիր (մուրհակ) է կնքել Հայոց աշխարհի հետ, որով երկրի հոգևորականությունն ու իշխանական դասն ազատվում էին հարկերից, իսկ մնացած քնակիչները պարտավորվում էին վճարել այն: Հայտնի է,

<sup>168</sup> Հմմտ. Nöldeke Th., Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden aus der arabischen Chronick des Tabari, Leiden, E.U. Brill, 1879, s. 241-247:

<sup>169</sup> Գրիգոր Տաթևացի, էջ 53:

որ 652-ին Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին հաշտության պայմանագիր է կնքել Ասորիքի կուսակալ Մուավիայի հետ, որի տեքստն առկա է 7-րդ դ. պատմիչ, դեպքերին ակնատես Սեբեոսի «Պատմության» մեջ:

Ակնհայտ է այն փաստը, որ 632-ին Մուհամմադ մարգարեն արդեն կնքել էր իր մահկանացուն, և հետևաբար չէր կարող պայմանագիր կնքել հայերի հետ:

Հ. Փափազյանը, անդրադառնալով Սամուել Անեցու հիշատակած պայմանագրի ժամանակագրությանը, այն անվանում է «անհայտ ժամանակին վերաբերող»<sup>170</sup>, իսկ Ա. Տեր-Ղևոնդյանն ավելի հանգամանորեն է մոտենում այս հարցին՝ լույս սփռելով պայմանագրի ստեղծման պատմության վրա, նշելով, որ Սամուել Անեցին այդ կարևոր փաստաթղթում Օմայյան Մուհամմադ իրն Մրվան փոխարքայի անունը շփոթել է իսլամի հիմնադրի անվան հետ<sup>171</sup>: Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի (մեր կարծիքով՝ շատ կարևոր) հայտնության՝ հետագայում հայ պատմագրության մեջ ամրագրվել է ավանդությունն այն մասին, որ իբր Մուհամմադ մարգարեն է պայմանագիր կնքել հայերի հետ վերջիններիս իրավունքները ճանաչելու և քրիստոնեական կրոնն ազատորեն դավանելու մասին:

Օմայյանների շրջանում մեկ երդի կամ ծխի տակ միավորվում էր մի քանի ընտանիք, որը, որպես կանոն, րազմամարդ էր: Հիշատակված ձիատուրակը (կրկնապարկ), մազն պարանը և ձեռնոցը մուսուլմանները հավանաբար վերցնում էին

<sup>170</sup> Փափազյան Հ., Վավերագիր 21, Մատենադարանի պարսկերեն վավերագրերի I, Հրովարտականք, պրակ Ա, (ԺԵ-ԺԶ դդ.), էջ 99:

<sup>171</sup> Հմմտ. Тер-Гевондян А., Армения и Арабский халифат, издательство АН Армянской ССР, Ереван, 1977, с. 186

արարական գորքի կարիքների համար<sup>62</sup>: Արարները՝ որպես վաչկատուն, անասնապահ ժողովուրդ, գերադասում էին արշավանքների ժամանակ ունենալ առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ չափավոր քանակով: Քանի դեռ վերջնականապես չէին հաստատվել նվաճված երկրներում, նրանք հարկերով չէին ծանրաբեռնում քնակությանը, ինչպես վերը նշվեց, հարկերից ազատվում էին հոգևորականները, հայկական հեծկազորը:

Քանի որ Արարական խալիֆայության տիրապետությունը Հայաստանում փաստական և իրավական ձևով հաստատվել է միայն 7-րդ դարի վերջերին, ուստի մինչ այդ արարների կարճատև տիրապետության պայմաններում հարկային քաղաքականությունը պետք է արտահայտվեր թույլ և համեմատաբար թեթև ձևով:

Այս հանգամանքը հատկապես ընդգծված է 652թ. հայարարական պայմանագրում, որով Հայաստանը երեք տարով ազատվում էր հարկերից: Ավելին, Հայաստանից գանձվող հարկի քանակը երբեմն որոշում էին հենց իրենք՝ հայերը: Պատմական ոչ մի աղբյուր, բացի Սերետսից, հարկերի չափի ու քանակի մասին տեղեկություն չի հաղորդում:

Հ. Մանանդյանը նշում է, որ Օմայաններն իրենց տիրապետության առաջին շրջանում եղել են ընդհանուր առմամբ «մատչելի և ժողովրդին մոտ»<sup>63</sup>: Այս շրջանում նվաճողների զգույշ ու մեղմ քաղաքականությունը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ Օմայանները, հաշվի առնելով Հայաստանի ռազմական մեծ նշանակությունը, պահում էին նրա ներքին

<sup>62</sup> Հմմտ. Նաբրանդյան Հ., Արարների հարկային քաղաքականությունը Հայաստանում, (640-862), ՀՀՄԻ ԳԱ, «Տեղեկագիր», N 12, Երևան, 1954, էջ 76:

<sup>63</sup> Մանանդյան Հ., Երկեր, հատոր Բ, էջ 56:

ինքնուրույնությունը և նախարարական արդեն իսկ հաստատված կարգերը:

Ինչպես տեսնում ենք, Սամուել Անեցին և վերոհիշյալ միջնադարյան հայ մատենագիրները, շարադրելով պայմանագրի տեքստը, հիմնականում չեն լուսաբանում, թե ինչ հանգամանքներում է այն տրվել Հայոց աշխարհին:

Ինչպես նշվեց, Սամուել Անեցին իր «Ժամանակագրության» մեջ գրում է, որ արաբները «կոտորեցին զԲզնունիս զԱղոյոս վիտ եւ զՏարոն»՝ ակներևաբար նկատի ունենալով 640-ին արաբական առաջին արշավանքները Հայաստան, և, հիշատակելով Մուհամմադի (հայոց աղբյուրներում՝ Մահմադ)՝ Հայոց աշխարհին տված պայմանագրի պայմանների մասին, նշում է, որ նրան է հնազանդվում տիեզերքի մեծ մասը՝ «իր կամքով»: Պարզ է, սակայն, որ այստեղ խոսքը վերաբերում է արաբական արշավանքներին, որոնց արդյունքում քաղմաթիվ երկրներ, այդ թվում Բյուզանդական կայսրությունն ու Սասանյան Պարսկաստանն իրենց հպատակությունն էին հայտնել արաբներին: 652-ին Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու և Ատրիքի կուսակալ Մուավիայի կնքած պայմանագրով Հայաստանը պահպանում էր իր ներքին ինքնավարությունը՝ որպես կիսանկախ պետություն, պահպանվում էին նաև նախարարների հողատիրական իրավունքները:

Այս պայմանագիրը Հայաստանի վերջնական նվաճման փաստն արձանագրող փաստաթուղթը չէր: Վերոհիշյալ պայմանագրի կնքումից հետո էլ Մուավիան շարունակում է իր ասպատակությունը Հայաստանում: Ինչպես նշում են միջնադարյան աղբյուրները, 654-ին արաբները գրավում են Հայաստանի գյուղերն ու քաղաքները՝ քնակությանը տալով հաշտության պայմանագրեր: 654 թվականից հետո Հայոց իշխան է դառնում Համազասպ Մամիկոնյանը (654-661). նրա

օրոք Հայաստանը խզում է իր կապերն Արարական խալիֆայության հետ: Երբ 661-ին իշխասության գլուխ են անցնում Օմայանները, Մուավիան հրովարտակ է ուղարկում հայերին՝ հարկ վճարելու պարտադրանքով: 660-ականներին Արարական խալիֆայությունը պատերազմների մեջ էր Բյուզանդական կայսրության հետ, և այս շրջանում Հայաստանը վայելում էր լայն ինքնավարություն ու խաղաղ կյանք: «Օգտվելով այս իրավիճակից,՝ գրում է Ա. Տեր-Ղևոնդյանը,՝ 680-ական թվականներին Հայաստանը խզեց իր կապերը Խալիֆայության հետ ու դարձավ լրիվ անկախ»<sup>174</sup>: Պատմիչ Ղևոնդը վկայում է, որ Մուավիայի որդի Եզիդ խալիֆան (680-683) Հայոց աշխարհից վերցնում էր այն հարկը, որը Հայաստանը վճարում էր Մուավիայի օրոք<sup>175</sup>: 689-ին Օմայան Աբդ ալ-Մալիք խալիֆան (665-705), Բյուզանդիային վերջնականապես պարտության մատնելուց հետո լուծելով երկրի ներքին խնդիրները, իր նորոգը՝ Մուհամմադ իբն Մրվանին, նշանակում է Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ (693-709), ով 701-ին վերջնականապես գրավում է Հայաստանը: Հավանաբար հենց այս շրջանին էլ վերաբերում է Սամուել Անեցու կողմից հիշատակած Մուհամմադ մարգարեի այս պայմանագիրը: Վերոհիշյալից պարզ է դառնում, որ այդ պայմանագիրը կնքվել է արարական արշավանքների ու նվաճումների շրջանում: Սամուել Անեցին այս պայմանագրի տեքստը տեղադրում է այն փաստի հիշատակությունից հետո, երբ Մահմեդն արգելում է սուրը, և «քանի խրատու նորա հնագանդեցուցին ինքնանց գնեծ մասն տինգերաց»:

Պատմագիրը պայմանագրի կետերը շարադրելիս չի նշում որևէ թվական, կամ ինչ հանգամանքներում է այդ փաստա-

<sup>174</sup> Տեր-Ղևոնդյան Ա., *Հայաստանը VI—VIII դարերում*, էջ 99:

<sup>175</sup> Տե՛ս Ղևոնդ, էջ 26:

թուղթը տրվել Հայոց աշխարհին: Միայն ընդհանուր ձևով կարող ենք դատել, որ արաբական նվաճումների ընթացքում հայերը կարիք ունեին արաբների պաշտպանության ու հովանավորության, որոնց փոխարեն նրանք պետք է ստանձնեին որոշակի հարկային պարտավորություններ, ըստ որոնց՝ ամեն տուն պետք է վճարեր չորս դրամ, ձիատուպրակ, ձեռնոց, մազե պարան, ցորեն: Սամուել Անեցու հիշատակած պայմանագրի այս կետերը համապատասխանում են արաբական նվաճումների ընթացքում նվաճված երկրների քրիստոնյա բնակիչներին տրված պայմանագրերին. դրանք հակիրճ են ու որոշակի: Մույն պայմանագիրը, այսպիսով, պատմական փաստաթուղթ է՝ տրված հայերին հավանաբար Մուհամմադ իբն Մրվան փոխարքայի կողմից, և այս պայմաններով արդեն ամրագրվում էր Հայաստանի վերջնական նվաճումը արաբների կողմից:

Սամուել Անեցին հավանաբար փորձել է վաղեմություն հաղորդել վերոհիշյալ պայմանագրին՝ վերագրելով այն ավելի վաղ շրջանի՝ մասնավորապես արաբական նվաճումների նախօրյակին: Ընդ որում՝ գալով այս պայմանագրի կնքման կամ ստեղծման պատմությանը, նշենք, որ վերոհիշյալ բոլոր հնդիսակների մոտ նկատվում է միտում, այն է՝ արտոնագրի կնքումը վերագրել Մուհամմադ մարգարեին: Եվ դա հասկանալի է: Որքան մոտ էր պայմանագիրը Մուհամմադի ժամանակին, այնքան բարձր էր նրա կշիռն ու արժանահավատությունը:

Նշելով Մուհամմադի անունը՝ նրանք մտածված կերպով 8-րդ դարի սկզբին Մուհամմադ իբն Մրվանի՝ հայերին տված արտոնագիրը վերագրել են իսլամի հիմնադիր Մուհամմադին՝ ձգտելով ընդհանրական իմաստ հաղորդել պայմանագրին: Հետագայում, ինչպես կտեսնենք, այս արտոնագրի պայմանները դրվել են նմանատիպ այլ փաստաթղթերի հիմքում

ցույց տալու համար, թե իսլամի մարգարեն ինչպիսի առանձնաշնորհումներ է տվել Հայոց աշխարհին:

Կարևորվում է նաև 654-ին Հարիբ իբն Մասալամայի՝ Դվի-նի բնակչությանը շնորհած պայմանագիրը, որով ապահովություն էր տրվում բնակչության կյանքին, գույքին, նկեղեցիներին, աղոթարաններին, քաղաքի պարիսպներին՝ գլխահարկ և հողահարկ վճարելու պայմանով:

Նշենք, որ վերոհիշյալ պայմանագրերի հիմքում դրված է Մուհամմադ մարգարեի՝ «Գրքի ժողովրդի» նկատմամբ ունեցած հովանավորության ու պաշտպանության մասին դրույթը, որը գործադրվել էր Արաբական թերակղզու հրեա, քրիստոնյա բնակչության, Նաջրանի քրիստոնյա բնակիչներին տրված պայմանագրերում, որոնց համաձայն՝ վերջիններս տառնում էին մուսուլմանական համայնքի ու մարգարեի հովանավորությունն ու պաշտպանությունը՝ պարտավորվելով ի նշան հպատակության վճարել գլխահարկ՝ հիմնականում քանամթերքի տեսքով:

Սակայն պարզ է, որ Մուհամմադի մշակած և ստեղծված դաշնագրի ֆենոմենը ժամանակի ընթացքում պետք է փոփոխության ենթարկվեր՝ հարմարեցվելով պահի պահանջներին:

Մուհամմադի կողմից Նաջրանի բնակչությանը տրված պայմանագրի համաձայն՝ նրանք չպետք է քանակում ծառայեին՝ որպես մուսուլմանական համայնքի հպատակներ, մինչդեռ 652-ի պայմանագրով Հայաստանը կարող էր ունենալ տասնհինգհազարանոց հեծելազոր՝ որպես Արաբական խալիֆայության դաշնակից, ինչպես նաև օգտվել մի շարք արտոնություններից, որոնց մասին արդեն խոսվել է: Այս պայմանագրով հայերը պարտավորվում էին որպես գլխահարկ վճարել չորս դրամ, նաև քանամթերք՝ հիմնականում արաբ զորքի կարիքնե-

րի համար: Հարկերից ազատվում էին հոգևորականները, հե-  
ծելագորը, ազնվականները (ազատներ):

Մեր քննարկած վերոհիշյալ պայմանագրերը, կարծում ենք,  
Երուսաղեմի հայկական համայնքին շնորհած Մուհամմադ  
մարգարեի, Ալի իբն Աբու Տալիբ և Օմար իբն ալ-Խաթտաբ  
խալիֆաների պայմանագրերի վերահաստատումներն են:





**Օ** մայան խալիֆա Արդ ալ-Մալիքը 693թ. Ատրպատականի, Հայաստանի և Ջազիրայի (Վերին Միջագետք) փոխարքա նշանակեց իր եղբորը՝ Մուհամմադ իբն Մրվանին, որը 701-ին գրավեց Հայաստանը, նաև Վիրքը, Աղվանքը, Մերձկասպյան շրջանները: Այդ տարածքներում 701թ. Արաբական խալիֆայությունն ստեղծեց Արմինիա վարչական միավորը՝ Դվին կենտրոնով: Այն վարչականորեն բաժանվում էր հինգ մասի. 1. Բուն Հայաստանը, 2. Վիրքը (Քարթլի), 3. Աղվանքը, 4. Շիրվանը, 5. Դարբանդը (Քաբ ալ-արուար): Իր գոյության և ոչ մի ժամանակահատվածում վերոհիշյալ երկրները վարչականորեն չմիաձուլվեցին, և յուրաքանչյուր երկիր պահպանեց իր վարչական ու էթնիկ կազմը: Այս մասին նշում է ականավոր հայ ականաւոր արևելագետ Ա. Տեր-Ղևոնդյանը<sup>96</sup>: Արմինիա նահանգի ստեղծման նախադրյալները դրվել էին 652թ. հայ-արաբական դաշնագրի կնքումից հետո, երբ Կոստանդ II կայսրը ներխուժեց Հայաստան և գրավեց Դվինը, սպա՝ Վիրքը, Արաբական խալիֆայության աջակցությամբ նրա դեմ Թեոդորոս Ռշտունու հետ դուրս եկան Աղվանքը, Վիրքը և Սյունիքը: 653թ. գարնանը Թեոդորոս Ռշտունին արաբական զորքի օգնությամբ Տայքի կողմից ներխուժեց Սև ծովի ափերն ու գրավեց Տրապիզոնը: Հետո մեկնեց Դամասկոս, և Մուավիան «իշխանութիւն ետ նմա զՀայս եւ զՎիրս եւ զԱղուանս

<sup>96</sup> Հմմտ. Հայ ժողովրդի պատմություն, հատոր II, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1984, էջ 362:

եւ զՄինիս, մինչև ցԿապոհ եւ ցՊահակն ճորայ: Եւ նորայ էր եղեալ նմա՝ ածել զերկիրն զայն ի ծառայութիւն»<sup>67</sup>: Մա այն տարածքն էր, որից հետագայում Արարական խալիֆայության մեջ կազմավորվեց Արմինիա նահանգը: 662-ին, երբ Մուավիան Ներսես Տաեցի կաթողիկոսի (641–661) և հայ նախարարների խնդրանքով Հայոց իշխան է կարգում Գրիգոր Մամիկոնյանին (661–685), հաստատում է նրա իշխանությունը վերոհիշյալ երկրներում: Ինչպես կարծում են արդի հետազոտողները, այս շրջանում արար գահակալները հստակ միտում ունեին՝ ներառելու Հայաստանն ու Այսրկովկասյան երկրները մեկ վարչական միավորի մեջ<sup>68</sup>: Արաքները ճշտորեն հասկացան տարածաշրջանի ուժերի հարաբերակցությունը. Հայաստանը տարածաշրջանի ազդեցիկ երկիրն էր համարվում և քնակչության տեսակետից ամենամիատարրն էր, ուստի, պատահական չէր, որ արաքները Հայաստանն ու Այսրկովկասյան երկրները ընդգրկող շրջանները անվանեցին Արմինիա (Հայաստան)<sup>69</sup>: Այն ղեկավարում էին արաք իշխանավորները, որոնք հայկական աղբյուրներում հայտնի են ոստիկան անունով: Հայաստանը կառավարում էր Հայոց իշխանը, սակայն նրան նշանակում էր խալիֆան: Հայոց իշխանի նշանակումը կատարվում էր որոշ արարողությամբ. խալիֆայի ներկայացուցիչը գալիս էր Դվին և հայտարարում, թե ով էր լինելու Հայոց իշխանը, և վերջինիս նվիրում էր ճոխ ընծաներ՝ ոսկեթել զգեստներ ու նժույգներ: Հայոց իշխանը անմիջականորեն ենթարկվում էր ոստիկանին: Որպես երկրի կառավարիչ՝

<sup>67</sup> Մեքեռս, էջ 169:

<sup>68</sup> Հմմտ. Եղիազարյան Ա., Արարական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 2010, էջ 26:

<sup>69</sup> Makrizian. F. *جزنة أرمينيا الإدارية والإقليمية في عصر الخلافة العربية* العلاقات العربية الأرمينية، المائسي والحاضر، جامعة القاهرة، القاهرة، 2009، ص. 29

Հայոց իշխանն էր «...կարգավորում երկրի բոլոր վարչական գործերը: ...Նա պարտավոր էր ապահովել Հայոց այրուծիի մասնակցությունը խալիֆայության մղած կռիվներին և սպարապետի հետ միասին ներկա լինել կռվի դաշտում»<sup>89</sup>: Հայոց իշխանին ենթակա էին Հայաստանի նախարարները, սպարապետը և կաթողիկոսը: Նրա հեղինակությունը տարածվում էր Վիրքի, Աղվանքի ու Այսրկովկասյան երկրների վրա: Հայոց իշխանի գործառույթը 7-րդ դարի վերջից դարձավ Բագրատունի տոհմի ժառանգական պաշտոնը: 862թ. Աշոտ Բագրատունին դարձավ «իշխանաց իշխան Հայոց և Վրաց»<sup>90</sup>: Իսկ արդեն 885 թ. Մուտամիդ խալիֆան պաշտոնապես ճանաչեց նրան որպես Հայոց թագավոր՝ ուղարկելով թագ, արքաներին վայել իրեր և այլ ընծաներ:

Հայաստանը արաբական շրջանում չկորցրեց իր ներքին ինքնավարությունը, վարչական տեսակետից չկազմալուծվեց, և նրան տրվեց յուրահատուկ պետական միավորի կարգավիճակ:

Այժմ, անդրադառնալով կրոնական բովանդակությամբ առանձնացող մյուս արտոնագրին, նշենք, որ այն հայկական մատենագրության մեջ հայտնի է «Փոքր Մանշուր» անունով: Այս մասին առաջին անգամ հիշատակել է 14-15-րդ դդ. մատենագիր Գրիգոր Տաթևացին. Նա գրում է, որ մյուս Մանհուրը, «փոքր հրովարտակը տունց Հայոց՝ առաջին Մուհամեդի հրովարտակի նմանությամբ՝ քահանաները, ազնուականները և հեծեալները ամեն հարկից ազատ լինեն» և դավանեն իրենց կրոնը<sup>91</sup>:

<sup>89</sup> Տեր-Ղևոնդյան Ա., «Հայոց իշխան»-ը արաբական տիրապետության շրջանում, Հոդվածների ժողովածու, էջ 103:

<sup>90</sup> Մտեփանոս Ասողիկ, էջ 136, 158:

<sup>91</sup> Հմմտ. Գրիգոր Տաթևացի, էջ 53-54:

Խնդրի ուսումնասիրության համար էական նշանակություն ունի այն հարցը, թե երբ և ինչ հանգամանքներում է հայերին տրվել այդ արտոնագիրը: Հայկական և մուսուլմանական աղբյուրները բավական մանրամասն ներկայացնում են այդ հարցերը:

Այսպես, Հայաստանը 7-րդ դարում պահպանել էր իր ներքին ինքնուրույնությունը Բյուզանդական կայսրության և Արաբական խալիֆայության ուժերի հավասարակշռության շնորհիվ: Օմայան Արդ ալ-Մալիք խալիֆան (685–705), ճնշելով խալիֆայության տարրեր շրջաններում ծագած խռովությունները, իրականացնում է կարևոր միջոցառումներ, որոնց շնորհիվ ամրապնդվում է արաբական պետականությունը, և Օմայաններն անցնում են արաբական նվաճումների ավարտման փուլին: Դրա համար անհրաժեշտ էր վերջնականապես կործանել իրենց հիմնական հակառակ Բյուզանդական կայսրությունը, և գրավել Հայկական բարձրավանդակի ռազմավարական դիրքերը: 699-ին Մուհամմադ իբն Մրվանը մի շարք արշավանքներ է ձեռնարկում Հայաստանի դեմ: Ըստ 8-րդ դարի պատմիչ Ղևոնդի՝ Արդ ալ-Մալիք խալիֆայի իշխանության տասնվեցերորդ տարում (այսինքն՝ 701-ին) Մուհամմադ իբն Մրվան զորավարը մեծ արշավանք է սկսում Հայաստանի դեմ<sup>183</sup>: Կարճ ժամանակահատվածում նվաճում է Հայաստանը, նաև Վիրքն ու Աղվանքը: Արաբները վերջնականապես կազմավորում են Արմինիա նահանգը՝ Դվին կենտրոնով: Մուհամմադն Արմինիայի առաջին ոստիկան է նշանակում Աբու Շայխ իբն Աբդալլահին (701–703), որին հայ միջնադարյան պատմագիրներն անվանում են Աբդլա: Ահա ինչ է գրում Հովհաննես Դրասխանակերտցին. «Եւ զկնի Մահմէտի այլ ոստիկան ի Հայս առաքեցաւ Աբդլլահ անուն, այր ժանտ, ժաչրի եւ ապե-

<sup>183</sup> Հմմտ. Ղևոնդ, էջ 29:

րասան»<sup>84</sup>, որը կայանավորում և կտտանքներով տանջում էր հայոց իշխաններին: Նա, շղթայելով հայոց իշխաններին, Սմբատ Բագրատունուն և Սահակ կաթողիկոսին, ուղարկում է Դամասկոս ու սկսում իր կրոնական հալածանքները:

Օմայյան խալիֆայության հարկային ծանր լուծը և կրոնական հալածանքները վրդովնցրել էին հայոց հայատակ աշխարհի բոլոր խավերին: Արաբական իշխանությունները Հայաստանում չէին ուզում ճանաչել հայ նախարարների հողատիրական իրավունքները, արար կառավարիչը (Աբդլան) վատ խորհուրդ էր հղացել՝ «մեջտեղից վերացնելու Հայոց աշխարհի նախարարական ազատախուժ տոհմերը՝ իրենց հեծյալներով հանդերձ»<sup>85</sup>: Հայ նախարարական դասը ոչնչացնելու այս ծրագիրը շուտով հայտնի դարձավ հայոց իշխան Սմբատ Բագրատունուն (703–726), որը գումարեց նախարարների գաղտնի ժողով: Այլ ելք չգտնելով՝ վերջիններս որոշեցին հեռանալ Բյուզանդական կայսրություն<sup>86</sup>: Ակոռի ավանի մոտ ութհազարանոց արաբական կայազորն սկսում է հետապնդել նրանց, իսկ հայ նախարարները քանակ են դնում Վարդանակերտ ավանում: Արաբները չեն ցանկանում քանակցել նրանց հետ, և 703-ին Վարդանակերտում տեղի է ունենում դաժան ճակատամարտ, որն ավարտվում է հայերի հաղթանակով: Ղևոնդը գրում է, որ «դառնաշունչ օղջ առավել ևս սաստկանալով զրկեց Իսմայելի զորքերին իր արի զորությունից»<sup>87</sup>: Հայոց զորքերն իրենց հաղթության ավետիսն առաքում են Բյուզանդիայի կայսերը՝ ուղարկելով նրան ընտիր երիվարներ: Երբ արաբների պարտության լուրը հասնում է Աբդ ալ-Մալիքին, նա իր եղբորը՝ Մրվանին, հրամայում է հարձակվել

<sup>84</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 94:

<sup>85</sup> Ղևոնդ, էջ 31–32:

<sup>86</sup> Հմմտ.Ստեփանոս Ասողիկ, էջ 233:

<sup>87</sup> Ղևոնդ, էջ 33:

Հայաստանի վրա և արյան մեջ խնդդել ապստամբությունները, որոնք ծագել էին Վարդանակերտի ճակատամարտից հետո Հայաստանի տարբեր վայրերում՝ Ռշտոնյաց գավառում, Վանանդում և այլուր: Հավանաբար Մրվանի հետ Հայաստան է գալիս նաև Ոկրայ զորավարը, որի մասին հիշատակում է Հովհաննես Դրասխանակերտցին<sup>196</sup>: Հարավորություն չունենալով անհրաժեշտ դիմադրություն ցույց տալ թշնամուն՝ հայոց իշխանները Սահակ Ձորափորեցի կաթողիկոսին մի շարք նպիսկոպոսների հետ ուղարկում են արարների մոտ՝ հաշտության բանակցություններ վարելու: Երբ նրանք հասնում են Հարբան, կաթողիկոսը, զգալով մոտալուտ մահը, նամակ է գրում արաբ զորավարին և խնդրում իր նամակը մահից հետո հանձնել, որտեղ հաստատում էր, որ հայոց ազգը պատրաստ է հպատակվել, դրա փոխարեն նա խնդրում էր դադարեցնել արյունահեղությունն ու հանդուրժողականություն ցուցաբերել: Մուհամմադ զորավարը (ըստ Դրասխանակերտցու՝ Ոկրայը), ընդառաջելով կաթողիկոսի խնդրանքին, գրավոր երդմնագիր է տալիս հայոց հովվապետի հետ նկած նպիսկոպոսներին, որոնք այն բերում են Հայաստան՝ կաթողիկոսի մարմնի հետ միասին<sup>197</sup>: Այդ երդման գրով երաշխավորվում էին միայն կրոնական դավանանքի ազատությունը, քրիստոնեական հավատի հանդուրժելիությունը, բայց ոչ նախարարների հողատիրական ժառանգական իրավունքները: Հենց այս պայմանագիրն էլ հայկական մատենագրության մեջ հայտնի է «Փոքր Մանշուր» անունով, որը, ցավոք, մեզ չի հասել, նրա բովանդակությունը ևս չի պահպանվել հայ պատմագիրների երկերում:

<sup>196</sup> Հմմտ. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 95:

<sup>197</sup> Հմմտ. Կփրակոս Գանձակեցի, 63-64, Մեծին Վարդանայ Բարձրբերդցիոյ պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1961, էջ 99:

703-ի ապստամբության, հաշտության պայմանագրի և հարակից դեպքերի մասին հիշատակում է նաև մուսուլմանական պատմագրությունը<sup>190</sup>: Մուսուլման պատմիչները չեն նշում, որ հայերի ապստամբությունից հետո Հայաստանը չի ճնշվում Խալիֆայության կողմից, քանի որ Սահակ կաթողիկոսի խնդրանքով արաբական իշխանությունները ժամանակավորապես հրաժարվում են վրեժխնդիր լինելուց: Ժամանակակից արաբ պատմաբանները ևս, անդրադառնալով հայոց պատմության այս դրվագներին, հիշատակում են նաև Սահակ կաթողիկոսի՝ Հարբան գնալու և արաբ զորավարին նամակ գրելու մասին՝ ակներևաբար օգտագործելով հայկական աղբյուրները<sup>191</sup>:

Ինչպես տեսանք, «Փոքր Մանշուրը» Հայոց աշխարհին էր տրվել հիմնականում Սահակ Զորափորեցու գրած նամակ-խնդրագրի հիմքի վրա, որով նա խաղաղություն և հաշտություն էր խնդրում արաբ զորավարից:

Հայ պատմագրության մեջ առաջին հեղինակը, որ հիշատակում է կաթողիկոսի՝ Մուհամմադ զորավարին գրած նամակի մասին՝ տալով նրա բովանդակությունը, պատմիչ Աևոնդն է: Ըստ նրա՝ կաթողիկոսը, հասնելով Հարբան և զգալով իր մահը, աղերսական նամակ է գրում Մուհամմադ զորավարին: Հայոց հովվապետը նամակում ամիրապետի հետ դաշինք էր կնքում կենդանի Աստծու անունով՝ ըստ արարների նախահայր Իսմայելի և Ալլահի հետ կնքած ուխտի, խնդրում նրան խաղաղություն հայ ժողովրդի համար՝ խոստանալով հարկեր վճարել: Կաթողիկոսը հորդորում է արաբ զորավարին հեռու մնալ ավարառությունից ու արյունահեղությունից, որի շնոր-

تاريخ خليفة بن خياط، تحقيق الدكتور أكرم ضياء العمري، ساعدت جامعة بغداد على نشره، 1977م، 1357م، ص. 843-943، الملائري، فتوح البلدان، ص. 205، Իրևն ալ-Ասիզ, էջ 65:

الترك ع.، مسغعات من تاريخ الأمة الأرمنية، مطبعة الأهرام، حلب، 1960م، ص. 105.

հիվ միայն իր ժողովուրդը կհնազանդվի նրան: Եվ խնդրում է կամքի ազատություն, հակառակ դեպքում Տերը շուտ կտա նրա գորքի սիրտը, և զինվորները չեն կատարի զորավարի կամքը: Երբ Մուհամմադը հասնում է Հարրան ու կարդում այդ նամակը, կանգնում է հանգուցյալի մարմնի մոտ՝ խոնարհվելու նրան: Հետո բռնում է կաթողիկոսի ձեռքը՝ ասելով, որ այս գրությունից ճանաչել է նրա իմաստությունը, ով, որպես քաջ հովիվ, սրի դեմ է դուրս եկել: Մուհամմադը խոստանում է կատարել կաթողիկոսի խնդրանքները, «իսկ եթե սխալեցից ես քան մի յամնայն բանից քոց, եկեսցեն ի վերայ իմ ամենայն նզովքն»<sup>100</sup>: Հայ եպիսկոպոսները, որոնք կաթողիկոսի հետ Հարրան էին եկել, Մուհամմադ իբն Մրվանից գրավոր երդման գիր են վերցնում ու վերադառնում Հայաստան:

10-րդ դարի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին ևս իր պատմության մեջ անդրադառնում է վերոհիշյալ դեպքերին՝ հավելելով նոր մանրամասներ, այն է՝ կաթողիկոսը, ժամանելով Հարրան և զգալով իր մահը, նամակ է գրում արաբ զորավարին՝ փորձելով համոզել նրան հրաժարվել իր չար մտադրությունից և չարչավել Հայաստան: Նա խնդրում է, որ մեռնելուց հետո այդ հրովարտակը դնեն աջ ձեռքում, որպեսզի Ոկրայը վերցնի այն, «թերեւս զղջասցի չգործել զանօրէն մտածութիւն իւր»<sup>101</sup>: Արաբ զորավարը, իմանալով այս մասին, հրամայում է մինչև իր գալը չթաղել կաթողիկոսին, իսկ երբ գալիս է, ողջունում է նրան իր լեզվով. «Ողջունէր զնա ի լեզու իւր Սալամալէք ասելով»: Կաթողիկոսը «հոգոյն ազդունէն զձեռն սրբոյն, որ անշնչութեամբ էր խափանեալ՝ շարժեաց... ընդդէմ ոստիկանին ի պատճառս աղերսանաց», - գրում

<sup>100</sup> Պատմութիւն Աւստղեայ մեծի վարդապետի հայրց, էջ 30:

<sup>101</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 96, տե՛ս նաև Тер-Гевондян А., Армения и Арабский халифат, с. 77:



է պատմագիրը<sup>194</sup>: Կարդալով նամակը՝ գորապետը որոշում է կատարել կաթողիկոսի խնդրանքը և նամակ է գրում հայոց նախարարներին՝ այն հայրապետի մարմնի հետ Հայաստան ուղարկելով և ներելով նրանց բոլոր հանցանքները, որ գործել էին իր դեմ:

Պատմական վերոհիշյալ դեպքերին ու անցքերին են անդրադարձել նաև միջնադարյան հայ պատմագիրներ Ստեփանոս Ասողիկը, Սամուել Անեցին, Մխիթար Անեցին, Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին՝ աղբյուր ունենալով Ղևոնդին և Հովհաննես Դրասխանակերտցուն: Վերոհիշյալ անցքերն առկա են նաև Անանուն գրուցագրի պատմության մեջ (10–11-րդ դար), որը վերագրվել է Շապուհ Բագրատունուն:

Այստեղ ևս պատմվում է, թե ինչպես Սահակ կաթողիկոսը հայոց իշխանների խնդրանքով ընդառաջ է գնում Մահմեդ գորավարին՝ իր հետ տանելով «զգիր Մահմեդի հար նորայ եւ օրինագրին նոցա, թէրես տեսցէ Տէր Աստուած զտարակուսանս մեր եւ ի ձեռն քո աշխատութեանդ ապահով արասցէ զմեզ»<sup>195</sup>: Ինչպես տեսնում ենք, Անանուն գրուցագրի՝ արդեն 10–11-րդ դարերում կազմված պատմությունը վկայում է, որ Սահակ Չորափորեցի կաթողիկոսը, ճանապարհվելով Հարրան, հայ նախարարների խորհրդով իր հետ տանում է «զգիր(ը) Մահմեդի»: Ամենայն հավանականությամբ՝ արդեն 10-րդ դարում հայ պատմական իրականության մեջ առկա էր Մուհամմադ մարգարեի՝ Հայոց աշխարհին տրված «գրի» մասին ավանդությունը, որն էլ հիշատակում է Անանուն գրուցագիրը:

Այսպես՝ պատմական վերոհիշյալ դեպքերը՝ կապված Սահակ կաթողիկոսի հետ, հետագայի փաստաթղթերում ենթարկվել են որոշակի փոփոխությունների: Երուսաղեմի

<sup>194</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 97:

<sup>195</sup> Անանուն գրուցագիր, էջ 25:

Ս. Հակոբ եկեղեցում պահվող սույն թեմային առնչվող ձեռագրերում ևս քննության են առնված և նկարագրված Սահակ կաթողիկոսի ճանփորդությունը Հարրան, մահը, Մուհամմադ զորավարին ուղղած նամակը: Դեպքերի նման շարադրանքն իր բովանդակությամբ համընկնում է հիմնականում Ծապուի Բագրատունուն վերագրվող պատմության մեջ առկա դեպքերի շարադրանքին՝ որոշակի հավելումներով: Այս փաստաթղթում նշվում է, որ «703թ. Մուհամադ դարձեալ ժողովեալ զարսրագում կամէր ելանել ի յաշխարհն Հայոց, իսկ իշխանն Հայոց Թէոդորոս Ռշտունի եկեալ անկաւ ի առաջի Սրբոյ Հայրապետին Սահակայ...»<sup>106</sup>: Ինչպես տեսնում ենք, այս փաստաթղթում Սահակ կաթողիկոսը ոչ թե նախարարների, այլ Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու թախանձանքով է որոշում զնալ արաբ զորավարին ընդառաջ, մինչդեռ ակնհայտ է, որ այդ ժամանակաշրջանում Ռշտունին արդեն չկար: Միգուցե նրա անունն ու խոսքերը հավելվել են՝ էլ ավելի մեծ հանդիսավորություն և պատկառանք հաղորդելու նշյալ դեպքերին: Այստեղ ևս հիշատակվում է Մահմեդի (Մուհամմադ մարգարեի) տված գրի մասին, որը Սահակ կաթողիկոսը պետք է ներկայացներ արաբ զորավարին: Ըստ այդ գրի՝ Հայոց աշխարհը դառնում էր հարկատու, իսկ նրանք պետք է հոգ տանեին ու պաշտպանեին հայերին, և եթե զորավարը կատարեր այդ պայմանները, ապա Աստծու և նրա հայր Իսմայելի օրհնությունները կլինեն նրա հետ, հակառակ դեպքում «դարձուցէ Տէր Աստուած զսիրտ միաբանել այդ ընդ քեզ, եւ մի ուղղեսցին զնացք ուրից քոյ եւ նկուն արասցէ Տէր Աստուած զքեզ առաջի թշնամեաց, ձեռք արանց պատերազմողաց քոյ թուլացին,

<sup>106</sup> Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց, կազմեց եպս. Կ. Պողոսեան, տպարան Սրբոյ Յակոբեանց, հատոր I, Նրուսաղիմ, 1966, էջ 17:

եւ աղեղունք դոցա փշրեսցին»<sup>107</sup>: Այս փաստաթղթում անկա  
 դեպքերի շարադրանքն ակնեւրեւաբար վերցված է 10-11-րդ  
 դարերի պատմագիր Շապուի Բագրատունուն վերագրվող  
 երկից՝ որոշակի հավելմամբ՝ Թեոդորոս Ռշտունու անվան  
 հիշատակմամբ, ինչը, հավանաբար, պետք է մեծ տպավորու  
 թյուն գործեր: Պատմական թղթի աղապտացիան նորություն  
 չէ, և հատկապես միջնադարում մենք հաճախ ենք հանդիպում  
 այդ երևույթին: Հետագա դարերում, երբ ուժեղանում է քրիս  
 տոնյա և հայ րևակության հարստահարությունը մուսուլման  
 իշխողների կողմից, հայկական համայնքների իրավունքնե  
 րը պաշտպանելու համար շրջանառության մեջ էին դրվում  
 պայմանագրեր, որոնց հիմքում ընկած էր մեր կողմից ար  
 դեն հիշատակված և Մուհամմադ մարգարեի դաշնագրերի  
 բովանդակությունը, ինչպես նաև Սահակ կաթողիկոսի հետ  
 կապված վերոհիշյալ դեպքերը: Այս ամենին հավելվում էին  
 պատմական դեմքերի և դեպքերի փաստեր, մուսուլմանական  
 կրոնաիրավական համակարգի մեջ մշակված հարկային քա  
 ղաքականության նորմեր և այլն: Փաստաթուղթն անընդհատ  
 փոփոխվում էր, հարմարվում ժամանակին ու պայմաններին՝  
 միշտ կրելով նախնյաց հեղինակության ստվերը, որը և հնա  
 բախորհնս կարգավորում էր հրատապ քաղաքական հարաբե  
 րությունները:

«Իսկ իշխանն Հայոց Թեոդորոս Ռշտունի եկեալ անկա  
 առացի Սրբոյ Հայրապետին Սահակայ եւ ասէ. Սուրբ Հայր...  
 Եւ արդ աղաչեմ զքեզ, արի եւ գնա ընդատաց նորայ եւ տար  
 զգիրս Մահմեդի, զոր տուեալ է մեզ արեւնստուն նոցա»<sup>108</sup>:  
 Եվ իրոք, անգնահատելի են Սահակ Ձորափորեցի կաթողի  
 կոսի ծառայությունները, որը, «երկար պաշտոնավարութենէ

<sup>107</sup> Նույն տեղում:

<sup>108</sup> Նույն տեղում:

յօզնած, քազմապիսի փորձանքներէ անցած, ներքին եւ արտաքին վիշտներով տազնապած, արքորներով եւ քանտարկութիւններով տկարացած», շտապում է Ոկրայի մտտ, քանի դեռ նրա վրիժառու քանակը Հայաստան չէր հասել: Մեծ է նաև կաթողիկոսի՝ արարերենով գրած նամակի արժեքը, որն ընթերցելուց հետո Ոկրան «կյուզուի իբրեւ թէ անդիի աշխարհքէ խորհրդաւոր պատգամ մը լսէր: Նամակին խորհրդաւոր օրհնութիւնները եւ սպանոնալիքները խորին տպաւորութիւն կը գործեն կարծես երկնային ձայն մը Հայոց հավատարմութեն երաշխաւոր ըլլար, այնչափ վստահօրէն կը համոզուի Ոկրայ անոնց անխարդախ հպատակութեան վրայ»: Սահակ Ձորափորեցի կաթողիկոսը նաև լավագոյն արաբագետ էր, որի գրած նամակը «ոճի վեհութեան հետ արաբագիտութեն առանելութիւնն ալ կը հաստատէ, քանի որ Սահակ իբրով իսկ ձեռամբ գրեց և Ոկրայ ինքնին ընթերցաւ զգիրն»<sup>109</sup>:

Այսպիսով, հայ միջնադարյան մատենագրութեան մեջ հիշատակված «Մեծ» և «Փոքր» մանշուրները թվագրվում են 8-րդ դարի սկզբով, որոնք հայ քնակչությանը շնորհել է Օմայան փոխարքա Մուհամմադ իրն Մրվանը: Ինչպես արդեն նշեցինք, «Մեծ Մանշուր» պայմանագիրը վերաբերում է հայ քնակչության վրա դրված հարկային պարտավորություններին, ի տարբերություն «Փոքր Մանշուրի», որի տեքստը մեզ չի հասել, այն հիմնականում ունի կրոնական բնույթ: Պայմանագրում երաշխավորվում էր կրոնական ազատությունը: Ըստ այս երկու մանշուրների բովանդակության՝ բացատրվում են նրանց անունների միջև եղած տարբերությունները. «Մեծ Մանշուր», քանի որ այս պայմանագրում, կրոնական դավանանքի ազատությունից բացի, սահմանվում են նաև քնակչության հարկային պարտավորությունները: Կարծում ենք՝

<sup>109</sup> Օրմանյան Մ., Ազգապատում, հատոր Ա, սյունակ 917:

«Փոքր Մանշուրի»՝ միայն կրոնական ազատությանը վերաբերող թույլատրանքը բացատրվում է հենց Սահակ կաթողիկոսի անձով, որը, լինելով Հայաստանի հոգևոր առաջնորդը, իր վրա է վերցնում նաև երկրի քաղաքական առաջնորդի դերը՝ ընդատաջ գնալով արաբ զորավարին, ջանում է հաշտություն կնքել համայն հայության անունից: Եվ արաբ զորավարի՝ հայ բնակչությանը տված «Փոքր Մանշուրը» գուցե նաև հարգանքի ու ակնածանքի մի յուրօրինակ տուրք էր հայոց կաթողիկոսին:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ հայ նախարարական դասը միշտ էլ ստացել է իր հողատիրական ժառանգական իրավունքները ամրագրող փաստաթղթեր արաբ նվաճողներից: Այդ փաստաթղթերը նախադրյալներ են եղել հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման համար: Եվ այդֆետոր Ա. Կոզմոյանը, անդրադառնալով այն խնդրին, թե ինչու հայերն իսլամ չընդունեցին, գրում է. «Վերագրել դա ազգային հոգեկան կերտվածքին կամ հայոց կրոնական, քաղաքական, էսթետիկական գիտակցության մեջ քրիստոնեության անուր արմատներին, գուցե նաև արաբական պետության կազմում ծայրամասային լինելու հանգամանքին, 7-րդ դարում հայոց մեջ ամուր թագավորության եւ պետական ռազմավարության բացակայությանը, հոգևոր իշխանության առաջատար դերին, կամ այս ամենը միասին, այնուհանդերձ՝ հայերը հավատափոխ չեղան»<sup>200</sup>:

<sup>200</sup> Կոզմոյան Ա., Ղուրանը հայոց մեջ «Մուրիսի» իրաւարարւթւթրոն, Երևան, 2003, էջ 19, տե՛ս նաև Козмова А., Средневековые армянские переводы Корана в рукописях Матенадарана, Письменные памятники Востока, издательство Восточной литературы, СПб, 2005—2(3), с. 235-239.



## ՄՈՒՏԱՄԱՍՅ ՄԱՐԳԱՐԵՒ ԵՎ ԱՍԻ ԻՔԵ ԱՐՈՒ ՏԱՆԻՔ ԽԱՆԻՑԱՅԻ ԱՆՈՒՆԵՆՔԻՎ ԱՐԱՐԱՏԱՐ ԳԱՆՏԱԳՐԵՐԸ՝ ՄԱՏԵՆԱԳՐԱՆԵ ԶԵՌԱԳԻՐ ՅՈՆԳԵՐՈՒՄ

Մուսամմադյան դաշնագրերի բազմաթիվ օրինակներ են պահպանվել Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ձեռագրական հավաքածուում: Այդպիսի մի վավերագիր լուսարանել է Հ. Փափազյանը: Այն վերաբերում է հայ հոգևորականության հարկային ինունստետի խնդիրներին, որի վավերացումը կատարվել է 1583թ. Գրիգորիս Աղթամարցի կաթողիկոսի (1512–1544) նախաձեռնությամբ:

Դաշնագրի վերջում նշվում է, որ այս սրբազան գիրը գրվել է մարգարեի «նայտնվելու չորրորդ տարում՝ Մուավիա իբն Մուֆյան իբն Մաքումի ձեռքով»<sup>201</sup>:

Պայմանագրում հիշատակություն կա Սահակ Ձորավորնցու (այս փաստաթղթում Իսահակ կաթողիկոսի)՝ Մուսամմադ զորավարին ընդատաջ գնալու, նրան խնդրանքով դիմելու և այդ խնդրանքի հիման վրա պայմանագիր ստանալու մասին: Սակայն այստեղ Մուսամմադ զորավարի փոխարեն, որին ընդատաջ է գնում կաթողիկոսը, հիշատակվում է Մուսամմադ մարգարեի անունը, որը նոր հոդեր նվաճելու մտադրությամբ Մեքքայից և Մադինայից մոտեցել էր սահմանին (հավանաբար՝ Հայաստանի): Ակնհայտ է, որ այս հատվածում կա պատմական մի փաստի աղավաղում. Մուսամմադ մարգարեն իր քաղաքական և կրոնական գործունեությունը ծավալել է հիմ-

<sup>201</sup> Հմմտ. Փափազյան Հ., Վավերագիր 21, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտականք, պրակ Ա (ԺԵ-ԺԶ դդ.), էջ 69:

նականում 610-632թթ., իսկ Սահակ կաթողիկոսը՝ 7-րդ դարի վերջին և հաջորդ դարասկզբին: Եթե հայ միջնադարյան պատմիկները հավաստում են, որ Սահակ կաթողիկոսը, հասնելով Հարրան, իր մահից հետո թողնում է նամակ՝ ուղղված արաբ զորավարին՝ իր երկրին խաղաղություն, դավանանքի ազատություն շնորհելու խնդրանքով, ապա այս փաստաթղթում արդեն կաթողիկոսի խնդրանքը որոշակի է, այն է՝ մարգարեի հրովարտակով Հայաստանի մի շարք նահանգների ու շրջանների, նրան հարակից վայրերի բնակիչներն այսուհետև եկեղեցական տուրքեր վճարեն Աղթամար վանքին: Ինչպես տեսնում ենք, այս արդեն արձանագրում է պատմական այլ ժամանակաշրջանին բնորոշ փաստեր: Այսինքն՝ պատմական փաստաթուղթը հարմարվում է տվյալ պահին ու ժամանակին: Ենթադրում ենք, որ այս փաստաթուղթը կազմվել է հենց Աղթամարի կաթողիկոսարանի նախաձեռնությամբ՝ Ոստանի կառավարչից (փաստաթղթում՝ հաքիմ) որոշակի արտոնություններ ձեռք բերելու համար: Ոստի Կարախան բեկից վերոհիշյալ խնդրանքի և նաև հայ բնակիչների իրավունքների համար հատուկ թույլտվություն ստանալու համար այս փաստաթուղթը կազմվել է Մուհամմադ մարգարեի անվան հիշատակմամբ, որը կարող էր իր ներգործությունն ունենալ Կարախան բեկի և մուսուլման ֆակիհների վրա՝ հեշտացնելով նաև այս փաստաթղթի վավերացումը հետագա դարերի մուսուլման իշխողների կողմից:

Այս պայմանագրում արձարծվում են ոչ միայն կրոնական բնույթի խնդիրներ, այլ նաև հարկատվության, փոխադարձ պարտավորությունների վերաբերյալ դրույթներ:

Հիշարժան են նաև Մատենադարանի՝ Կաթողիկոսական դիվանում պահվող պարսկերեն, արաբերեն վավերագրերի օրինակները, որոնցից մեկը՝ գրված արաբերենով և թարգ-

մանված հայերենի, Մսհմնդի (այսինքն՝ Մուհամմադ մարգարեի)՝ Սահակ վարդապետին տված պայմանագիրն է, ըստ որի՝ հայերը մուսուլմանների տիրապետության տակ ստանում էին լայն իրավունքներ՝ իրենց կրոնին հետևելու և եկեղեցիներ կառուցելու համար: Հոգևորականներն ազատվում էին բոլոր հարկերից: Ձեռագիրը թվագրված է հիջրայի 4-րդ դարով (626), արտագրված է Կիրակոս կաթողիկոսի օրոք (1441-1443) Ոստանում (հավանաբար՝ Կիրակոս Ա Վիրապեցին) և հաստատված Ոստանի կառավարիչների կնիքով<sup>202</sup>:

Վերոհիշյալ փաստաթղթերի քննարկումից պարզ է դառնում, որ հետագա դարերում այս պայմանագրերը ընդօրինակվել են, դրանց ճշմարտացիություն հաղորդելու համար օգտագործվել են հիմնականում, քրիստոնյա և մատնավորապես՝ իսլամի առաջին դարում հայ բնակչության և արաբ զորավարների միջև կնքած դաշնագրերի՝ «Մեծ» ու «Փոքր» մանշուրների պայմանները՝ հիմնականում հոգևորականների, հայ եկեղեցու իրավունքների, հարկատվության վերաբերյալ:

Այսպես՝ պատմաբան Լեոն զրում է, որ «սրբազան օրենքը բացարձակապես հրամայում էր ստորացնել, հարստահարել ուայան»<sup>203</sup>, բաց վերջինս էլ իր հերթին հրամցնում էր մուսուլմանների համար նվիրական նշանակություն ունեցող թղթեր, որոնք պիտի պաշտպանեին իրեն<sup>204</sup>: Կ. Պուսի հայոց Ավետիք պատրիարքը, 18-րդ դարի սկզբին ցանկանալով պաշտպանել հայերին՝ որպես քրիստոնյա ազգի, Մտամբուլի հոգևոր առաջ-

<sup>202</sup> Հմմտ. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ ևս, վավերագիր է:

<sup>203</sup> Ուայաթ (արաբ.) - Սկզբնաղբյուրներում գործածվում է նպատակ և հարկատու ժողովրդի, հատկապես՝ նստակյաց հողագործ գյուղացիության իմաստով - Փափազյան Հ., Վավերագիր 21, Մատնադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ, սջրակ Ա (ԺԵ-ԺԶ դդ.), էջ 118-119:

<sup>204</sup> Հմմտ. Լեո, Երկերի ժողովածու, հատոր 3, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1969, էջ 120:



նորդ շնյի ուլ-խալամի մոտ ասում է. «Ջձեր Մահմէտն, Օմարն յորժամ տիրեցին յաշխարհով... մեր մեծաւորքն իւրեանք իւրեանց... խնդրեցին թէ զմեզ խարան կապէ եւ մեր հաւատն քունենք... ևւ նոքա հաւանեցան, թէ Մահմէտն եւ թէ Օմէրն, տվին ի ձեռս մեր շադա աթլամա, երթմամբ ուխթ եւ դաշխք եղին»<sup>205</sup>: Եվ նրբ շնյի ուլ-խալամը ցանկանում է իմանալ՝ որտեղ են այդ գրավոր արտոնությունները, Ավետիք պատրիարքն ասում է, որ իր մոտ է Օմարի հրովարտակի ոսկետառ պատճենը, իսկ քնագիրը Երուսաղեմում է: Նա շնյի ուլ-խալամին է ներկայացնում իր ունեցած պատճենը, որն էլ այս փաստաթուղթը տալիս է սուլթան Մուստաֆային: Այս պատմությունը վկայում է մուհամմադյան դաշնագրերի ունեցած դրական դերի մասին, որոնք անընդհատ ընդօրինակվում և րազմացվում էին: Տարբեր մոտեցումներ և ձևակերպումներ ենք տեսնում այդ երևույթի հենքը ուսումնասիրողների աշխատություններում: Հայտնի արևելագետ պատմաբան Ա. Տեր-Ղևոնդյանի դիտարկմամբ՝ հայ պատմագրության մեջ ամրագրվել է ավանդությունն այն մասին, որ Մուհամմադ մարգարեն պայմանագիր է կնքել հայերի հետ՝ նրանց իրավունքները ճանաչելու ու քրիստոնեական կրոնն ազատորեն դավանելու մասին<sup>206</sup>: Մեկ այլ հայտնի պատմաբան Հ. Անայանը, որն ուսումնասիրել է այդ խնդիրը և մեզ թողել գիտական եզրահանգումներ դաշնագրերի մասին, գրում է. «Հայաստանում արաբական, պարսկական և թուրքական տիրապետութիւնների շրջանում, հայերը բարեացակամ վերաբերմունք եւ որոշ արտոնութիւններ ապահովելու ձգտումով, աշխատել են ժամանակ առ ժամանակ այս դաշնագրի վերանորոգում ու վաւերացում օրինակներ ձեռք

<sup>205</sup> Նույն տեղում:

<sup>206</sup> Հմմտ. Тер-Гевондян А., Армения и Арабский халифат, с. 186:

քերել մահմեդական իշխողներից»<sup>207</sup>: Հ. Անասյանը համակարգել է Մատենադարանի արաքատառ ֆոնդի թարգմանությունները՝ ըստ իրենց սկզբնաղբյուրների՝ արաբերեն, թուրքերեն և պարսկերեն<sup>208</sup>:

Մատենադարանում պահվող և № 2622, 2826, 6984 ձեռագրերում գեոեղված վերոհիշյալ պայմանագրերի բովանդակությունները հիմնականում համընկնում են միմյանց: Այդ դաշնագրերում նշվում է, որ դրանք տրվել են քրիստոնյա և այլ ազգերի, որոնք բնակվում են Արաքիայի արևելքում և ամբողջ աշխարհում: Մուհամմադի հովանավորության տակ են անցնում քրիստոնյաների եկեղեցիները, աղոթատները. քրիստոնյաները կարող են նորոգել իրենց եկեղեցիներն ու վանքերը մուսուլմանների աջակցությամբ<sup>209</sup>: Եթե քրիստոնյան հանցանք կատարի, ապա մուսուլմանը պարտավորվում է նրան օգնել<sup>210</sup>: Նշվում է նաև, որ քրիստոնյաները, որպես զլխահարկ, պարտավորվում են վճարել չորս դինար, իսկ «եթե ի ծովու հանող մարգարտաց իցէ եւ կամ ցամաքի, տէր հանքայ ոսկոյ եւ արծաթոյ», տասներկու դիրհեմ պետք է վճարի<sup>211</sup>: Այս պայմանագրերի ծավալը քավական մեծ է, պայմանները՝ մեծաքանակ և քրիստոնեամետ, որոնցով էլ դրանք հակադրվում են Մուհամմադի և արաբական նվաճումների ժամանակաշրջանում կազմված դաշնագրերին: Ենթադրվում է, որ վերոհիշյալ փաստաթղթերը կրկնօրինակվել են 19-րդ դարում:

<sup>207</sup> Անասյան Հ., Մանր երկեր, էջ 627:

<sup>208</sup> Տե՛ս նախ տեղը, էջ 628—632:

<sup>209</sup> Հմմտ. Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիր № 2622, էջ 115բ, № 6984, էջ 303բ, № 2826, էջ 243ա—244բ:

<sup>210</sup> Հմմտ. Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիր № 2622, էջ 116ա:

<sup>211</sup> Հմմտ. Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիր № 2622, էջ 116բ, № 6984 ձեռագիր, էջ 304ա:

Չնայած այս ձեռագրերը իրարից տարբերվում են քառային ձևակերպումներով, սակայն ունեն բովանդակային ընդհանրություններ միմյանց և արաբատառ տարբերակների հետ: Այսպես №2622 ձեռագիրը ընդօրինակվել է 1851թ. Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում, թարգմանվել է պարսկերեն քնագրից, որը պահվում է այդ վանքում<sup>22</sup>: Առանձնացրել ենք նաև Մատենադարանի արաբատառ ֆոնդի՝ Մուհամմադ մարգարեի անունով երկու ձեռագիր: № 358 ձեռագիրը երկլեզվյա է՝ գրված արաբերեն, տողատակում՝ պարսկերեն, և ընդօրինակված հավանաբար 17-րդ դարում:

Պայմանագրով Ալլահի մարգարեն պարտավորվում է անհրաժեշտության դեպքում իր գործով և հետևորդներով պաշտպանել քրիստոնյաներին: Վերջում նշվում է, որ այս դաշնագիրը գրել է Մուավիա իբն Աբու Մուֆյանը՝ հիջրայի 4-րդ դարում (625–626)<sup>23</sup>: Այս դաշնագրի պայմանները լիովին համընկնում են Նաջրանի քրիստոնյա բնակչությանը Մուհամմադի տված պայմանագրի «քրիստոնեական» տարբերակի հետ: Ձեռագրի տեքստը ուղղագրական սխալներով է, օգտագործված է նաև քավական ուշ շրջանի քառապաշար, ինչն էլ վկայում է, որ այդ փաստաթուղթը գրվել է հետագայում: Եվ Մուավիա իբն Մուֆյանի անվան առկայությունն այս փաստաթղթում ակնարկ է թեոդորոս Ռշտունու և Ասորիքի կուսակալ Մուավիայի 652թ. կնքած դաշնագրի մասին:

Մյուս ձեռագիրը պարսկերեն է՝ ընդօրինակված հավանաբար 17-րդ դարում, ուր կրկնվում են վերոհիշյալ դաշնագրի

<sup>22</sup> Հմմտ.Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիր № 2622, էջ 116բ:

<sup>23</sup> Հմմտ.Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի արաբատառ ձեռագիր №358:

հիմնական դրույթները<sup>24</sup>: Գլխահարկի չափը №358 ձեռագրում նշված է չորս դինար չափով, հետո ջնջված է և ուղղված՝ չորս դիրհեմ, հարուստներից գանձվող հարկի չափը՝ տասներկու դիրհեմ: Ձեռագրի՝ պարսկերենով գրված տողատակում գլխահարկի չափը նշված է դինարով: №272 պարսկերեն ձեռագրում գլխահարկի չափը նշված է չորս դինար և տասներկու դիրհեմ: Իսկ թարգմանական տարբերակներում №2622 և 6984 ձեռագրերում գլխահարկի չափը նշված է չորս դինար և տասներկու դիրհեմ չափով: Հայտակ ժողովրդից գանձվող հարկի չափը տարբեր ժամանակներում և շրջաններում տարբեր է եղել: Հիշյալ փաստաթղթերի ընդօրինակման շրջանում (15-19-րդ դարեր) վճարվող հարկաչափը փոփոխությունների է ենթարկվել, ինչից էլ, հավանաբար, առաջացել են հարկաչափերի անհամապատասխանությունները:

Ուսումնասիրել ենք նաև Մատենադարանի՝ Ալի իբն Աբու Տալիբ խալիֆայի անունով դաշնագրերը: № 357 արաբատառ ձեռագիրն ընդօրինակվել է 1694թ.: Այն գրված է մանր տառերով և շատ հաճախ անընթեռնելի է:

Այս ձեռագրի թարգմանության ժամանակ օգտվել ենք Լ. Մինասյանի հրատարակած և Ալիի անունը կրող պայմանագրի պարսկերեն տարբերակից, քանի որ այս երկու դաշնագրերը բովանդակությամբ հիմնականում միմյանց համընկնում են<sup>25</sup>: Պայմանագրի սկզբում նշվում է, որ այն գրել է քուֆի գրով Հիշան Ութրա իբն Վակասը՝ Ալի իբն Աբու Տալիբի հրամանով: Ի տարբերություն նախորդ՝ № 358 արաբերեն ձեռագիր պայմանագրի՝ այստեղ արդեն հիշատակվում են հայերի անուններ՝ Արրահամ քահանա, Եսայի նախկուպու, Արդ ալ-

<sup>24</sup> Հմմտ.Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի արաբատառ ձեռագիր №272:

<sup>25</sup> Հմմտ.Մինասյան Լ., Երկու հրովաբուակ Մահամադ մարզաբեից և Ալի ամիրապետից, Մպահան, 1985, էջ 4-5:

Շուխ: Շեշտվում է, որ այդ պայմանագիրը Ալլահի ուխտն է և ապահովությունը: Խալիֆան պարտավորվում է ամեն տեսակի զրկանքից հեռու պահել քրիստոնյաներին: Այս փաստաթղթում ևս կրկնվում են № 358 ձևագրի պայմանները<sup>26</sup>: Ալլի դաշնագրի այլ տարբերակ Գ. Կամբանյանի թարգմանությամբ հրատարակել է Գ. Շիրմազանյանը, որի բովանդակությունը մասնակիորեն համընկնում է Մատենադարանի արարատառ ֆոնդի № 357 ձևագրի բովանդակության հետ: Գ. Շիրմազանյանը պայմանագրի վերջում ենթադրում է, որ հավանաբար այս պայմանագիրը հայերին է տրվել 7-րդ դարում, երբ 653թ. արաբները, գրավելով Հայաստանը, իրենց հետ Դամասկոս պատանդ տարան որոշ հայ իշխանների: Նրա կարծիքով՝ հավանաբար վերջիններիս խնդրանքով էլ Ալին, որը ազդեցիկ դիրք ուներ այստեղ, յոթ տարի անցնելուց հետո հայերին է տվել այս պայմանագիրը<sup>27</sup>:

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում է պահվում հավանաբար 16-րդ դարում ընդօրինակված արաբերեն մի վավերագիր Ալլի անունով: Այն գրված է կարմիր կաշվի վրա, որը շատ տեղերում սևացած է, այդ պատճառով էլ որոշ բառեր դժվար ընթեռնելի են կամ ուղղակի քացակայում են<sup>28</sup>: Դաշնագրի սկիզբը ևս քացակայում է, իսկ մնացած հատվածների բովանդակությունը համընկնում է Ալլի անունով վերոհիշյալ դաշնագրերի հետ: Այս դաշնագրերը լուսարանելու գործում

<sup>26</sup> Հմմտ.Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի արարատառ ձևագիր №357, այս ձևագրի ռուսամասիրության ընթացքում մեզ իր խորհուրդներով օգնել է Մատենադարանի գիտաշխատող, պ. գ. թ. Բ. Կոստիկյանը:

<sup>27</sup> Հմմտ.Կամբանյան Գ., Ալի ամիրապետին հայոց տուած հրովարտակը, Գ. Շիրմազանյանի խմբագրությամբ, «Բազմալէպ», հատոր վեցերորդ, ի տպարանի Մրրոյն Ղազարու, Վննտիկ, 1848, էջ 215, տնս նաև Կաթողիկոսական դիվան, թղթազատակ 257, վավերագիր 242, էջ 4:

<sup>28</sup> Հմմտ.Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ցուցակ 29, թղթապատակ 3, վավերագիր 130:

անուրանալի է հատկապես հայտնի պատմաբան Հ. Անասյանի վաստակը:

Մոտեմմադ մարզարեւի անունով քրիստոնյաներին, մասնավորապես՝ հայերին տրված արարներն արտոնագրերն ու նրանց պարսկերեն թարգմանությունները, կրկնօրինակվելով 15-19-րդ դարերում, իրենց բովանդակությամբ կապվում էին Արարական խալիֆայության ստեղծման ժամանակաշրջանում և ավելի ուշ տարբեր քրիստոնյա համայնքների հետ կնքված պայմանագրերի, ինչպես նաև 652թ. Թեոդորոս Ռշտունու և Ասորիքի կուսակալ Մուավիայի կնքած դաշնագրի հետ<sup>25</sup>:

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի սույն թեմային վերաբերող և 1868-ով թվագրվող վավերագրերից մեկում հիշատակվում է, որ Կարին քաղաքի Գլակաց վանահայրը մի շարք հոգևորականների հետ նամակ է գրում կաթողիկոսին (այդ ժամանակ Ամենայն հայոց կաթողիկոսն էր Էջմիածնում Գևորգ Դ Կ.Պոլսեցին (1865-1882))՝ Ս. Հովհաննու վանքը կողոպտելու մասին, և վերջում նշում, որ հիշյալ վանքում է պահվում Ալիի անունով հրովարտակը վանքի արտոնությունների մասին<sup>26</sup>:

Թեմայի հետ կապված մյուս վավերագրում նշվում է, որ 19-րդ դարում պարսից Նասրեդին շահի եղբայրը խնդրել է նույն ժամանակաշրջանի կաթողիկոսից տեսնել իսլամի մարզարեւ Մոտեմմադի ինքնաձեռագիր հրովարտակը, որը չէր թույլատրվում տեղաշարժել: Այդ պատճառով խնդրատուին ուղարկվում է միայն լուսանկարը: Մակայն, ինչպես փաստում է վավերագիրը, այդ լուսանկարը կորած է: Այն կոչ է և ուղերձ՝

<sup>25</sup> Հմմտ. Կոստիկյան Բ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերն ու վավերագրի ժողովածուները, Մատենադարանի հին ձեռագրերի իրստագիտական արժեքը, Երևան, 2011, էջ 77:

<sup>26</sup> Հմմտ. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 14, ցուցակ 134, վավերագիր 513, էջ 101-102:

ուղղված մուսուլմաններին՝ հոգ տանելու հայերի մասին<sup>22</sup>։ Վերոհիշյալ բոլոր փաստաթղթերը գործուն դեր են ունեցել՝ ամրագրելու հայերի իրավունքներն ու կրոնական ազատությունները մուսուլմանական տիրապետության ներքո։

Նոր Ջուղայի ձեռագրերի ցուցակում, որը պահվում է Ամենափրկչյան վանքում, նույնպես առկա են նմանատիպ փաստաթղթեր։ Այդ ցուցակի՝ «Պատմություն Բաղդատի» գլխում նշվում է, որ ներկայացվող ձեռագիրը Բաղդադի պատմության մի ժողովածու է, որի սկզբում Մուհամմադի և Ալիի՝ հայերին տված հրովարտականքների հայերեն թարգմանությունն է. այն հետագայում է գրվել և կցվել ձեռագրին։ Այս ձեռագրերը, որոնք գետեղվել են ա և բ համարների տակ, ընդգրկում են հետևյալ հրովարտականքները. «Վատերացեալ օրինակ պայմանգրոյ Մարգարէին Արաբացոյ՝ տուել առ ազգն քրիստոսէկից կամ Հայոց ի չորրորդում ամի հիշրէթի որոյ այս է թարգմանութիւն. «Կա(մ)օքն Աստոյ, յանուն Աստոյ ողորմածի»<sup>23</sup>։

Հ. Տեր-Հովհանյանի՝ պարսկերենից թարգմանած մի պայմանագրում սահմանվում են քրիստոնյաների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, նշվում են մի շարք պայմաններ՝ հարկերի չափերի, վանքերի ու եկեղեցիների նորոգման, քրիստոնյաներին օգնելու, պատերազմների ժամանակ նրանց աջակցելու մասին<sup>24</sup>։

Ինչպես տեսանք, Մատենադարանում պահվող պայմանագրերի րովանդակության մեջ արդեն չեն հիշատակվում

<sup>22</sup> Հմմտ. Կարողիկոսական դիվան, թղթապատակ 203, ցուցակ 17, վավերագրեր 998, 999։

<sup>23</sup> Միսնայան Լ, Ցուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկչեան վանաջ Թանգարանի, հատոր Բ, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1972, էջ 78։

<sup>24</sup> Հմմտ. Տեր-Յովհաննեսյանց Յ., Պատմություն Նոր Ջուղայու որ ՅԱսպահան, հատոր Բ, ի տպարանի Ամենափրկչեան Ս. Վանաջ (այստեհուն՝ Տեր-Հովհաննեսյանց Հ., Պատմություն Նոր Ջուղայի, որ Սպահան), Նոր Ջուղա, 1881, էջ 147-156։

«Մեծ» ու «Փոքր» մանչուրների և հարակից դեպքերի հետ կապված իրողությունները: Այս փաստաթղթերում ուշադրություն է դարձվում ոչ այնքան ազգային ավանդական պատմական դրվագներին, որոնք առկա են «Մեծ» ու «Փոքր» մանչուրներում, որքան իսլամական պետության մեջ քրիստոնյաների կարգավիճակի հետ կապված ընդհանուր դրույթների շարադրմանը, ինչի մասին խոսել ենք վերևում: Կարծում ենք՝ Հ. Անասյանը հիմնականում ճիշտ է դասակարգել Մատենադարանի վերոհիշյալ ձեռագրերը, գտել և իրար հետ համադրել տարբեր հեղինակների թարգմանած «ալի մանչուրները», պարզել դրանց կազմման շարժառիթները:

Վերոհիշյալ դաշնագրերն իրենց ազդեցությունն են թողել միջնադարի մուսուլման բարձրաստիճան հոգևորականների՝ հայ համայնքին վերաբերող մի շարք խնդիրների (հայ զիմմիների, հայոց եկեղեցու սեփականատիրական իրավունքները մուսուլմաններից պաշտպանելու, եկեղեցու զանգերը հնչեցնելու, հին եկեղեցիները նորոգելու և նորերը կառուցելու) վերաբերյալ որոշումներում ու հրամանագրերում: Այսպես, Ս. Էջմիածնի Կաթողիկոսական դիվանում պահվում են պարսից շահերի ու թուրք սուլթանների հրովարտակները, որոնցով հաստատվում էին հայոց եկեղեցու իրավունքները մի շարք եկեղեցապատկան հողերի նկատմամբ, որ խլել էին մուսուլմանները, և որ հայերը կարող էին ազատորեն դավանել իրենց կրոնը, հնչեցնել եկեղեցու զանգերն ու կոչնակները<sup>224</sup>:

<sup>224</sup> Հմմտ.Միմես կաթողիկոս Երևանցի, Ձաճրո, «Մուղեի» հրատարակություն, Երևան, 2003, էջ 310, 313-314:





## ՄՈՒՏԱՄԱՍԿՅԱԿ ԳՈՅՄԱԿԱԳՐԵՐԸ ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԳԱՏԱՄԱՐԱՆՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Ընենք, որ Մուհամմադ մարգարեի անունով քրիստոնյա համայնքներին, այդ թվում՝ և հայերին տրված պայմանագրերը եղել են նաև մուսուլման հետազոտողների ուշադրության կենտրոնում: Վերոհիշյալ պայմանագրերի այդպիսի մի խումբ ներկայացրել և ուսումնասիրել է Մուհամմադ Համիդալլահը: Նա մասնավորապես նշում է երկու պայմանագիր, որոնցից մեկը Մուհամմադի հրահանգով գրել է Մուավիա իրն Աբու Մուֆյասի կողմից հիջրայի 4 թվականին (625–626) Մադինա քաղաքում, իսկ մյուսը՝ Ալի իրն Աբու Տալիբը հիջրայի 2 թվականին (623–624): Հետազոտողը նշում է, որ այդ պայմանագրի ձեռագրերից մեկը պահվում է Մինայի Թուր եկեղեցում, մյուսը՝ Ջեյթունի լեռան վանականների մոտ: Այս վերջին պայմանագրում շեշտվում է, որ քրիստոնյաները պետք է հավատարիմ լինեն պայմանագրի պայմաններին, չդրժեն դրանք, իրենց հերթին մուսուլմանները ևս չպետք է պայմանագանց լինեն<sup>225</sup>: Իսկ Թուր եկեղեցում պահվող վերոհիշյալ պայմանագիրը, որը կրում է 814 թվահամարը, ընդօրինակել է Ահմադ Ջաբի փաշան: Այս պայմանագրում նշվում է, որ այն տրվում է քրիստոնեական կրոնի բոլոր հետևորդներին, որոնք քնակվում են հեռու և մոտիկ երկրներում, արևելքում ու արևմուտքում: Պայմանագիրը լիովին համընկնում է Նաջրանի քրիստոնյա քնակչությանը տված Մուհամմադի պայմանագրի «քրիստոնեական» տարբերակի ու Մատենադարանում պահվող և մեր քննարկած ու Մուհամմադ մարգարեի անունը կրող դաշնագ-

<sup>225</sup> 627. نامه ها و بیعت‌های سیاسی، ص. 627

րնրի տեքստերի հետ: Այստեղ նշվում է, որ ոչ մի վանական չի հեռացվի իր պաշտոնից, չեն վնասվի նրանց եկեղեցիներն ու կացարանները և այլն<sup>226</sup>: Ըստ Ամնադ Ջաբի փաշայի վկայության՝ Մուհամմադն Ասորիք կատարած իր ուղևորություններից մեկի ժամանակ եղել է այս եկեղեցում, որտեղ բարեպաշտ մարդկանցից մեկը՝ Խուֆիյու անունով, հանձին Մուհամմադի՝ զգացել է ապագա մարգարեին և հայտնել Մուհամմադին, որ նա մարգարե է դառնալու: Վերջինս էլ խոստացել է, որ մարգարե դառնալու դեպքում կհովանավորի եկեղեցին: Եվ, ինչպես վկայում է ավանդությունը, նրբ Մուհամմադը մարգարե է դառնում, կատարում է իր խոստումը և հովանավորության ու պաշտպանության մասին պայմանագիր շտրփում եկեղեցուն: Նշենք, որ վերոհիշյալ պայմանագրի օրինակները, ըստ հետազոտողի, պահվում են Լոնդոնի Բրիտանական թանգարանում, այս պայմանագրերի մասին կան հիշատակություններ Լիբանանի՝ քաշունի գրով գրված պատմության մեջ, որոնց անդրադարձել են նաև մի շարք ուսումնասիրողներ: Այդ պայմանագրերը՝ արաբերենով և լատիներեն թարգմանությամբ, պահվում են Լոնդոնում, Փարիզում<sup>227</sup>: Մուհամմադ Համիդալլահը նշում է, որ սուլթան Սելիմն այդ պայմանագրի քնօրինակը Մտամբուլ է բերում և նրա օրինակները տալիս է վանականներին: Ուսումնասիրողը քննում է նաև Մուհամմադ մարգարեի անունով ու Եզիպտոսի դպիտներին, ասորիներին և հակօրիկներին տրված մի պայմանագիր, որը գրել է Մուսավիան քուֆի գրով: Ենթադրվում է, որ այն մարգարեն է տվել ասորի քահանաների առաջնորդ Գարրիկին: Պայմանագիրն այժմ պահվում է ասորիների Ջաաֆրան անունով հայտնի եկեղեցում<sup>228</sup>:

<sup>226</sup> نامه ها و بیامهای سیاسی، ص. 632-633.

<sup>227</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 635:

<sup>228</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 629:

Հետաքրքիր է նաև Մուհամմադ մարգարեի անունը կրող մի պայմանագիրը ևս: Հետազոտողը նշում է, որ Թուրքիայում էրզրումի համալսարանի պատմության բաժնի գրադարանում է պահվում հայերի իրավունքների պաշտպանության վերաբերյալ մի պայմանագիր, որը տպագրվել է թուրքերեն թարգմանությամբ<sup>229</sup>: Պայմանագրում նշվում է, որ հայերի խնդրանքով մարգարեն նրանց ուխտ և պաշտպանություն է շնորհել: Մուհամմադը խոստանում է օգնել քրիստոնյա վանականներին, որտեղ էլ որ նրանք լինեն՝ ծովում, ցամաքում, դաշտում թե քարանձավում: Պայմանագիրը տրված է հայերին հիջրայի 2 թվականին (623–624)՝ վկաների մեջ հիշվում են Մուավիա իբն Աբու Սուֆյանը, Արդալլահ Ամր իբն ալ-Ասը: Իսկ Ահմադ Ջաքի փաշան գրում է, որ Ստամբուլի հայկական պատրիարքարանում կան Մուհամմադի անունով ուրիշ պայմանագրերի օրինակներ<sup>230</sup>: Հետազոտողը «Մաշրաֆ» ամսագրում տպագրել է իսլամի մարգարեի և արդարադատ խալիֆաների՝ քրիստոնյաներին շնորհած պայմանագրերի մասին հոդված՝ մանրագծին ուսումնասիրությունների ենթարկելով նմանատիպ պայմանագրերը, որոնք պահվում են Փարիզի, Հոմի, Լոնդոնի, Լեյդենի գրադարաններում: Այդ պայմանագրերի մի մասը Մուհամմադ մարգարեի, մյուս մասը՝ արդարադատ խալիֆաների, հատկապես Աբու Բաքրի և Օմար խալիֆայի անուններով է: Ջաքի փաշան նշում է, որ այդ փաստաթղթերը շրջանառության մեջ են դրվել մուսուլման և քրիստոնյա բնակչության հարաբերությունների կարգավորման միտումով՝ րեքվել են նմանատիպ պայմանագրերի տասնյակ օրինակներ, որոնք ուշադրությամբ և մանրակրկիտ ուսումնասիրվել են և համադրվել իրար հետ: Ի վերջո նա եկել է այն եզրակացու-

<sup>229</sup> Տես նույն տեղը, էջ 629–631:

<sup>230</sup> Տես նույն տեղը, էջ 627:

թյան, որ այդ պայմանագրերը, չնայած իմաստային առումով, դարձվածներով, հավելագրումներով կամ կրճատումներով տարբերվում են իրարից, սակայն դրանք բոլորը ծագել են մեկ աղբյուրից, որն անմատչելի է. «մեր ձեռքում չկա», այդ պատճառով էլ դժվարանում է այդ պայմանագրերի մասին վերջնական տեսակետ հայտնել:

Այսպիսով, արաբ պատմաբանները ևս նշում են հայկական համայնքին տրված հրովարտականի մասին: Այդպիսի հրովարտակի օրինակ է բերում պատմաբան Ադիբ Սայիդը՝ իր գրքում զետեղելով հրովարտակի բնօրինակի պատճենը: Նա նշում է, որ հրովարտակը գրել է հիշրայի 1336 (1917)թ. Հիջազի կառավարիչ և Մեքքայի շերիֆ ալ-Հուսեյն իբն Ալին: Վերջինս հանձնարարել էր իր իշխաններին պաշտպանել իրենց կողմնորում և շրջակայքում բնակվող հայերին և «պաշտպանել նրանց այնպես, ինչպես դուք պաշտպանում եք ձեր անձը, ձեր երեխաներին և ձեր ունեցվածքը, որովհետև նրանք մուսուլմանների զիմիներն են»<sup>29</sup>:

Այս հրովարտակում հիշատակություն չկա Մուհամմադ մարգարեի՝ հայերին տված իրավունքների մասին, և կարծում ենք, որ Մեքքայի շերիֆն իր ձեռքի տակ ունեցել է նմանատիպ մի փաստաթուղթ, որի հիմքի վրա էլ տվել է այս հրովարտակը: Ինչպես արդեն նշվել է, վերոհիշյալ պայմանագրերը, շրջանառության մեջ դրվելով քրիստոնեական քաղաքական և կրոնական շրջանակների կողմից, մեծ դեր են խաղացել կարգավորելու և պահպանելու հայ համայնքի և հոգևորականության կենսածնը մուսուլմանական տիրապետության ներքո:

<sup>29</sup> انيب سيد. أرمينيا في التاريخ العربي المملوكة الحديثة. حش. 1972م. من 108-109  
Հովիտանխյառն Ն, Մերձավոր Արևելքի և Սիրիայի հայ համայնքները և նրանց հեռանկարները, Երևան, 2015, էջ 17:



**17**-րդ դարի առաջին կեսի հեղինակ և հայտնի եկեղեցական գործիչ Գրիգոր Դարանաղցին, իր գրքում, խոսելով այլակրոն քնակչության նկատմամբ Օսմանյան կայսրության գործադրած դաժան քաղաքականության մասին, հիշատակում է վերոհիշյալ վաստաթղթի՝ «յալ է մեծ մանշուրի» մասին, որը հայ հոգևորականությունը համախ էր օգտագործում իր և հայ համայնքի վիճակը թեթևացնելու, իրենց իրավունքները վերահաստատելու համար:

17-րդ դարավերջին Օսմանյան կայսրությունում խոռվություններ էին տիրում, ինչի հետևանքով երկրում սով է սկսվում: Երկրի տարրեր մասերում ծագած ապստամբությունները ճնշելու համար օսմանյան իշխանություններն ուղարկում են Մուրադ Փաշային, որը ջալալիներին խաղաղեցնելուց հետո երկրում իրավիճակը կարգավորելու համար հրովարտակ է գրում, որի համաձայն՝ ասիական Թուրքիայից գաղթող ժողովուրդը նրեք ամսվա ընթացքում պետք է վերադառնար իր բնակավայրերը: Գաղթականների մեծ մասը, ինչպես գրում է Գրիգոր Դարանաղցին, կաշառքով կան ազդեցիկ մարդկանց հովանավորությամբ կարողանում է մնալ Կ. Պոլսում, իսկ մնացած բնակիչները դիմում են մեծ հեղինակություն վայելող Գրիգոր Դարանաղցուն, որ օգնի իրենց: Նա, ձեռք բերելով «զալն մանշուրն, որ մեր հաւատոյ և օրինացն որ հակառակ ոչ

լիցի»<sup>220</sup>, մի քանի վանականների հետ այն ներկայացնում է դատավորին: Եվ երբ վերջինս վերցնում է «յալ՛ գիրն» ու ընթերցում այն բարձրաձայն, «սոսկաց ի տեսեան զարմանակերպ գոյն, որ երեք լեզուաւ էր գրեալ արձանագրով, որ իրեանք քոֆի (հին արարական տառեր) ասեն և յարապ (արարերեն) գրով զուտ կարմիր եւ թուրք գրուք էր գրված»: Ըստ հեղինակի՝ ներկա գտնվող մուսուլմանները, «որք բարկութեամբ լցեալք էին, զատամունքն կրճտէցին ի վերայ մեր», սոսկացին և «ժաւանեցան գրոյն եւ բանիցն ահտեսամին (պայմանագրին) եւ յամբերացն, ամենայն ուլամայքն են զմեզ իրաւացուցին»<sup>221</sup>:

Գրիգոր Դարանաղցին հիշատակում է նաև Հասան անունով մի փաշայի մասին, որի օրոք «գրեթէ գայլ եւ գառին ի մասին ճարակեին», նա հրամայեց, թե ով «զալ՛ ահտեսման ի ձեռին ունի, որ ալ՛ ձեռագիրն է, կու շրջնցուցանէ ընդ իւր եւ ընթեռնույ կուտայ, որ ամենայն ոք գիտասցեն զամենայն պատուէրս նոր. վասն հայոց»: Ջորապետը, տեսնելով զորավոր փատտաթուղթը, սոսկում է, համբուրում այն, դնում իր աչքերի վրա «եւ այնպէս վարկաւ գրեթէ զնոյն ինքն զԱլիս տես եւ յարեաւ վերձանութիւն սորա ի յուր ամենեցուն»: Ու հետո, երբ Գրիգոր Դարանաղցին հարցնում է նրան, թե ինչ օգուտ կա «յալ՛ գիրը» համբուրելուց և այն ընթերցելուց, եթե նրա հրահանգները չեն կատարվում, զորապետը հրամայում է ներկա եղող մուսուլմաններին կատարել այդ բոլոր հրահանգները, և «ինքն ալ յամբերաց կորաց կնքել նամակ նոտր խստագոյն պատուիրանս»<sup>222</sup>:

Մի այլ տեղ նա գրում է, որ 1622-ի հոկտեմբերին քրիստոնյա տղաների (հայերի և հույների) մանկածողով էր հայտա-

<sup>220</sup> Փամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամայնեցիոյ կամ Դարանաղցիոյ, էջ 151:

<sup>221</sup> Նոյն տեղում, էջ 154-155:

<sup>222</sup> Այս և վերևի մեջբերումները՝ նոյն տեղում, էջ 157:

րարվել, որին ներկա էին թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ, որի ժամանակ «ոչ թե զտղայք միայն առուին, այլ շատ դրամ խնդրէին ընդ տղայոցն»<sup>225</sup>: Իր հերթին էլ փաշայի ներքինին հարկերով նեղում էր հայերին: Վերջիններիս խնդրանքով Ամիրի մի քանի թուրք պաշտոնյաներ, որոնք լավ էին տրամադրված հայերի նկատմամբ, վերցնում են «յալ գիրը» և ցույց տալիս սուլթան Մուրադին՝ խնդրելով հետ վերցնել իր հրամանը:

Գրիգոր Դարանաղցին գրում է, որ Կ. Պոլսի Ս. Սարգիս եկեղեցու իրավունքների վերահաստատման համար ինքը մի քանի հոգևորականների հետ խնդրագիր է ներկայացրել նրկրի կենտրոնական իշխանությանը: Խնդրագրին կցված է նաև «յալ մեծ մանշուրն, որ իրենք ահտնամա կասեն»<sup>226</sup>: Այսուհետև նա նկարագրում է, թե ինչպես թուրք բարձրաստիճան պաշտոնյաները հավատ էին ընծայում այդ փաստաթղթին և ընդունում այն որպես սրբազան գրություն:

Այսպիսով, պարզ է դառնում, որ նմանատիպ փաստաթղթերով հայ հոգևորականությունը փորձում էր սանձահարկ մուսուլման պաշտոնյաների կամայականությունները, տանելի դարձնել հայ համայնքի վիճակը: Երբեմն այդ փաստաթղթերը կարողանում էին դրական ազդեցություն ունենալ նրանց վրա, ինչպես այս դեպքում, երբ տեսնելով «յալ գիրը»՝ նրանք, ըստ հեղինակի, սոսկում էին, համբուրում այն ու դադարեցնում ժողովրդի հարստահարությունը և մեղմում նրա տառապանքը:

<sup>225</sup> Նույն տեղում, էջ 211-212:

<sup>226</sup> Նույն տեղում, էջ 133:







ՀԱՅԿԱՆ  
ԵՐԿՐԱԿ

# ԱՌԱՋԻՆ ԶՈՐԱ ԱՐԴԱՐԱԴԱՏ ԽԱՆԻՅԱՆԵՐԻ ՕՐՈՔ ԵԿԱՆԿԱՑ ԵՐԿՐԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՏՐԿԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

ما لهم في حق استيلائهم ما عندهم بالعهد الذي استوجبهوا  
80 واللاب عن الحزمة بما استوجحوا ان يدب عنهم كل مكر و  
وتناب نهائي ان تكسند واجب حزمة وبيان بما رتد و نكاه وارتد ان انزل و  
و يدخل لهم كل مرفق حتى يكون للسكن شركا  
و يمكن كسند ان انزل و هم سواد و او كسند و حشمت و ذرع خرد و اسطفا و ان  
فما لهم و فيما عليهم و اعلم ان لا يحل من امر التلاح  
شخصا لا راد و دفعهم و لا ركب اهل البيت  
تزوج المسلم و لا يضار و اني ذلك ان من غير حاشا و اهل  
تزوج حوا و ان ذلك لا يكون الا بطيبة العسر و مساج  
اهو انهم ان احبوه و رخصه و خاصا و ان النفس سبه عند  
المسلم فعليه ان يرضى لرضاها و يسمعها و اها في دسها  
من الاقربا و يسا لها و لا اخذ عماله دسها لا سمعها ذلك  
ولا يترها على ترله و لا يضارها في ررض دسها فان فيما ذلك  
و ان رها عليه في مخالفة عهده و عسما مشاق رسول الله  
90 و

و...  
و...  
و...





**Ա**րարական արշավանքները, որոնց արդյունքում 7-8-րդ դարերում արաբների տիրապետությունը հաստատվեց Ասիայի, Աֆրիկայի, Եվրոպայի բարեբեր նրկրներում, իրականացվել են մի քանի փուլերով: Սկզբնական փուլը սկսվում է առաջին չորս արդարադատ խալիֆաների՝ Աբու Բաքրի (632-634), Օմար իբն ալ-Խաուտաթի (634-644), Օսման իբն Աֆֆանի (644-656), Ալի իբն Աբու Տալիբի (654-661) արշավանքներով:

Պարսկա-բյուզանդական պատերազմները (572-591, 602-628՝ մոտ 45 տարի) արյունաքամ էին արել Բյուզանդական կայսրությունն ու Սասանյան Պարսկաստանը: Արդյունքում այդ երբեմնի հզոր պետությունները ի վիճակի չեղան դիմադրելու արաբական արշավանքներին: Բյուզանդական կայսրությունը և պաշտոնական ուղղափառ եկեղեցին, որն ընդունել էր Քաղկեդոնի ժողովի երկաթնակության մասին ուսմունքը, հալածանք սկսեցին այն դավանող ժողովուրդների՝ Ասորիքի, Վերին Միջագետքի ասորիների, հայերի նկատմամբ, ովքեր թշնամանք էին տաճում Բյուզանդական կայսրության նկատմամբ: Արաբական նվաճումների ընթացքում վերջիններս էին օգնում արաբներին՝ թոթափելու պարսկա-բյուզանդական լուծը:

Մեր կարծիքով՝ լուսաբանվող պայմանագրերի ուսումնասիրության գործում անզնահատելի կարևորություն ունեն Իրաքի բնակավայրերի, Հիրա քաղաքի, ինչպես նաև Սիրիայի քաղաքների, Վերին Միջագետքի (ալ-Ջազիրա) և Պաղեստինի (Երուսաղեմ) քրիստոնյա և այլակրոն բնակչությանը արաբ

գորահրամանատարների տված պայմանագրերը, որոնց հիմքում դրվեց «Գրքի ժողովրդի» նկատմամբ մուսուլմանական համայնքի պաշտպանության ու հովանավորության մասին դրույթը: Սույնով առաջինները գլխահարկ վճարելու պայմանով ձեռք էին բերում կյանքի, դավանանքի ազատություն: Նշենք, որ այդ պայմանագրերում վերոհիշյալ դրույթի առկայությունը հիմնականում հեշտացրեց արաբական նվաճումների ընթացքը, երբ շատ դեպքերում նվաճված երկրների բնակչությունը նախընտրում էր առանց դիմադրության անձնատուր լինել արաբներին: Այդ դաշնագրերում առկա հիմնական պայմանները հետագայում հիմք դարձան «Ալի մանշուրների» հիմնական բովանդակային կառույցի ձևավորման համար:

Ալ-Բալագուրին, աղբյուր ունենալով Յահյա իբն Ադամին, նշում է, որ, ըստ Հիրայի բնակչությանը տված պայմանագրի, քաղաքի վեց հազար չափահաս տղամարդիկ պարտավորվում էին վճարել տասնչորս դիրհեմ, ամեն տարի հարյուր հազար դիրհեմի չափով կամ ութսուն հազար դիրհեմ: Բնակչությունը պարտավորվում էր տեղեկություններ հաղորդել արաբների դեմ պարսիկների գործողությունների մասին, իսկ խալիդը չպետք է ոչնչացներ նրանց եկեղեցիներն ու ամրոցները<sup>207</sup>: Հիրայի բնակչությանը տված խալիդի պայմանագրի տեքստը մենք գտնում ենք Նաս ալ-Տարարիի պատմության մեջ, ըստ որի՝ խալիդի մոտ են գալիս քաղաքի մեծամեծները՝ Կասիրա իբն Իյաս իբն Հայա Տայիի գլխավորությամբ: խալիդը նրանց կոչ է անում ընդունել իսլամը կամ էլ մնալով իրենց կրոնին՝ գլխահարկ վճարել: Բնակիչները նախընտրում են վերջին պայմանը՝ վճարել գլխահարկ՝ հարյուր ինսսուն հազար դիրհեմի չափով: Պատմագիրը նշում է, որ «սա առաջին գլխահարկն էր,

<sup>207</sup> البلاغري، فتوح البلدان، ص. 241-240

որը վճարում էր Իրաքի (Սավադ) բնակչությունը»<sup>238</sup>: Ըստ պայմանագրի՝ քաղաքի բնակիչները պարտավորվում էին արաբներին տրամադրել հետախույզներ: Գլխահարկից ազատվում էին հոգևորականները, օտարականները և ճանապարհորդները:

Նմանատիպ դաշնագրերի հիմնական պայմանն էր դառնում հովանավորյալ բնակչության վրա դրված պարտականությունը՝ հարկերը մուծել դրամով և քանակաբանությամբ, որի փոխարեն արաբները պարտավորվում էին պահպանել նրանց կյանքն ու ազատությունը<sup>239</sup>:

Ցրոյ դարի հայտնի իրավագետ Աբու Յուսուֆը, անդրադառնալով Խալիդ իբն ալ-Վալիդի՝ Հիրա քաղաքի նվաճման պատմությանը, գրում է, որ քաղաքի բնակչությունը դաշնագիր է կնքում Խալիդի հետ՝ պայմանով, որ նրանց տաճարները, եկեղեցիներն ու ամրոցները չավերվեն, տոն օրերին խաչը հրապարակավ դուրս քերելու իրավունք ունենան, որպեսզի բնակիչները սուտ ցուցմունքներ չտան, երեք օր կերակրեն ճամփորդ մուսուլմաններին իսլամի կողմից թույլատրելի ուտելիքով: Այսուհետև քերվում է Խալիդի՝ Հիրայի քրիստոնյա բնակչության հետ կնքած պայմանագրի տեքստը, որտեղ, բացի գլխահարկ վճարելուց, հիշատակվում են հետևյալ պայմանները, որ քրիստոնյա բնակիչները չպետք է օգնեն հեթանոսներին մուսուլման արաբների կամ պարսիկների դեմ. մուսուլմանները իրենց հերթին պարտավորվում են օգնել նրանց<sup>240</sup>: Պայմանագրում նշվում էր, որ եթե զստամյալ

<sup>238</sup> 162. الطبري، تاريخ السواد والشام، الجزء الثالث، ص. 1702، ابن كثير، الكامل في التاريخ، الجزء الثاني، ص. 162.

<sup>239</sup> Հմմտ. Беллев Е., Арабы, ислам и Арабский халифат в ранне средневековье, "Наука", Москва, 1965, с. 144.

<sup>240</sup> Հմմտ. Абу-Юсуфь - Медвинков Н.А., Палестина от завоевания ее арабами до крестовых походов по арабским источникам, Православный Палестинский сборник, 50-й вып., т. 17, вып. 2(4), с. 132б.

գիմմին անկարող լինի որևէ աշխատանք կատարելու, հիվանդանա կամ աղքատանա, ապա նրանից չպետք է գլխահարկ գանձել: Ավելին, նա իր ընտանիքի հետ կարող է կերակրվել մուսուլմանական գանձարանի հաշվին: Բսլամի հովանավորության տակ գտնվող քրիստոնյաներն իրենց արտաքինով, հագուստով պետք է տարբերվեն մուսուլմանից: Նշվում էր, որ գլխահարկը պետք է հավաքվեր տեղացի հարկահավաքների միջոցով: Երբ Խալիդն Այս ալ-Թամր ամրոցի վրա է արշավում, բնակչությանը տալիս է պայմանագիր՝ նույն կետերով, ինչպիսին տվել էր Հիրայի բնակիչներին: Նրանց նկեղեցիներն ու տաճարները չպետք է ավերվեն<sup>26</sup>:

Այս դաշնագրի պայմանները, մեր կարծիքով, կազմվել են ավելի ուշ շրջանում և առկա են նաև մեր կողմից ուսումնասիրած «ալի մանշուրներում»:

Խալիդը պայմանագիր է տալիս նաև Սասանյան Պարսկաստանի մարզպաններին ու թագավորներին՝ կոչ անելով նրանց ընդունել իսլամը կամ գլխահարկ վճարել, հակառակ դեպքում Խալիդը սպառնում էր պատերազմել նրանց դեմ:

Արաբական նվաճումները մեծ թափ են ստանում երկրորդ խալիֆա Օմար իբն ալ-Խատտաթի օրոք (634–644), երբ արաբները հսկայական տարածքներ են գրավում Ասիայում, Միջագետքում, Աֆրիկայում: 634թ. Բայսանի և Ֆիլիլի շրջանում կենտրոնանում է քրուզանդական քանակը: Վերջինիս կրած պարտությունից հետո Ֆիլիլի բնակիչներն շտապում են պայմանագիր կնքել արաբների հետ՝ գլխահարկ ու հողահարկ վճարելու և իրենց կյանքը, ունեցվածքը, քաղաքի պարիսպները ապահովելու պայմանով, իսկ քաղաքի հույն բնակչությանը մեկ տարի ժամանակ էր տրվում առանց խոչընդոտների

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղը:

երկիրը թողնելու համար<sup>242</sup>։ Ֆիլիլի բնակիչների հետ հաշտությունից հետո Տիրերիայի բնակիչները ևս հաշտություն են կնքում Շարահջիլ իբն Հասանի հետ՝ իրենց երեխաների, անձների, ունեցվածքի, ինչպես նաև տների և եկեղեցիների կեսը մուսուլմաններին հատկացնելու պայմանով<sup>243</sup>։ 635թ. Մարջ ալ-Սաֆարի<sup>244</sup> հարթավայրում բյուզանդական քանակի դեմ ունեցած հաղթանակից հետո արաբական քանակը վերստին մտնենում է Դամասկոսին ու պաշարում այն։ Խալիֆը պայմանագիր է կնքում, որի ամբողջական տեքստը տեղ է գտել ալ-Բալազուրիի և 12-րդ դարի պատմագիր Իբն ալ-Ասակիրի երկերում։ Ըստ պայմանագրի՝ երաշխավորում էին բնակիչների կյանքը, ունեցվածքը<sup>245</sup>։ Խալիֆա իբն Խայյատը նշում է, որ այս պայմանագիրը կնքվում է միայն քաղաքի բնակչության հետ։ Երկրի մնացած մասը զրավում են բռնի ուժով՝ ավելացնելով, որ «քաղաքի բնակիչները կարող են ազատորեն կատարել իրենց տոնակատարությունները»<sup>246</sup>։

Ալ-Բալազուրին տեղեկացնում է, որ երբ Խալիֆը պայմանագիր կնքեց Դամասկոսի բնակիչների հետ, քացի վերոհիշյալ պայմաններից, «պարտադրեց յուրաքանչյուր անձի մուսուլմանների սննդի համար վճարել մեկ դինար՝ որպես

<sup>242</sup> الطبري، تاريخ الرسول والملوك، الجزء الثالث، ص. 2158/1، البلاذري، فتوح البلدان، ص. 118-109، ابن اعثم الكوفي، فتوح البلدان، جلد 1، حابر، 1968، ص. 110-109.

<sup>243</sup> ابن الاثير، الكامل في التاريخ، الجزء الثاني، ص. 296، البلاذري، فتوح البلدان، ص. 119.

<sup>244</sup> Մարջ հարթավայրը վերին Միջագետքում է՝ Խառանի և Ռակկայի միջև (տես Արաբ մատնագիրներ, 6-րդ դարեր, էջ 220)։

<sup>245</sup> ابن اعثم الكوفي، فتوح البلدان، جلد 1، ص. 160، البلاذري، الفتوح البلدان، ص. 124.

Текст Евтихия – Медников Н. А., Палестина от завоевания ее арабами до крестовых походов по арабским источникам, Православный Палестинский сборник, 50-й вып., т. 17, вып. 2(4), с. 9.

<sup>246</sup> تاريخ خليفة بن خياط، ص. 126.

գլխահարկ, մեկ ջարիբ<sup>247</sup> ցորեն, որոշակի քանակությամբ քացախ և ձեթ»<sup>248</sup>: Պատմագիրը, աղբյուր ունենալով Հիշամ իբն Անմարին, Վալիդ իբն Մուսլիմին, գրում է, որ սկզբնական շրջանում Ասորիքում գլխահարկը վերցվում էր յուրաքանչյուր անձից մեկ դինարի և մեկ ջարիբի չափով: Այսուհետև Օմար իբն ալ-Խատտաբը սահմանում է գլխահարկի հետևյալ չափերը. «ոսկե դրամ օգտագործողներից՝ չորս դինարի չափով, իսկ արծաթե դրամ օգտագործողներից՝ քառասուն դիրհեմ: Այս ամենի հետ միասին նա դասերի բաժանեց քնակիչներին՝ ըստ հարուստի, միջակի և աղքատի»<sup>249</sup>:

Հետևողական լինելով ծրագրի իրագործմանը՝ Օմարը հրամայում է նվաճված նահանգների ռազմական հրամանատարներին խստագույնս իրականացնել վերոհիշյալ կարգադրությունը: Դամասկոսի քնակչության հետ պայմանագիրը կնքվեց 635-ին:

Մուսուլմանական պատմագրության մեջ Խալիդի՝ Դամասկոսի քնակչությանը տված պայմանագրի վերաբերյալ կան հիշատակություններ, ըստ որոնց՝ քաղաքի քնակիչները պետք է մուսուլմաններին զիջեին իրենց տների և եկեղեցիների կեսը: Հատկապես տների կեսը արաբներին տրամադրելու նրևույթը քիչ ուշ «փորձարկվեց» նաև պարսիկ ժողովրդի վրա: Այդ կերպ առավել արագ էր ընթանում նրանց՝ իսլամն ընդունելու ընթացքը, հատկապես Դուրանն արաբերենով ար-

<sup>247</sup> Ջարիբ – իսլամական 2500 քառ. մետրի Խիս Վ., Мусульманские меры и веса с переводом в метрическую систему, перевод с немецкого Ю. Брегеля, "Наука", Москва, 1970 (այսուհետև՝ Խիս Վ., Мусульманские меры и веса), с. 73:

<sup>248</sup> 127. البلادري، فتوح البلدان، ص.

<sup>249</sup> Նույն տեղում, տե՛ս նաև Белаяв Е., Арабы, ислам и Арабский халифат в ранее средневековье, с. 146:



տասանելու, ինչպես նաև արաբերենին ընտելանալու կարևոր խնդիրը:

Դամասկոսի քրիստոնյա բնակչության հետ կնքված հաշտության դաշնագրի պայմաններն արժանի են ուշադրության, քանի որ այն հետագայում դարձավ Միրիայի նվաճված քաղաքների բնակչությանն արաբների կողմից տված պայմանագրերի հիմնական նմուշ և օրինակ: Դամասկոսի անկումը կարևոր վուլ դարձավ Միրիայի և Պաղեստինի նվաճման համար. առաջին անգամ երկարատև պաշարումից հետո մուսուլմանները գրավեցին լավ ամրացված ու պաշտպանության նախապատրաստված քաղաքը: Դա այդ երկրի ճակատագրի վերջնական լուծումն էր, որն ուղի էր քաջում հետագա նվաճումների համար: Դամասկոսից հետո, երբ արաբներն սկսեցին Միրիայի և Պաղեստինի նվաճումը, տեղի բնակիչները գերադասեցին հասնել արաբներին՝ որոշակի պայմաններով: Դամասկոսից հետո նվաճվեց և Բաալբեքը<sup>290</sup>: Հաշտության պայմանագրի տեքստը պահպանել է ալ-Բալազուրին: Ըստ պայմանագրի՝ Բաալբեքի բնակչությունը (հույները, պարսիկներն ու արաբները) ձեռք էր բերում անվտանգություն, իսկ նրանց ինչքը, տներն ու եկեղեցիները, ջրաղացներն ստանում էին ապահովության երաշխիք: Հույներին «թույլատրվում է անասուններին արածեցնել քաղաքից տասնհինգ մղոն հեռավորության վրա, սակայն չի թույլատրվում բնակվել այլ վայրերում»<sup>291</sup>: Ցանկության դեպքում նրանք կարող էին ընդունել իսլամ՝ ստանալով այն նույն իրավունքները, ինչ ունեին մուսուլմանները՝ որպես իշխող դասի ներկայացուցիչներ: Որոշ ժամանակ անց բնակիչներն առանց արգելքի կարող էին մեկ-

<sup>290</sup> Հմմտ.Բաալբեք – քաղաք Լիբանանում Բեկասսի հովտի եզրին: Քաղաքի անվանումը կապվում է սեմական Բաալ աստծո պաշտամունքի հետ (տես Baalbek – I Sowredel 970 b, The Encyclopaedia of Islam, vol I):

<sup>291</sup> البلاذري فتوح البلدان، ص 132

նել երկրից, ուր որ ցանկանային: Նրանք պարտավորվում էին վճարել գլխահարկ և հողահարկ: Ըստ Բաալբեքի բնակչությանը տված պայմանագրի, որի մասին գրում է Խալիֆա իբն Խալլաբը՝ աղբյուր ունենալով Իբն Մուդիրային, ապահովություն էր տրվում բնակիչների տների և եկեղեցիների միայն կեսին<sup>252</sup>:

Բաալբեքի նվաճումից հետո գրավվեց Եմեսան (Հիմար): Քաղաքը պաշարվեց և տասնութերորդ օրը պայմանագրով հանձնվեց արաբներին: Ըստ ալ-Բալազուրիի՝ ապահովություն տրվեց «քաղաքի բնակչության կյանքին, ունեցվածքին, քաղաքի պատերին, եկեղեցիներին և ջրաղացներին»<sup>253</sup>: Բնակիչները պարտավորվեցին մզկիթ կառուցելու համար մուսուլմաններին զիջել Ս. Հովհաննես եկեղեցու քառորդ մասը, ինչպես նաև հողահարկ վճարել: Ալ-Տարաբին գրում է, որ Հիմա քաղաքի բնակչությանը տրված հաշտության պայմանագիրը կազմվել է ճիշտ և ճիշտ Դամասկոսի բնակչությանը տրված պայմանագրի նմանողությամբ<sup>254</sup>:

Ըստ Աբու Յուսուֆի՝ երբ Աբու Ուբայդան մտնում է Սիրիա, ապա բնակչության հետ պայմանագիր է կնքում առ այն, որ նրանց եկեղեցիներն ու տաճարներն անվտանգ մնան, սակայն նոր եկեղեցիներ ու տաճարներ չկառուցվեն: Բնակիչները պարտավոր են ճանապարհ ցույց տալ մուրթված մուսուլմանին, իրենց միջոցներով կամուրջներ կառուցել գետերի վրայով, երեք օր կնրակրել մուսուլման ճամփորդին, չսեղացնել նրան, չցուցադրել իրենց խաչերը մուսուլմանների հավաքույթների ժամանակ, խոզերը տներից դուրս չթողնել, չմատնել մուսուլմաններին և այլն: Աբու Յուսուֆը նշում է, որ երբ

ابن الأثير، الكامل في التاريخ، الجزء الثاني، 341، تاريخ خليفة بن خياط، ص. 117، ص. 130

البلاذري، فتوح البلدان، ص. 133

الطبري، تاريخ الرسول والملوك، الجزء الثالث، ص. 2392/1

մուսուլմանների հովանավորության տակ եղած բնակիչները տեսնում են, թե ինչպես ազնվորեն են կատարում մուսուլմանները իրենց խոստումները և ինչքան լավ են վարվում իրենց հետ, դառնում են մուսուլմանների թշնամիների դաժան հակառակորդները և մուսուլմանների օգնականները նրանց թշնամիների դեմ<sup>255</sup>: Աբու Յուսուֆը գրում է, որ Աբու Ուբայդան սովորություն ուներ հաշտություն կնքել բնակիչների հետ ըստ նրանց առաջարկների, «...կամենում էր այս եղանակով սիրաշահել նրանց, որպեսզի այդ մասին լսելով՝ նաև շրջակա քաղաքների բնակիչները, որոնց հետ նա հաշտության պայմանագիր չէր կնքել, շտապեին միանալ մյուսներին»<sup>256</sup>: Նա նշում է, որ Աբու Ուբայդան ընդատաջում է նրանց, ովքեր ցանկանում էին հեռանալ երկրից իրենց ունեցվածքով ու ընտանիքներով:

Երբ Բյուզանդիայի կայսր Հերակլեսը գործ է հավաքում հարձակվելու արաբների վրա, Աբու Ուբայդան Եմեսա քաղաքի բնակիչներին է վերադարձնում նրանց կողմից վճարված հողահարկը, քանի որ չէր կարող երաշխավորել նրանց անվտանգությունը: Իսկ քաղաքի բնակիչները որոշում են կռվել Հերակլեսի դեմ և պահպանել արաբների հետ իրենց հավատարմության ուխտը արաբների հետ: Նման կերպ են վարվում նաև շրջակա քաղաքների բնակիչները: Իսկ երբ արաբները հաղթանակած վերադարձան, ապա այդ քաղաքների բնակիչները, ըստ պատմագրի, երաժիշտներ կանչեցին, դափ գարկեցին և նրանց հարկ վճարեցին<sup>257</sup>:

<sup>255</sup> Siba Abi Yūsuf, *Արաբ մատնագիրներ, Թ—ժ դարեր*, էջ 11–112, *Палестина от завоевания ее арабами до крестовых походов по арабским источникам, Православный Палестинский сборник*, 50-й вып., т. 17, вып. 2(4), с. 1319–1320:

<sup>256</sup> Նույն տեղում:

<sup>257</sup> 139 *البلداني، فتوح البلدان*, տե՛ս նաև Bellver E., *Арабы, ислам и Арабский халифат в раннее средневековье*, с. 144:

Իսկ Կիննասարին քաղաքում<sup>288</sup> արարները հանդիպում են քնակիչների դիմադրությանը, որը մշշելուց հետո, ըստ ալ-Տարարիի, քաղաքում քնակվող արար քնակչությունը հանձնվում է նվաճողներին, իսկ մնացածները խաղաղություն են խնդրում՝ ըստ հաշտության պայմանագրի, որը տրվել էր Եմեսայի քնակչությանը: Յուրաքանչյուր չափահաս անձ պարտավորվում է վճարել մեկ դինար և մեկ ջարիբ հացահատիկ: Խալիդը, որ ղեկավարում էր քաղաքի պաշարումը, պատժելու համար քնակիչների անհնազանդությունը, նրանց հաշտության պայմանագիրը ձևակերպում է քաղաքի պարիսպները քանդելու պայմանով<sup>289</sup>, իսկ Հալեպի քնակչությունը պայմանագիր խնդրեց և ապահովություն «իրենց կյանքի, գույքի, քաղաքի պատերի, եկեղեցիների, տների համար»<sup>290</sup>: Նույն պայմաններով դաշնագրեր տրվեցին նաև

Անտիոքի և Ռաարանի<sup>291</sup> քնակչությանը: Բնակիչները պարտավորվում էին նաև հետևել հույն քնակիչների անցողաբանին և տնդյակ պահել մուսուլմաններին<sup>292</sup>, այսինքն՝ իրենց վրա էին վերցնում մատնության անագնիվ պարտավորությունը:

<sup>288</sup> Կիննասարին-քաղաք է Հալեպից հարավ, անունը ծագում է *արամեական* կիննեշրինից (տե՛ս N. Elisei, 124a, The Encyclopaedia of Islam, vol 5, edited by C. E. Bosworth, B. Lewis, Leiden, 1980, E. J. Brill).

<sup>289</sup> الطبري، تاريخ الرسول والعلوم، الجزء الثالث، ص. 2394/1.

<sup>290</sup> 148. الطبري، فتوح البلدان، ص. 43:

<sup>291</sup> Ռաարան - քերդ-քաղաք Վերին Միջագետքում՝ Հալեպի ու Եդեսիայի միջև (տե՛ս Հակոբյան Թ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 4, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1998, էջ 431, Յակոբ ալ-Համավի, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 70):

<sup>292</sup> 149. الطبري، فتوح البلدان، ص.



**637**թ. երկամյա պաշարումից հետո արաբական զորքը գրավում է Երուսաղեմը: Անդրադատնալով արաբական նվաճումների շրջանում Պաղեստինի պատմությանը՝ արաբ պատմաբան Աջաջ Նույախադը հիշատակում է Պաղեստինի երեք հայտնի քաղաքները, որոնցից մեկն էլ Երուսաղեմն էր: Նա վերջինիս անունը նշում է որպես «Իլյա», ինչ անունով որ այն 2-րդ դարում մտնում էր Հռոմեական կայսրության մեջ: Հետաքրքիր փաստ: Դրանով հոռոմեացի կառավարիչները փորձում էին արմատախիլ անել քաղաքի ու նրա մերձակա շրջանների հրեական արմատներն և հիշողությունը:

Նշվում է նաև այն, որ քաղաքում դեռևս արաբական նվաճումների նախօրյակին կային շատ վանքեր ու եկեղեցիներ<sup>263</sup>: Մինչ քրիստոնեության հաստատումը Երուսաղեմում ապրում էին արաբական բազմաթիվ ցեղեր, որոնք հետագայում քրիստոնեություն են ընդունում: Իրն ալ-Բուֆին, անդրադատնալով Օմար խալիֆայի օրոք Երուսաղեմի նվաճմանը, գրում է, որ Աբու Ուրայդան իսլամ ընդունելու ուղերձ է հղում Երուսաղեմի բնակչությանը, այսպես «մուսուլմանական զորքը նրանց դեմ կարշավի հրով ու սրով»<sup>264</sup>: Քաղաքի բնակչությունը չի ընդունում այս պահանջը, և արաբական զորքը հարձակվում է քաղաքի վրա: Պատմիչի վկայությամբ՝ բնակիչները ծանր

263 4 ص. 1980، فتح القدس منشورات فلسطين المحتلة، ص. 4

264 ابن اعثم الكوفي، فتوح البلدان، جلد 1، ص. 289

կորուստներ են ունենում և դիմում են Արու Ուրայդային՝ հաշտության պայմանագիր կնքելու համար՝ խնդրելով, որ քաղաք ժամանի Օմար խալիֆան: Ըստ Իբն ալ-Բուֆիի՝ Արու Ուրայդան այս մասին տեղյակ է պահում Օմար խալիֆային՝ նշելով, որ քնակչությունը խոստացել է գլխահարկ վճարել և մտնել իսլամի կողմից հովանավորյալների (զիմմի) դասի մեջ: Ալ-Բալազուրին գրում է, որ երբ Արու Ուրայդան պաշարում է Երուսաղեմը, քաղաքի քնակչությունը նրանից հաշտության պայմանագիր է խնդրում, պարտավորվում է վճարել գլխահարկ ու հողահարկ և պահանջում, որ այդ պայմանագիրն իրենց հետ կնքի անձամբ Օմար խալիֆան: Եթե հավատ ընծայենք պատմիչի խոսքերին, ապա պիտի փաստենք, որ ժողովրդի մեջ պահպանված հիշողությունը, որ առաջին չորս խալիֆաները եղել են արդարակցաց և բարեհաճ, համապատասխանում է իրականությանը:

Երուսաղեմի քնակչությանը տրված պայմանագրի տեքստը մեզ է հասել մեկ մանրամասն և երկու համառոտ շարադրանքներով: Տեքստն առկա է հիմնականում միջնադարյան երեք պատմագիրների՝ ալ-Տարաբիի, ալ-Յակուբիի և Եվտիբիոսի երկերում: Առավել մանրամասն շարադրել է ալ-Տարաբին, ում համար հիմնական աղբյուր է եղել Մայֆի աշխատությունը: Ալ-Տարաբիի և Եվտիբիոսի հիշատակած պայմանագրերում Երուսաղեմը կոչվում է Իլյա, իսկ ալ-Յակուբիի քերած պայմանագրում՝ ն Իլյա, ն Կուդս (Սուրբ)<sup>265</sup>: Հայտնի չէ քաղաքի անվանափոխության ստույգ թվականը, սակայն, ինչպես էլ այն անվանվեր, փաստն այն է, որ Երուսաղեմի քնակիչները, ըստ պայմանագրի, ստանում էին կյանքի, գույքի, եկեղեցիների

<sup>265</sup> Հմմտ. Ալ-Յակուբի, *Մրաբ մատենագիրներ*, Թ-Ժ դարեր, էջ 343, *Текст Епифаня*, *Медников Н.*, *Палестина от завоевания ее арабами до крестовых походов по арабским источникам*, *Православный Палестинский сборник*, 50-й вып., т. 17., вып. 2(4), с. 12:

ապահովություն և անվտանգություն, ինչպես նաև խոստում, որ շինությունները չեն քանդվելու և որպես կացարան չեն օգտագործվելու: Ալ-Տարաբիի երկում առկա են մի շարք հիշատակություններ խաչերի անձեռնմխելիության մասին: Նշվում է, որ դաշնագրի այդ պայմանները անատարկելիորեն տարածվում են քաղաքի բոլոր բնակիչների (և՛ հիվանդի, և՛ առողջի) վրա:

Մուսուլմանները պարտավորվում էին չափազանց քրիստոնյաներին ընդունել իսլամը և չվիրավորել նրանց: Մակայն հրեաները քաղաքում չպետք է ապրեին նրանց հետ միասին: Պայմանագրում հիշատակվում է նաև «ալվազակների» մասին. այս բառի տակ կարելի է ենթադրել զինված մարդկանց այն խումբը, որն ընդհատակյա կոիվներ էր մղում մուսուլմանական ջոկատների դեմ՝ միաժամանակ չկորցնելով յուրայիններին կողոպտելու առիթը: Նրանց, ովքեր ցանկանում էին հեռանալ քաղաքից, երաշխավորվում էր անվտանգություն և իրենց պատկանող գույքի անձեռնմխելիություն: Պարմանագրում խոսվում է նաև «հողի մարդկանց», այսինքն՝ հողագործների մասին: Նրանցից չպետք է հարկ գանձել, մինչև չհավաքեն իրենց բերքը: Շարադրամքից պարզ է դառնում, որ Երուսաղեմում բնակվող քաղաքացի բնակիչները, որոնք դրամական միջոցներ ունեին, պետք է գլխահարկ վճարեին: Վերջինի չափը չի նշվում: Ալ-Տարաբիի հիշատակած պայմանագրում նշվում են նաև վկաների անունները՝ Խալիդ իբն ալ-Վալիդ, Ամր իբն ալ-Աս, Աբդ ալ-Ռահման իբն Աուֆ, Մուավիա իբն Աբու Մուֆյան<sup>266</sup>: Ըստ ալ Տարաբիի՝ նմանատիպ պայմանագիր է տրվում նաև Լուդղ քաղաքի բնակչությանը, որտեղ երաշխավորվում են գույքի, եկեղեցիների, խաչերի անվտանգությունը<sup>267</sup>:

<sup>266</sup> الطبري، تاريخ الرسول والمسلمين، الجزء الثالث، ص. 2406/1-2405/1

<sup>267</sup> Sina, *loc. cit.* տեղը, 2407/1:



### ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ԹԱՄՏԱԹՈՒՄ

**Ա**րաբական նվաճումների շրջանում պայմանագրերը կնքվում էին արաբ զորահրամանատարի և նվաճված շրջանների բնակչության հետ՝ ի դեմս եպիսկոպոսի, քաղաքի ավագանու, պարսիկներով բնակեցված շրջաններում՝ շրջանի կառավարչի՝ դեհկանի, մոզպետի (մոբեդ) միջև<sup>281</sup>։ Պայմանագիրը՝ որպես փաստաթուղթ, հայտնի էր արաբներին Նախքան Մուհամմադի երևան գալը։ Արաբական նվաճումների առաջին շրջանում պայմանագրերն ամրագրում էին այլակրոնների քաղաքական ենթակայության իրողությունը մուսուլմաններին և նրանց վարչական համակարգին, հաստատում նրանց միջև խաղաղ հարաբերություններ։ Եթե, օրինակ, Նաջրանի քրիստոնյա բնակչությանը տրված պայմանագրում նշվում էր «մինչև Հարության օրը», ուրեմն պայմանագիրը ուներ անսահմանափակ ժամկետ։ Պայմանագիրը գործում էր այնքան ժամանակ, մինչև որ կողմերից մեկը խախտում էր այն։ Դաշնագիրը սկսվում էր Ղուրանից փոխառված Ալլահի փառաբանության այաթներով, նշվում էր պայմանագիրը կնքողի անունը, այնուհետև շարադրվում էր հիմնական տեքստը, որով նվաճված բնակչությանն առաջարկվում էր այլընտրանք. կամ ընդունել իսլամը, կամ մուսուլմանական համայնքին վճարել գլխահարկ և հողահարկ<sup>282</sup>։

<sup>281</sup> Сабун, Колесников А., Завоевание Ирана арабами (Иран при "Проданных халифах"), "Наука", Москва, 1982, с. 157:

<sup>282</sup> Տե՛ս նույն տեղը։



Այսինքն՝ Արաբական խալիֆայությունը կազմավորվում էր հիմնականում երկու ձևով՝ նվաճում խաղաղ ճանապարհով՝ (սուլհան), դաշնագրերի միջոցով և նվաճում՝ բռնի ուժով (անուաթան): Վերջինս իրագործվում էր այն դեպքում, երբ տվյալ երկրի ժողովուրդն ու բանակը չէին համծնվում քարի կամքով: Այդ դեպքում արաբ զորահրամանատարի ցուցումով քնակչությունը լրիվ կամ մասնակիորեն սրի էր քաշվում և կամ ստրկության տարվում: Մնացած քնակչության վրա դրվում էին ծանր հարկեր: Նրանց ստիպում էին գաղթել իրենց հարազատ վայրերից, որոնք հետագայում քնակեցվում էին արաբներով: Այսպես, Միջագետքում, երբ խալիֆը Այն ալ-Թամր ամրոցի պաշարման ժամանակ հանդիպում է պարսիկների դիմադրությանը, կարճատև մարտից վերջիններս ցանկանում են հաշտություն կնքել արաբների հետ, սակայն խալիֆը հրաժարվում է առաջարկից և ամրոցը պաշտպանող պարսիկ կայազորի զինվորների մի մասին սրի է քաշում, մի մասին էլ գերեվարում, այդ թվում՝ նաև եկեղեցում գտնվող քրիստոնյաներին: Սովորաբար պայմանագրի տեքստի վերջում նշվում էին պայմանագրի կնքմանը ներկա գտնված վկաների անունները և թվականը: Մի օրինակը պահվում էր արաբների մոտ, մյուսը՝ տեղի կառավարչի:

Արաբական նվաճումների շրջանում լինում էին դեպքեր, երբ զենքի ուժով նվաճված քաղաքների քնակչությունն ստանում էր հովանավորյալ դասի (զիմմի) կարգավիճակ: Ալ-Տաբարին, օրինակ, հաղորդում է, որ Խուզիստանի Շուշ քաղաքը զենքի ուժով զրավելուց հետո քնակչությունը խաղաղություն է խնդրում և ստանում հաշտության պայմանագիր<sup>206</sup>: Դաշնագրերի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ զերակայում էր նվաճված քնակչության հպատակեցման

<sup>206</sup> الطبري، تاريخ الرسول والملوك، الجزء الثالث، ص 256/1

պայմանը, ըստ որի՝ քնակչությունը պահպանում էր իր կրոնը, պարտավորվում վճարել գլխահարկ և հողահարկ:

Սասանյան Պարսկաստանի տարածքի մեծ մասը նվաճվում է խաղաղ ճանապարհով՝ պայմանագրերի հիմքի վրա:

Ինչպես քրիստոնյա և հրեա, այնպես էլ զրադաշտական քնակչությանը մուսուլմանները երաշխավորում էին անձնական անձեռնմխելիություն, ունեցվածքի, առրուշանների ապահովություն: Խոստանում էին չմիջամտել նրանց ներքին գործերին, պաշտպանել թշնամիների հարձակումներից: Այս առումով սկզբունքային տարբերություն չկար արաբների՝ զրադաշտականներին ու քրիստոնյաներին տրված պայմանագրերի մեջ:

Պայմանագրերի բովանդակությունը կարող էր փոփոխվել տարբեր իրավիճակների հետ: Դաշնագրերը ճկունորեն հարմարվում էին պահին: Սասանյան Պարսկաստանի կազմի մեջ մտնող Նեքրքին Միջագետքի շրջաններն արաբական զորքին անձանոթ էին, և այստեղ արաբները տեղի քնակիչների օգնության կարիքն ունեին: Այդ է պատճառը, որ քնակչության հետ կնքած պայմանագրերում պարտադրվում է տեղաբնակների օգնությունը և արաբների հետ ակտիվ համագործակցությունը: Օրինակ՝ երբ Սասանյան Պարսկաստանում ռազմական գործողությունները տեղափոխվեցին երկրի խորքերը, և արաբների հաղթարշավին սկսեցին խոչընդոտել հաճախակի բռնկվող ապստամբությունները, պայմանագրում ներառվեց մի կետ, ըստ որի՝ քնակչությունից առգրավվում էր զենքը՝ գույքի ապահովության դիմաց: Այսպիսի կետ առկա է արաբ զորահրամանատար Աբու Մուսա ալ-Աշարիի՝ Ջունդայ Սաբուրի քնակչությանը տված պայմանագրի տեքստում<sup>201</sup>:

Մուսուլմանական աղբյուրներում հաճախակի են շեշտ-

<sup>201</sup> البلاذري، فتوح البلدان، ص. 371.

վում նվաճված շրջանների քնակիչների կողմից պայմանագրի խախտման դեպքերը: Կարելի է ենթադրել, որ պայմանագրերի կառուցվածքը և բովանդակությունը ոչ միայն երկու կողմերի զարգացող վոխհարաբերությունների արդյունքում էր մշակվում, այլ նաև խալիֆայի վարչական համակարգի վարչական համակարգի խորհրդակցությունների արդյունքում: Մուսուլմանական աղյուրները հաճախակի են նշում, որ այս կամ այն պայմանագիրը պետք է հաստատեր խալիֆան: Չի քաջատվում նաև այն փաստը, որ որոշ պայմանագրեր կնքվել են անմիջապես խալիֆայի և տեղի քնակչության միջև: Ալ-Բալազուրին նշում է, որ Խալիդը, նվաճելով Հիրան և Այն ալ-Թամրը, նրանց քնակչությանը տվեց հաշտության պայմանագրեր, որոնք հաստատեց Աբու Բաքր խալիֆան<sup>272</sup>:

Այսպիսով՝ խալիֆան բարձրագույն հեղինակություն էր, և նա էր սահմանում մուսուլմանների վարքը տեղական քնակչության նկատմամբ:

Մուսուլման պատմագիրները հաճախակի են նշում այս կամ այն շրջանի կրկնակի նվաճման մասին, որի դեպքում նախորդ պայմանագիրը չեղյալ էր համարվում, իսկ նոր պայմանագրի մեջ նշված հարկի չափը մեծանում: Այդպես եղավ Հիրայի նվաճման ժամանակ, երբ քնակչությունը պարտավորվեց վճարել 190 հազար դիրհեմ հարկ: Աբու Բաքրի մահից հետո քաղաքի քնակիչներն ապստամբեցին, և քաղաքը երկրորդ անգամ նվաճելուց հետո հարկի չափը մեծացավ, և վերջապես Հիրայի երրորդ նվաճման ժամանակ հարկի չափը հասավ մինչև 400 հազար դիրհեմի<sup>273</sup>: Սա արդեն ոչ այնքան սեփական զանձատունը հարստացնելու միջոց էր, որքան ընթացող ժողովուրդներին «դասեր» տալու փորձ:

<sup>272</sup> Sibtu bin al-A'im, Էջ 245:

<sup>273</sup> الطبري، تاريخ الامم والامم، الجزء الثالث، ص. 2045/1.



**ՍԱՍԱՆՅԱՆ ԳԱՐՍԿԱՍՏԱՆԻ՝ ՔՐԻՍՏՈՆԵՍ ԵՎ  
ՉՐԳԱՆՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ԵՆՈՐՈՒՄ  
ԴԱՅՄԱՆԱԳՐԵ**

**Ա**լ-Տարարին հիշատակում է, որ պարսկական Միջագետքի նվաճված վայրերի հողագործները ճանապարհների, կամուրջների, շուկաների, ինչպես նաև հողի մշակման համար պետք է հարկ վճարեին իրենց կարողության չափով, իսկ տեղի կառավարիչները (դեհկան)՝ իրենց կալվածքների դիմաց:

637թ. արարներն իրենց ենթարկեցին ամբողջ Միջագետքը: 638թ. Բասրայի փոխարքա դարձավ Աբու Մուսա ալ-Աշարին, որի անվան հետ նա կապված արաբական նվաճումները Մասանյան Պարսկաստանում:

Հուլուան քաղաքի<sup>274</sup> ու նրա շրջակայքի գրավումը ալ-Տարարին թվագրում է 637-ով: Ալ-Բալազուրին նշում է, որ քաղաքը հանձնվեց արարներին հաշտության պայմանագրի հիմքով. բնակիչներին տրվեց անձեռնմխելիության, ինչպես նաև քաղաքից հեռանալու իրավունք<sup>275</sup>:

642թ. Նեհավենդի շրջանի կառավարիչ Դինարը տանուլ տված հայտնի ճակատամարտից հետո հանձնվեց արարներին և խնդրեց երաշխավորագիր իր և քաղաքի բնակչության համար: Ալ-Տարարին քերում է Հուլիֆա իբն Յամանի կողմից Մահ Դինարի (Նեհավենդի) բնակչությանը տրված պայմանագրի տեքստը. նրանց շնորհվում էր իրենց անձերի, ունեց-

<sup>274</sup> Հուլուան - Չազուբն քաղաք Միջագետքի և Իրանի միջև (տես Hudeib, Lochart L., 571b, *The Encyclopaedia of Islam*, vol 3, Leiden-London, 1971).

<sup>275</sup> *Al-Mutan*, 295. *البلدان غير فتوح البلدان*, ص 295

վածքի և հողերի համար ապահովություն: Բնակիչները կարող էին իրենց օրենքներին, սովորույթներին հետևել՝ ամեն տարի արաբ կառավարչին գլխահարկ վճարելու պայմանով: Յուրաքանչյուր չափահաս մարդ պարտավոր էր գլխահարկ վճարել ըստ իր կարողության: Բացի այս պայմաններից՝ «բնակիչները պետք է ճանապարհ ցույց տային (մուսուլման) անցորդին, նորոգեին ճամփաները, օգնեին մուսուլման զինվորներին, կացարան հատկացնեին նրանց մեկ օր ու զիշեր, խորհուրդներ տային»<sup>26</sup> և այլն: Սակայն եթե բնակիչները խորամանկեին և խաբեին, ապա չէր երաշխավորվում նրանց կյանքի ու զույգի անձնոնմխելիությունը: Պատմագիրը նշում է, որ կառավարիչ Դինարը ևս պարտավորվեց գլխահարկ և հողահարկ վճարել:

Նեհավենդի ճակատամարտից հետո գրավվեց նաև Մպահան (Իսֆահան) քաղաքը: Մպահանի բնակչությանը տրված դաշնագրում կրկնվում են Հուզիֆա իբն Յամանի՝ Նեհավենդի բնակչությանը տված պայմանագրի կետերը<sup>27</sup>: Կումիսի<sup>28</sup> բնակիչներն ստացան անվտանգության և ապահովության երաշխիք՝ պահպանելու համար իրենց ատրուշանների անվտանգությունը, անձնոնմխելիությունը: Նրանք պարտավորվում էին բնակիչներին չսպանել ու չզերելվարել, հովանավորել: Այդ ամենի դիմաց վերջիններս պետք է վճարեին գլխահարկ ու հողահարկ<sup>29</sup>:

Արաբական զորքը գրավում է նաև Պարսկաստանի Գորգան (Ջուրջան) շրջանը<sup>30</sup> Սուույադ իբն Մուկարրիսի գլխավոր-

<sup>26</sup> العشري، تاريخ الرسول والمعاهد، الجزء الثالث، ص. 263/1

<sup>27</sup> Stn նույն տեղը, էջ 264/1:

<sup>28</sup> Կումիս - փոքր շրջան միջնադարյան Իրանում՝ Ռեյ-խորասան ճանապարհի վրա (տե՛ս Kumia, Bosworth C.E., 377a., Encyclopaedia of Islam, vol 3):

<sup>29</sup> الجانزي، فتوح البلدان، ص. 310

<sup>30</sup> Գորգան (Ջուրջան) - նահանգ Կասպից ծովի հարավ-արևելքում (տե՛ս Gurgan, Hartmann R., II4a Encyclopaedia of Islam, vol 2, Leiden-London, 1965):

րությանը: Գորգանի քնակչությունը պարտավորվում էր ամեն տարի գլխահարկ վճարել՝ իր կարողության չափով<sup>200</sup>:

Օմար իբն ալ-Խատտաբի գահակալության շրջանում 634-644 նվաճվում է նաև պարսկական Ատրպատական (Ազրաբադգան) նահանգը, որն ընդգրկում էր Ուրմիա լճի, Արաքս գետի և Կասպից ծովի միջև ընկած տարածքները՝ Արդաբիլ մայրաքաղաքով:

Ատրպատականի քնակչությանը տրված պայմանագրի տեքստը ևս առկա է ալ-Տաբարիի երկրում: Ըստ այդ տեքստի՝ ապահովություն էր տրվում «Ատրպատականի լեռներին, դաշտերին, արտատնդերին, ինչպես նաև քնակչությանը՝ իրենց կյանքի, գույքի, կրոնի համար՝ այն պայմանով, որ նրանք վճարեն գլխահարկ՝ յուրաքանչյուրն իր կարողության չափով, բացի երեխաներից, կանանցից, չքավոր մարդկանցից և կրոնավորներից, ովքեր կարողություն չունեն»<sup>201</sup>:

Պայմանագրի հիմնական պահանջը տեղական քնակչության՝ հարկի վճարումն է՝ մեկ դինար կամ նրա դրամական արժեքը՝ քնամթերքով: Դեռևս անձանտթ լինելով այս երկրին և տեղանքին՝ արարները պայմանագրում ցուցումներ չեն տալիս, թե հատկապես ինչ մթերքներով պետք է գանձվեր հարկը, և սկզբում բավարարվում էին միայն նրանով, ինչն ակնհայտ էր:

Արաբական իշխանությունների և Սասանյան Պարսկաստանում քնակվող քրիստոնյա համայնքների ղեկավարների փոխհարաբերությունների մասին հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում քրիստոնեական աղբյուրները: Այսպես, 7-րդ դարի սիրիական ժամանակագրության անանուն հեղինակը հաղորդում է, որ նրբ արարները գրավեցին Քրետսիֆո-

<sup>200</sup> 2658/1—2659/1, الجزء الملوك والملوك، تاريخ الرسل والملوك، الجزء الثالث، 2658/1—2659/1

<sup>201</sup> Նույն տեղում, էջ 2662/1, Յակուտ ալ-Համադի, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 10-11:

նը, Յաշոյար II կաթողիկոսը (628-644) հեռացավ Բեթ Գարմայ շրջանը և բնակություն հաստատեց Կարկայում (ավելի ուշ՝ Կիրկուկ): Կաթողիկոսը, տեսնելով քրիստոնյա բնակչության ծանր վիճակը, որոշում է այցելել Օմար խալիֆային և ներկայացնել նրան քրիստոնյա համայնքի դրությունը: Օմարը նրան չնորհում է մի պայմանագիր, որի ամբողջական տեքստը չարդարում է անստուն հեղինակը: Ըստ դրա՝ Մադաինի (Քտեսիֆոն) և Նահրբիբի բնակիչներին, կաթողիկոսին և հոգևորականներին խալիֆան տվեց ապահովություն: Փաստաթղթում նշվում էր, որ եթե քրիստոնյաներն ու մուսուլմանները՝ կտավարիչ թե հպատակ, խախտեին պահպանագրի պայմանները, ապա կգրկվեին Ալլահի հովանավորությունից: Ապահովություն էր տրվում բնակիչների կյանքին, նրանց ընտանիքներին, գույքին, ծառաներին: Խալիֆան պարտավորվում էր իր հպատակների և օգնականների հետ դառնալ նրանց պաշտպանը թշնամիների դեմ: Ընդգծվում էր, որ ոչ մի հոգևորական կամ կտավարիչ չէր հեռացվելու իր պաշտոնից, ոչ մի աղոթատուն և եկեղեցի չէր քանդվելու, ոչ մի շինություն մզկիթ կամ մուսուլմանների համար բնակավայր չէր դառնալու: Դայմանագրով հաստատվում էր, որ քրիստոնյա բնակիչները չէին պարտավորվում մուսուլմաններին օգնել պատերազմի ժամանակ, և որ արգելվում էր քրիստոնյա բնակչին բռնի ձևով դավանափոխ անել, քանի որ կրոնի մեջ պարտադրանք չկար<sup>20</sup>:

Կամքի ազատությունը դառնում էր պայմանագրերի հիմնական գաղափարը: Հենց այդ հանդուրժողականությունն էր, որ արաբներին դարեր շարունակ վեր էր բարձրացնում իրեն-

<sup>20</sup> Histoire Nestoienne (Chronique de Seert), seconde partie (II), publiée et traduite par Addai Sher, Paris, 1918, p. 620-622, Κοτσουρος Α., Ζακωταύσε Ηράνα αραβων, с. 215:

ցից հետո եկող նվաճողներից, դարձնում ժողովուրդ, որը համաշխարհային քաղաքակրթության մեջ իր մեծ դերն ունեցավ:

Պայմանագրում շեշտվում է նաև քրիստոնյա քնակչության դրական դերը, որ բարիք էր գործել՝ օգնելով մուսուլմաններին: Այստեղ առկա են մի շարք կետեր, որոնք պարտադիր էին քրիստոնյաների համար՝ տեղեկություններ չհաղորդել թշնամուն, վերջիններիս չթաքցնել իրենց տանը, չօգնել նրանց ոչ զենքով, ոչ էլ ձիերով: Եվ, հակառակը, քրիստոնյա քնակիչները պարտավորվում էին անհրաժեշտության դեպքում իրենց տանը թաքցնել մուսուլմանին, օգնել և խնամել նրան: Նշվում է նաև, որ քրիստոնյա քնակչության վրա տարածվում էին այն պայմանագրերը, որ Օմար խալիֆան տվել էր «Գրքի ժողովրդին»: Մուսուլմանները պարտավոր էին կատարել պայմանագրի բոլոր կետերը, որոնք ուժի մեջ էին մինչև Ահեղ դատաստանի օրը: Վերջում բերվում են վկաների անունները՝ Օսման իբն Աֆֆան, Մուդիրա իբն Շուուրա, գրված հիջրայի 17թ. (638-639)<sup>284</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ Մուհամմադի՝ Նաջրանի քրիստոնյաներին և Օմարի՝ Բուսիֆոնի քրիստոնյա քնակչությանը տված պայմանագրերը գրվել են տարբեր ժամանակահատվածներում և հասցեագրված են քրիստոնյա տարբեր համայնքների, նրանց մեջ առկա են նմանություններ, որոնք բացատրվում են քրիստոնյաների նկատմամբ մուսուլմանական իշխանությունների պաշտոնական կայուն դիրքորոշմամբ, մինչդեռ Պարսկաստանում գրադաշտականության հանդեպ չկար այդ գիշողականությունը՝ հայտնի պատճառով: Իսլամն ատում էր կռապաշտությունը: Իրանը հետևողականորեն իսլամացվում էր:

<sup>284</sup> Sbu' unju' unheg, Пигулевская Н., Культура саросцев в средние века, "Наука", Москва, 1979, с. 214:



Մասանյա Գարսևաստանում քրիստոնեական (հիմնականում՝ նեստորական) եկեղեցին ղեկավարում էին մարգապանները և պետական մասշտաբով՝ թագավորը, որն էլ հնարավորություն էր տալիս ընտրելու կաթողիկոս, կառուցելու վանքեր ու եկեղեցիներ: Արաբական նվաճումները Գարսևաստանի քրիստոնյա բնակչության համար ծանր շրջան էին. քանդվում ու կողոպտվում էին եկեղեցիները, սպանվում ու գերեվարվում էր քրիստոնյա բնակչությունը: Սակայն նվաճումներից հետո մուսուլմանական իշխանությունները կարգավորեցին իրենց փոխհարաբերությունները քրիստոնյա բնակչության հետ. նրանք պարտավորվում էին վճարել գլխահարկ իրենց կյանքի և գույքի ապահովության դիմաց, վերականգնել քանդված եկեղեցիները, մուսուլմանները չպետք է միջամտեին բնակիչների ներքին գործերին: Արաբական նվաճումների առաջին տասնամյակներում մուսուլմանական իշխանություններն ավելի հանդուրժող և համբերատար էին քրիստոնյաների նկատմամբ. այս փաստը կարելի է բացատրել այն իրողությամբ, որ քրիստոնյաների իրավական վիճակն ավելի բարվոք էր մուսուլմանների տիրապետության սկզբնական շրջանում, քան հետագայում, քանի որ արաբները, դեռևս չունենալով ամուր դիրքեր նվաճված երկրներում, չունենալով սեփական պետական վարչական համակարգ, ուսյալ և գործունյա այլակրոն բնակչության օգնության և աջակցության կարիքն ունեին: Հետագա դարերում քրիստոնյաների իրավական վիճակը ծանրացավ մի շարք սահմանափակումների պատճառով: Քրիստոնյաների իրավունքները հետագայում սահմանափակելու համար մուսուլմանական իշխանությունները ստեղծեցին և շրջանառության մեջ դրեցին այսպես կոչված Օմար իբն ալ-Խատտաբ խալիֆայի՝ Ասորիքի քրիստոնյա բնակչությանը

տված պայմանագիրը<sup>265</sup>: Այդ ամենը հետևողականորեն մշտական օրենսդրության ուժ էր ստանում: Այսինքն՝ օգտագործելով Օմար խալիֆայի հեղինակությունը՝ մուսուլմանական պետությունը ձգտում էր օրինականացնել նաև հետագա դարերում քրիստոնյաների իրավունքների վրա դրված սահմանափակումները:

Պետք է նշել, որ Պարսկաստանի նվաճման ժամանակ արարները խուսափում էին բնակչության զանգվածային կոտորածներից: Շատ դեպքերում էլ Սասանյան վարչական համակարգի լծի և ծանր հարկերի տակ կրած պարսիկ բնակչությունն արարներին դիմավորում էր որպես ազատարարների:

Պարսկաստանի նվաճման ժամանակ բազմաթիվ քաղաքներ, բնակավայրեր, ազդեցիկ դեհկաններ հաշտության պայմանագրեր կնքեցին արարների հետ՝ պարտավորվելով հարկեր վճարել մուսուլմանական գանձարանին. այս միջոցով նրանք պահպանեցին իրենց հողերն ու հողատիրական, ժառանգական իրավունքները:

<sup>265</sup> *Հինը. Договорь Омара с христианами*, Медников Н., Палестина от завоевания ее арабами до крестовых походов по арабским источникам, Православный Палестинский сборник, 50-й вып., т. 17 вып., №4), с. 538—611:

## ՕՍԱՐ ԻՔԸ ԱԼ-ԽԱՍՏԱՐ ԽԱՆԻՑԱՅԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՊԱՅԱՆԱԿՈՒՄԸ՝ ՏՐՎԱԾ ԱՍՈՐԻՐԻ ՔՐԻՍՏՈՆԵՑԱ ՔԱՆԿՉՈՒԹՅԱՆԸ



**Ի**նչպես նշել ենք, մուսամմադյան պայմանագրերը նպատակաուղղված էին պաշտպանելու քրիստոնյա համայնքների իրավունքները մուսուլման իշխողների ոտնձգություններից. հնարավոր է, որ դրանց հիմքում ընկած էին քրիստոնյաների իրավունքների սահմանափակումների մասին Օմար իբն ալ-Խատտաբ խալիֆային վերագրված և Միրիայի քրիստոնյաների կազմած դրույթները: Այս առումով անհրաժեշտ ենք համարում համառոտ և սեղմ գծերով անդրադառնալ այս պայմանագրին:

Այն չի հիշատակվում վաղ շրջանի (միջնադարի) մուսուլմանական պատմագրության մեջ: 8-րդ դարի օրենսգետ Աբու Յուսուֆն իր «Գիրք խարաջի» աշխատության մեջ, անդրադառնալով հովանավորյալ բնակչության կարգավիճակի ու արտաքին տեսքի մասին դրույթներին, սկզբում հայտնում է դրանց վերաբերյալ իր կարծիքը և որպեսզի մեծ կշիռ հաղորդի իր խոսքերին, վկայակոչում է Օմարին: «Նրանց (գիմնիների) կոնաձև զլխարկները մարակված (մզղակած) լինեն: Հրամայի՛ր քո կառավարիչներին, որ նրանք գիմնիներին այսպիսի տարազ պարտադրեն: Այսպես է հրամայել Օմար իբն ալ-Խաթթաբը, որ ստիպի գիմնիներին այսպիսի տարազ կրել»<sup>206</sup>: Այստեղ խոսք չկա Օմարի պայմանագրի մասին: Աբու

<sup>206</sup> Абу Юсуфъ – Меджмакъ Н., Палестина от завоевания ее арабами до крестовых походов, Православный Палестинский сборник, 50-й вып., т. V, вып. 2(4), с. 1316–1317, Абу Юсуфъ, Урар մասնագիրներ, Թ-Թ դարեր, էջ 105–106:

Յուսուֆը տեղյակ էլ չէր այս պայմանագրի գոյությանը, հակառակ դեպքում նա կշարադրեր այս պայմանագրի դրույթները:

Վերոհիշյալ պայմանագիրը մանրամասն հետազոտության են ենթարկել ոուս և նվրոպացի արևելագետները: Դրան անդրադարձել են նաև հայ պատմաբանները<sup>297</sup>: Հետազոտողները կարծում են, որ իսլամի առաջին երկու դարերում քրիստոնյաների վրա դրված իրավական սահմանափակումներն այդքան էլ մեծ չէին<sup>298</sup>, և դա բնական է, քանի որ այս շրջանում, երբ իսլամը նոր էր հաստատում իր գերիշխանությունը նվաճված երկրներում, դժվար է խոսել հովանավորյալ դասի իրավունքների սահմանափակումների մասին: Մուսուլմանները մշտապես քրիստոնյա բնակչության օգնության կարիքն ունեին. այս շրջանում հանդուրժողական վերաբերմունք ունեին քրիստոնյաների նկատմամբ, մուսուլմանական պետությունն էլ շահագրգռված էր պահպանելու և զարգացնելու այդ հանդուրժողականությունը, որ հաշտեցնի նոր հպատակներին նվաճողների հետ:

Հետագայում ի հայտ եկան նրանց իրավունքների մեծ ու փոքր սահմանափակումները, որոնք, ըստ ավանդույթի, վերագրվեցին Օմար I-ին, և որոնք, դատելով աղբյուրներում առկա տեղեկություններից, ի հայտ են եկել 8-րդ դարի վերջերին և ավելի ուշ<sup>299</sup>: Եվրոպացի հետազոտողները գտնում են, որ Օմար II-ը (717-720) առաջին խալիֆան էր, որ ստորագրեցի օրենքներ սահմանեց քրիստոնյա հպատակների համար,

<sup>297</sup> Հմմտ. Договорь Омара с христианами, Медников Н., Православный Палестинский сборник, вып. 2(4), с. 538-611; Tritton A., The Chalifs and their non muslim subjects, London, 1930, p. 5-17; Лbn, երկերի ժողովածու, հատոր 2, էջ 287-288, Крымский А. История арабов, ихъ Халифаты, ихъ дашейшия судьбы, с. 168-169. Տնր-Հովհաննեսյանց Ա., Պատմություն Ա. Երուսաղեմի, հատոր Ա, էջ 109-110:

<sup>298</sup> Հմմտ. Петрушевский Н., Ислам в Иране в VII-XV веках, с. 183:

<sup>299</sup> Տե՛ս նախ տեղը:

որոնք սխալմամբ վերագրվել են նրա վաղ անվանակցին և մոր կողմից իր նախապապ Օմար I-ին<sup>296</sup>: Այսպես կոչված «Օմարի պայմանագիրը» գրի է առնվել մի քանի տարբերակով, հատկապես ավելի ուշ շրջանի աղբյուրներում: Պայմանագրի կետերն ավելի ծավալուն ու մշակված են, քան հնարավոր էր նվաճման ավելի վաղ շրջանում: Առաջին խալիֆան, որ քրիստոնյաներին ու հրեաներին կարգադրեց տարբերիչ հագուստներ հագնել ու վտարեց հասարակական պաշտոններից, Օմար II-ն էր, որի պայմանագիրը սխալմամբ վերագրվել է Օմար I-ին, իսկ Աբրաայան խալիֆա Հարուն ալ-Ռաշիդն առաջինն էր, որ վերահաստատեց այդ սահմանափակումներից մի քանիսը:

«Օմարի պայմանագրի» մասին հիշատակում են ուշ շրջանի մուսուլմանական աղբյուրները՝ ալ-Տուրուշին (12-րդ դար), Իբն ալ-Ասակիրը (12-րդ դար), ալ-Սուլուտին (12-րդ դ.), Իբն ալ-Նակաշը (14-րդ դար), ալ-Նուվեյրին (14-րդ դար), Իբն Խալ-դունը (15-րդ դար): Այս հեղինակների աշխատություններում հիշատակված վերոհիշյալ պայմանագրի տարբերակներն այնքան նման են իրենց բովանդակությամբ, որ դրանք կարելի է դիտարկել որպես միակ և մայր օրինակից ստեղծված տարբերակներ, թեև տարբերակների հեղինակներն ապրել են տարբեր դարաշրջաններում: Ն. Մեդնիկովը, համեմատելով այս պայմանագրի վերոհիշյալ բոլոր տարբերակները, վերականգնել է պայմանագրի իսկական տեքստը<sup>297</sup>: Նշենք, որ որոշ հեղինակներ պայմանագիրն անվանում են որպես «Սիրիայի

<sup>296</sup> Հմմտ. Hitti Ph., *History of the Arabs*, London, Macmillan, 1946, p. 234:

<sup>297</sup> Հմմտ. Договорь Омара с христианами, Медников Н., *Палестина от завоевания ее арабами до крестовых походов, по арабским источникам, Православный Палестинский сборник*, 50-й вып., т. 17, вып. 2(4), с. 554—555:

և եզիպտոսի քրիստոնյաների խնդրագիր»<sup>292</sup>: Իսկ այն հարցի կապակցությամբ, թե ով է կազմել այն, որոշ հեղինակներ (ալ-Տուրտուշի, ալ-Մույտոսի) նշում են, որ այն գրել է Իյադ իբն Ղանաճը կամ նրա ընկերները: Ըստ ալ-Տուրտուշիի՝ պայմանագիրը գրվել է այն ժամանակ, երբ Օմար I-ը խաղաղության դաշինք կնքեց Սիրիայի քրիստոնյաների հետ: Սակայն պարզ էր, որ Օմարի՝ Սիրիա ժամանելու պահին Սիրիայի բնակչության մեծ մասն արդեն խաղաղության պայմանագրեր էր կնքել մուսուլմանների հետ: Այս պայմանագրում առկա են քրիստոնյաների իրավունքները սահմանափակող այնպիսի դրույթներ, ինչպիսիք են չկառուցել եկեղեցիներ, ճգնավորների կացարաններ, չվերանորոգել դրանք, չխոչընդոտել մուսուլմանին՝ կանգ առնելու քրիստոնյաների եկեղեցում գիշեր թե ցերեկ, պահել քրիստոնյաների դռները րաց անցորդների և ճանապարհորդների համար, երեք գիշեր հյուրընկալել մուսուլմանին, կերակրել նրան, լրտեսներին կացարան չտրամադրել, մուսուլմանին չխաբել, երեխաներին Ղուրան չսովորեցնել, հրապարակավ չցուցադրել քրիստոնեական խաչեր, չքարոզել քրիստոնեական կրոնը, չխոչընդոտել քրիստոնյային իսլամ ընդունել, հարգել մուսուլմանին, զիջել տնդը, եթե նրանք ցանկանան նստել, չկրել նրանց հագուստի նման զգեստ, կոշիկ, մազերի հերաքաժանը մուսուլմանների նման չանել, չխոսել նրանց լեզվով, չկրել նրանց հատուկ անունները, մականունները, ձիերի թամբերին չնստել, կապել լայն գոտիներ և այլն<sup>293</sup>: Այս պայմաններից մի քանիսն առկա են նաև ալ-Մավարդիի

<sup>292</sup> Ан-Нувейрий - Медников Н., Палестина от завоевания ее арабами до крестовых походов, по арабским источникам, Православный Палестинский сборник, 50-й вып., т. 17, 86п. 2(4), с. 134.

<sup>293</sup> *Հմնմ.* Гиргас В., Права христиан на Востоке по мусульманским законам, с. 67-68:

գործում, որը դրանք մտցրել է զինմիի համար վեց անհրաժեշտ և վեց ցանկալի պարտականությունների մեջ:

Ն. Մեդիկովը տալիս է նաև վերոհիշյալ պայմանների բացատրությունն ու մեկնաբանությունը: Պարզ է դառնում, որ դրանցից շատերը կազմվել են արարական նվաճումներից ավելի ուշ: Ընդ որում, նշենք, որ «Օմարի պայմանագրի» պարտավորությունների մեծ մասը առկա չէ մեր քննարկած և Օմարի օրոք քրիստոնյա բնակչությանը տված պայմանագրերում: Այսպես, այս պայմանագրում կան կետեր, որոնք հակադրվում են վաղ իսլամի դարաշրջանում կնքված պայմանագրերի պարտավորություններին. օրինակ՝ մուսուլմաններին զիջելու ու ցնրելու եկեղեցի թողնելու պայմանը կազմվել է ուշ շրջանում ստիպելու քրիստոնյաներին միշտ բաց թողնել եկեղեցիների դռները: Ըստ իսալիդի և Օմարի պայմանագրերի՝ մուսուլմանները պարտավորվում էին եկեղեցիները որպես կացարաններ չօգտագործել: Իսկ «չթաքցնել լրտեսներին և նյութվող դավադրությունները» պայմանը վերաբերում է բյուզանդացիների դեմ պատերազմի շրջանին: Այս կետը այդ պայմանագրում չի հիշատակվում, չեն հիշատակվում նաև նվաճումների հետ կապված այլ պայմաններ, օրինակ՝ ճանապարհ ցույց տալ մուսուլման ճամփորդին, վերանորոգել ճանապարհները, ուղեցույց լինել մուսուլմանին: Այս պայմաններն առկա են մեր քննարկած գրեթե բոլոր պայմանագրերում: Պայմանը, որն արգելում էր քրիստոնյաների նրեխաներին Ղուրան սովորեցնել, Օմար I-ի ժամանակաշրջանին չէր կարող վերաբերել. այդ ժամանակ արաբները պատերազմներ էին վարում իսլամը տարածելու համար, և առաջին հերթին նվաճված բնակչությանն առաջարկվում էր իսլամ ընդունել, հետևաբար նրանք չէին կարող արգելել քրիստոնյա բնակիչներին Ղուրան կարդալ: Ավելին, պատմությանը հայտնի է այն փաստը, որ Բու-

խարայի նվաճումից հետո՝ ուրբաթ օրը՝ խուտրայի ժամին, ժողովրդին ստիպում էին Ղուրանն արտասանել արաբերեն՝ կրկնելով արաբ մուլլայի խոսքերը: Իսկ արզելը՝ չստիպել մուսուլմանին քրիստոնեություն ընդունել, գիտակցվում էր ինքնին: Երբ քրիստոնյա երկրներն անցան արաբների տիրապետության տակ, հազիվ թե նման պահանջ դրվեր պայմանագրում: Միայն հետագայում, երբ քրիստոնյաներն սկսեցին բնակվել մուսուլմանների հետ՝ խոսելով նրանց հետ նույն լեզվով, հաճախակի դարձավ իսլամի ընդունումը: Հասկանալի է՝ շահադիտական նպատակներ ևս կային: Տեղից վեր կենալու և տեղը մուսուլմանին զիջելու պայմանը, ըստ Մեդնիկովի, վերաբերում է այն շրջանին, երբ քրիստոնյա բազմաթիվ գրագիրներ, բժիշկներ, կառավարիչներ այսքան էին մեծամտացել, որ բացահայտ անհարգալից վերաբերմունք էին ցուցաբերում ոչ միայն հասարակ, այլ նաև ազդեցիկ պաշտոններ զբաղեցնող մուսուլմաններին<sup>294</sup>: Պայմանների վերաբերյալ Ն. Մեդնիկովի մեկնաբանությունները մեզ համոզում են, որ այս պայմանագիրը թվագրվում է բավական ուշ շրջանով և ստեղծվել է, մեր կարծիքով, մուսուլմանական միջավայրում: Ն. Մեդնիկովի կարծիքով՝ քրիստոնյաների իրավունքները սահմանափակող այս օրենքներն ստեղծվել են աստիճանաբար: Որոշ սահմանափակումներ, որոնք ստեղծվել են Օմար I-ի օրոք, հետագայում բազմացվել են: Գիտնականը ենթադրում է, որ այս սահմանափակումների մասին վարկածն ի հայտ է եկել առաջին հերթին որոշ մուսուլմանների միջավայրում՝ տարբեր պատճառներով, հետագայում դրանից օգտվել են մուսուլման օրենսգետները (ֆակիհ), հուշել կառավարիչներին ու խալի-

<sup>294</sup> См. вл. Договорь Омара с христианами, Медников Н., Палестина от завоевания ее арабами до крестовых походов, по арабским источникам, Православный Палестинский сборник, 50-й выт., т. 17, выт. 2(4), с. 600:



ֆաներին, ամրապնդել են վկայակոչումներով դեպի իսլամի վաղ շրջանը և կիրառել պրակտիկայում՝ վարչական հրամանների, հրահանգների տեսքով տարբեր ժամանակահատվածներում<sup>295</sup>:

Շարավոր է, որ հարստություն, իշխանություն և հարգանք ունեցող քրիստոնյաները գրգռում էին մուսուլմանների նախանձը, ինչն էլ դառնում էր անհանդուրժողականության պատճառ: Այսպիսով, ենթադրում ենք, որ այս սահմանափակումները ձևակերպվեցին հիջրայի 5-րդ դարում (II-րդ դար) և իրենց գրավոր արտահայտությունն ստացան պայմանագրի տեսքով՝ վերագրված Օմար իբն ալ-Խատտաբ խալիֆային: Այդ պայմանագրի իսկության ենթադրությունն իր հերթին ծնում է մի շարք հարցեր: Օրինակ՝ այն, որ այդ փաստաթղթի պայմանները բազմիցս խախտվել են, որ պայմանագրի ցուցակներն իսլամի առաջին դարերում կորել են և գտնվել են միայն հիջրայի 5-րդ դարում և այլն:

Երուսաղեմի պատմության գիտակ Ա. Տեր-Հովհաննեսյանցը, անդրադառնալով արաբական նվաճումներին և Խալիդի, Աբու Ուբայդայի՝ Դամասկոսի յոթանասուներորդա պաշարմանը, նշում է, որ քաղաքի քրիստոնյա բնակիչները, նեղված այս վիճակից, նամակ են գրում («գիր պայմանի») Օմար խալիֆային, որի տեքստը հիմնականում համընկնում է Մեդնիկովի հիշատակած տարբերակի հետ:

Եվրոպական արևելագիտությունը նույնպես անդրադարձել է այս պայմանագրին: Հիմնականում նշվում է, որ այն Միրիայի բնակչության անունից Օմարին է ուղարկել Աբու Ուբայդալ: Այդ պայմանագրի տեքստը որոշ տարբերություններով համընկնում է Մեդնիկովի բերած տարբերակի հետ<sup>296</sup>:

<sup>295</sup> Տես նույն տեղը:

<sup>296</sup> Հմմտ. Tritton A., *The Chalips and their non muslim subjects*, p. 67:

Եվրոպացի հետազոտողը նշում է նաև Օմարի պայմանագրի պայման-սահմանափակումներն արտահայտող ևս մի փաստաթուղթ՝ Դամասկոսի քնակչությանը խալիդի տված պայմանագիրը, որտեղ նշվում են մի շարք կետեր՝ հյուրընկալել մուսուլման ճամփորդին երեք օրով, չցուցադրել խաչը մուսուլմանների հավաքույթի ժամանակ, նոր եկեղեցի չկառուցել և այլն: Այս պայմանագիրը լիովին տարրերվում է արաբական նվաճումների ժամանակ Դամասկոսի քնակչությանը տրված պայմանագրից, որի մասին հիշատակում են վաղ միջնադարի մուսուլման պատմագիրները:

Ինչևէ, հետագայում հովանավորյալ (զիմմի) քնակչության մշտական ու համառ դիմադրությունը, Օմարի պայմանագրի հրահանգների դեմ հիջրայի 5-րդ դարում, ցույց է տալիս, որ նրանք պայմանագիրը իսկական, օրինական չեն ճանաչել: Քրիստոնյաները նրա մեջ տեսնում էին մուսուլման տարրեր կառավարիչների կամայականությունները, քայց ոչ հիմնական օրենքը, և խախտում էին այն առաջին իսկ հնարավորության դեպքում:

Քրիստոնյաների նկատմամբ առաջին հալածանքների պատճառը չէր կարող լինել միայն մուսուլմանների անհանդուրժողականությունը:

Քրիստոնյաների բարգավաճումը, նրանց տաճարների, վանքերի ու եկեղեցիների հարստությունը, վանականների ու եկեղեցականների քանակը, պետական կառավարմանը քրիստոնյաների մասնակցությունը, որոնք մուսուլմանների համար «անհավատներ» էին, սկիզբ դրեցին քրիստոնյաների իրավունքները սահմանափակող մի նոր քաղաքականության. հարկեր պետք է վճարեր այն խավը, որը ոչինչ չէր մուծում պետական գանձարան:

Ակնհայտ է, որ քրիստոնյաների նկատմամբ առաջին հալածանքները սկսվել են Օմար II-ի օրոք (717–720), որը հրամայել է նրանց տարրերվել հանդերձանքով, եկեղեցիներում ջարդել խաչերը, ավերել նոր կառուցված եկեղեցիները:

Մյուս Աբրահայան խալիֆա ալ-Հադիի օրոք (785–786) եգիպտոսի կառավարիչ նշանակվեց Ալի իբն Մուլեյմանը, որն այստեղ քանդեց մի քանի եկեղեցի: Հարուն ալ-Ռաշիդի (786–809) օրոք քրիստոնյաները հալածանքների չնթարկվեցին. նրանք ունեին բավականաչափ ազատություն, հագնվում էին, ինչպես բոլորը, պահպանում էին իրենց եկեղեցիները, կառուցում նրանք:

Մուսուլմանական ժամանակագրություններում հաղորդվում է նաև, որ լինելով Ռակկայում խալիֆան հրամայում է քանդել Բյուզանդիայի հետ սահմանամերձ շրջանների եկեղեցիները և հրաման արձակում, որ քրիստոնյաները չհագնվեն մուսուլմանների պես:

Ըստ Իբն Նակաշի՝ խալիֆան ազատեց քրիստոնյաներին իրենց պաշտոններից, քանդեց նրանց եկեղեցիները<sup>297</sup>:

Մամունի օրոք (813–833) եգիպտոսում բռնկվեց մեծ ապստամբություն, որին մասնակցեցին ղապտիները: Այն ճակատագրական եղավ վերջիններիս համար, քանի որ ապստամբությունը ճշկելուց հետո շատ ղապտիներ քանտ նետվեցին, գլխատվեցին, նրանց կանայք ու երեխաները գերեվարվեցին, եկեղեցիները սզկիթ դարձան: Սակայն այն վայրերում, որտեղ քրիստոնյաները գենք չէին բարձրացրել, շարունակեցին ախակինի պես ապրել, եկեղեցիներ կառուցել<sup>298</sup>:

<sup>297</sup> Հմմտ. Договорь Омара с христианами, Медняков Н., Палестина от завоевания ее арабами до крестовых походов, по арабским источникам, Православный Палестинский сборник, 50-й вып., т. 17, вып. 2(4), с. 759:

<sup>298</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 769:

Ավելի ուշ շրջանի մասին Հ. Տեր-Հովհաննյանն իր պատմության մեջ գրում է, որ 1694թ. պարսից շահ սուլթան Հուսեյնի օրոք սկսվեց Պարսկաստանում բնակվող հայերի բռնի իսլամացումը, և նրանց վիճակը կտրուկ վատացավ: Շահը հրովարտակ արձակեց, որ իր երկրում բնակվող հայերը կտավից հին կտոր գցեն իրենց հազուստի վրա, գյուխներին պատառուոված գլխարկ դնեն, որպեսզի դրանով տարբերվեն պարսիկներից, անձրևոտ օրերին շուկա չմտնեն, որ իրենց թաց հազուստով չկպչեն նրանց, և այլն<sup>296</sup>:

Միշտ էլ մուսուլմանները փորձել են զրկել քրիստոնյաներին բարձր վարչական պաշտոններից, զբաղեցնել նրանց տեղերը, սակայն այս ջանքերը միշտ չէ, որ իրականանում էին, քանի որ հպատակ քրիստոնյա բնակիչները դեռևս նվաճումների առաջին տարիներից բավական ամուր էին արմատավորվել վարչական պաշտոններում, և մուսուլմանական կառավարության համար շահեկան էր իրերի այսպիսի դատավորվածությունը:

Քրիստոնյաների նկատմամբ հալածանքներն ու նրանց իրավունքների սահմանափակումները շարունակվեցին հետագայում, երբ քրիստոնյա բնակչությունը հայտնվեց Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Օսմանյան կառավարությունն իր կրոնահալած քաղաքականությամբ, էթնիկ խտրականությամբ անտանելի էր դարձնում հայատակների կյանքը՝ անշուշտ արդարացնելով իր նման գործելաոճը վերոհիշյալ պայման-սահմանափակումներով: Այդ ժամանակ հպատակ քրիստոնյաները մեջտեղ էին բերում Մոհամմադ մարգարեի անունով պահպանված «Ալի մանշուրները»՝ ի

<sup>296</sup> Հմմտ. Տեր-Հովհաննյանց Հ., Պատմություն Նոր Ջուղայի, որ Սպահան, հատոր Ա, էջ 207-208:

հակակշիռ սահմանափակումների և հոգուտ սեփական իրավունքների պաշտպանության:

Ակնհայտ է, որ Օսմանյան կայսրությունում միշտ էլ անտեսվել են քրիստոնյա հպատակների իրավունքները, և ինչպես իրավացիորեն գրում է պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը, «մուսուլման թուրքերը խախտեցին և ռոտահարեցին... իսլամի մի այնպիսի հիմնարար սկզբունք, ինչպես զինմի հիմնադրույթը»<sup>xxx</sup>։ Այդ երևույթը շարունակվում է նաև մերօրյա Թուրքիայում: Հետազոտողը այնուհետև շարունակում է, որ արաբական պատմագիտության մեջ այն տեսակետն է հաստատվել, որ արաբական իսլամը տարբերվում է թուրքական իսլամից: Արաբական իսլամը հավատարիմ է իսլամի առանցքային հիմնադրություններին, հանդուրժողական է այլ կրոն դավանողների նկատմամբ, պաշտպանում է զինմիների իրավունքները, մինչդեռ «թուրքական իսլամին» քնորոշ է անհանդուրժողականությունը և բռնությունը:

<sup>xxx</sup> Հովհաննիսյան Ն., Մերձավոր Արևելքի և Սիրիայի հայ համայնքները և նրանց հեռանկարները, էջ 17:



## Եզրակացություններ

1. Արաբ նվաճողների փոխհարաբերությունները նվաճված երկրների քրիստոնյա և այլակրոն ժողովուրդների հետ կարգավորվում էին պայմանագիր-դաշնագրերի միջոցով, որոնք դառնում էին քաղաքական, տնտեսական, կրոնական, մշակութային, բարոյաժողովրդական հարաբերություններն ուղղորդող եղանակ՝ ինչպես նաև դիվանագիտական գործառույթ:
2. Մուհամմադյան դաշնագրերի հիմքում դրված է 632թ. Եմենի Նաջրան քաղաքի բնակչությանը Մուհամմադի տված պայմանագիրը և նրա «քրիստոնեական» տարբերակը: Այն իր հերթին նմուշ-հիմք է դարձել հետագայում քրիստոնյաների շահերի պաշտպանության նպատակով Մարգարեի անունով շրջանառվող բազմաթիվ դաշնագրերի տեղեման համար:
3. Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում Երուսաղեմի հայոց համայնքին Մուհամմադ մարգարեի, Ալի իբն Աբու Տալիբ, Օմար իբն ալ-Ֆատտար խալիֆաների շնորհած պայմանագրերը: Արաբական նվաճումների ընթացքում հայերին տրված բոլոր դաշնագրերը Երուսաղեմի հայոց համայնքին տրված պայմանագրի վերահաստատումներն են:
4. Սկսած 12-րդ դարից՝ հայկական միջնադարյան մատենագրության մեջ բազմիցս հիշատակվում են «Մեծ» և «Փոքր» մանշուրները (հրովարտակ), որոնք մեծապես արտացոլում են միջնադարյան պատմական իրողությունները: «Մեծ Մանշուրը» ուղղակիորեն վերագրվել է Մուհամմադ մարգարեին,

մինչդեռ այն 7-րդ դարի վերջին, 8-րդ դարի սկզբին հայերին տվել է Օմայան գորավար Մուհամմադ իբն Մրվանը: «Փոքր Մանշուրը» նույնպես տվել է Մուհամմադ իբն Մրվանը: «Մեծ Մանշուրի» կետերը հաստատում են Արարական խալիֆայության՝ Հայաստանի վերջնական նվաճման փաստը և նրան հարկատու լինելու իրողությունը:

5. Արարական խալիֆայության տիրապետության օրոք Հայաստանի այսրկովկասյան մյուս պետություններից էթնիկական, մշակութային, տնտեսական գերակայությամբ առանձնանալու փաստը չանտեսեցին արաբները, և նրանք 701-ին կազմավորեցին նոր վարչաքաղաքական միավոր՝ Արմինիա անվամբ: Վերջինս յուրահատուկ առանձնաշնորհ էր հայերին, որը նախադրյալներ ստեղծեց հետագայում Հայոց անկախ պետության՝ Բագրատունյաց Հայաստանի ստեղծման համար:

6. ա) Մատենադարանի արարատառ ձեռագիր ֆոնդում պահվող Մուհամմադ մարգարեի և Ալլի անուններով արաբերեն և պարսկերեն (272, 357, 358 և այլն) դաշնագրերի քննարկնակի որոնումները հանգեցրին հետևյալին. Բոլոր նշված ձեռագրերի համար սկզբնադրյուրը եղել է Նաջրանի պայմանագրի «քրիստոնեական» տարբերակը:

բ) Մուսուլման պատմաբանների ուսումնասիրած՝ քրիստոնյա այլ համայնքներին տրված մուհամմադյան պայմանագրերի հիմքում նույնպես վերոհիշյալ տարբերակն է:

7. Ժամանակի ընթացքում մուհամմադյան դաշնագրերը դարձան հեղինակավոր ու անկասելի չտխմանիչ հայերի նկատմամբ մուսուլման իշխողների կայուն դիրքորոշման: Իսկ հայերի համար դարձան հովանավորության ու ապահով գոյության գրավական մուսուլմանական աշխարհում:

8. Դաշնագրերի ի հայտ գալը և ժամանակի ընթացքում բազմացումը մենք դիտում ենք որպես հակակշիռ ու հակազ-

ղեցություն՝ մոսուլմանական իշխանությունների կամայականությունների և ուսնձգությունների: Ամենավաղ օրինակներից մեկը մոսուլմանական պատմագրության մեջ Օմար խալիֆայի անունով պահպանված պայմանագիրն է, որը մեծապես սահմանափակում էր Սիրիայի քրիստոնյաների իրավունքները և հող նախապատրաստում մուսուլմանական դաշնագրերի համար:

9. Դաշնագրի երևույթը, ինչպես ցույց են տալիս աղբյուրները, արարների քաղաքականության՝ նվաճված ժողովուրդների հետ հարաբերվելու կարևոր ձևերից է եղել, և այն ոչ միայն աղբյուր է հայ ժողովրդի պատմական անցյալի ուսումնասիրության համար, այլև արարական խալիֆայության և նվաճված բազմաթիվ ժողովուրդների հետ հարաբերությունների մանրամասների աղբյուր՝ հենց արարների պատմության համար:



ГРАМОТЫ-ДОГОВОРЫ КАК ИСТОЧНИКИ ПО  
АРМЯНО-АРАБСКИМ ОТНОШЕНИЯМ  
(VII – XII вв.)

РЕЗЮМЕ

Монография посвящена изучению грамот-договоров, выданных Арабским халифатом населению завоеванных им стран. Данные договоры призваны были урегулировать отношения мусульман-завоевателей с иноверцами.

Автором работы особое внимание уделено тем грамотам-договорам, которые, согласно средневековым армянским источникам, были даны армянским и иным христианским общинам основоположником ислама Мухаммедом и его последователями. Эти договоры, известные в армянской историографии как «Али Маншур» (грамота, указ), были направлены на сохранение и утверждение этнических и религиозных прав представителей христианских общин.

В монографии в последовательной форме рассматриваются следующие вопросы: отношение пророка Мухаммеда к христианам, договоры, проливающие свет на армяно-арабские отношения, и договоры, которые были выданы населению завоеванных стран в период правления первых четырех праведных халифов, являвшихся поборниками справедливости и правосудия.

Данное исследование было осуществлено на основе хранящихся в Ереванском Институте древних рукописей им. Месропа Маштоца (Матенадаран) арабских, персидских рукописей и их армянских переводов. Работа может сыграть существенную роль в освещении того или иного периода армяно-арабских от-

ношений. Хронологические рамки излагаемого материала охватывают период со второй половины VII в. по XII в. включительно. В ходе исследования мы обращались и к последующим векам (вплоть до XIX в.), когда армянский народ, находясь под властью тех или иных мусульманских завоевателей, всячески пытался улучшить свое положение и получить привилегии от мусульманских правителей.

Нами особо выделены грамоты-договоры, выданные Мухаммедом христианскому населению Арабского полуострова и Йеменского города Наджран и многократно упоминаемые мусульманскими историками.

Дошедший до нас исторический материал явствует о том, что мусульманскими историками эти договоры были представлены в сжатой форме (как в плане объема, так и затронутых в них проблем), между тем христианские историографы рассматривали их в полном объеме и прохристиански. К примеру, упоминаемый мусульманскими историками «Наджранский договор» касался христианского населения города, однако согласно утверждению анонимного христианского автора «Истории несторианцев», он был составлен для всех христианских общин. Из этого следует, что существовало два варианта «Наджранского договора» – «мусульманский» и «христианский», причем христианский вариант был более толерантным.

Мы полагаем, что целью «христианского» варианта договора было закрепление прав подвластных мусульманам христианских подданных.

В ряду «Договоров Мухаммада» особое место занимает грамота-договор, выданный иерусалимской христианской общине, в частности, армянской. Этот исторический документ сперва был утвержден Али ибн Абу Талибом, затем – халифом

Омаром ибн аль-Хаттабом (634-644), а в дальнейшем – основоположником Аюбской династии Салах ад-Диниом (1171-1193).

В источниках по истории Иерусалима указывается, что в VII в. армянский патриарх Авраам, «увидев, каких успехов добилась мусульманская религия при Мухаммеде», вместе с делегацией, состоявшей из христиан, отправился в Медину к Мухаммеду с просьбой о предоставлении им документа, обеспечивающего безопасность армянской общины. В силу сказанного договор, заключенный в 652г. между армянским князем Теодоросом Рштуни и ассирийским наместником Муавией, равно как и все грамоты-договоры, выданные армянам арабским военным командованием в период арабских завоеваний, следует рассматривать как утверждение направленного во благо армян договора, данного Мухаммедом в VII в. иерусалимской армянской общине.

Грамоты, выданные Мухаммадом армянской общине, в нашей историографии известны как «Большой Маншур» и «Малый Маншур». «Большой Маншур» впервые был упомянут армянским историографом XII в. Самуелом Анеци в его «Истории». Самуел Анеци подтверждает тот факт, что этим договором основоположник ислама Мухаммад дал армянам право свободно исповедовать свою религию.

Первое письменное упоминание «Большого Маншура» под названием «Али Маншур» встречается в «Книге вопрошений» армянского историографа XIV-XV вв. Григора Татеваци, где уже указываются конкретные даты: при католикосе Езр (630-641) пророк Мухаммад, «распространивший свою власть над большей частью вселенной», заключил с армянами договор, освобождавший армянское духовенство и княжеское сословие от налогов, а остальная часть населения должна была платить

налоги. Однако поскольку Мухаммад умер в 632г., он не мог заключить договор с армянами. По всей вероятности, произошла путаница: Самуел Анеци вместо имени наместника – Омейядского Мухаммада ибн Мрвана указал в этом документе имя основоположника ислама – пророка Мухаммада, и в дальнейшем этот ошибочный факт закрепился в армянской историографии, поэтому именно пророку Мухаммаду приписывалось заключение договора с армянами.

«Малый Маншур» впервые был упомянут историографом VIII в. Гевондом. Этот договор был дан армянам наместником Мухаммадом ибн Мрваном на основе письма-прошения армянского католикоса VIII в. Саака Дзорапореци (677-703). Образцы и документы «Договоров Мухаммада» хранятся в Матенадаране им. Месропа Маштоца в фонде арабоязычных рукописей, в патриаршем корпусе. Эти рукописи были систематизированы известным историком Акопом Анасяном. Содержание выше-названных договоров из рукописей 2622, 2826, 6984 в основном совпадает. В них указано, что грамоты-договоры выдавались христианам и всем тем, кто жил «на востоке... в Аравии и на западе... в дальних и ближних странах». Согласно этим договорам, под покровительство Магомета переходят христианские церкви, молельни, а христиане должны выплачивать подушный налог в размере 4 динаров и т.д.

Из арабоязычных рукописей Матенадарана нами особо выделены еще две – с именем пророка Мухаммада. Рукопись 358 двуязычная: она написана на арабском, со сносками на персидском языке. По всей вероятности, рукопись была скопирована в XVII в. Другая рукопись - 272 – написана на персидском, в ней повторяются положения уже известных нам рукописей. Нами была также изучена персидская рукопись (357), которая поме-

чена именем халифа Али ибн Абу Талиба и, возможно, была скопирована в 1694г. Рукопись написана мелкими буквами и местами неразборчиво. При переводе этой рукописи мы пользовались персидским вариантом другого договора с именем Али, поскольку оба эти договора идентичны по содержанию. В отличие от рукописи 358, здесь указаны имена представителей армянского духовенства.

Таким образом, очевидно, что в основе всех изученных нами договоров лежит «христианский» вариант договора, данного Мухаммадом населению Наджрана.

